digitised by A.R.A.R.@

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ . . . . . Նամակ՝ Երեւանի պետական թատրոնի ռեժիսոր Վարդան Աճեմեանին

» » . . . . . Հոգու զաւակ

Ց. ՊԷՐՊԷՐԵԱՆ . . . . . Խամաճիկը անծրեւի տակ

» » . . . . . Ծիածանի տուն կերը

Շ. ՓԵԿԻ . . . . . Գիշերը

Ր. ՔԵՊԱՊՃԵԱՆ . . . . . Ցոլացումներ

Ա. ՃԻԻՂԵԱՆ . . . . . Լոյս-ձայն-ձեւ-գոյն

Ժ. Խ. ԺՊՐԱՆ . . . . . Մարգարէն

Ա. ՏԷՐ՝ ՄԻՆԱՍԵԱՆ . . . . . Հայ յեղափոխական շարժումը (1890–1903)

Ն. ԴԻՄԱՔՍԵԱՆ . . . . . Աշխատանք եւ հանոյք

Ն. ՁԱՐԻՒԻՖԵԱՆ . . . . . Արդի գրականութեան տագնապը եւ դիմագիծը

Մ. Ս. ՀԵՐԿԵԼԵԱՆ . . . . . Գեղանկարիչ «Մարգարէն»

* * * . . . . . Նշմարներ

* * * . . . . . Մշակութային լուրեր

digitised by A.R.A.R.@

Բազմա

ԱՂՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Ի. ՏԱՐԻ, ԹԻՎ 5 ՄԱՅԻՍ 1981 ԳԻՇԵՐԱՅԻՆ

«ՀՈԳՈՒ ՁԱՒԱԿ»Ը



Յաջորդ գիշերուն կը սկսինք հրատարակել մեր Մարսի թիւով խոստացուած Լեռ կամարի գէշգոյն զաւակ թատերգութիւնը, ընթերցողին ուշադրութեան յանձնելով մխիթարական անոր բեմադրութիւնը մերժած Վուդվիլեանց թատրոնի տնօրէն Վարդան Անմահի–ուզղեալ նամակը։

Ինչպէս կը պարզուի, գէշգոյն զաւակը գրուած ու բեմադրուած է Ղանի մէջ, իսկ Հայաստանի խորհրդայնացումէն առաջ, գրեթէ ամբողջ քառասնամեայ մը ապրած է անորոշ բախտ մը։ Լեռ կամարը երկրորդ անգամ մեռած է գէշգոյն զաւակը սիբիրեան ամայի անապատներէն իր վերադարձէն առաջ, յիսունական թուականներու կէսերուն։ Մեր հերկայացումը վերջին վերամշակումն է, որուն տակ իբրեւ թուական դրուած է 1960։

Աւելորդ դրած մը՝ գէշգոյն զաւակը, ու վիպերգութիւն մը՝ նամակը, ի մասին այն սահմանափակումներուն, որոնց ենթակայ են պետականացած կամ գուսակցականացած գաղութներու տակ ապրող բոլոր մտաւորականները։

digitised by ARA.R.@

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՌԻԺԻՍՈՐ ՎԱՐԴԱՆ ԱՃԵՄԵԱՆԻՆ

Սիրելի՛ Վարդան, իմ հայրենակից, որը սովորաբար քաղցր է լինում:

Ես ուղարկեցի իմ «*Հոգու զաւակ*» դրամաս, որպէսզի յայտնես քո կարծիքը նրա բեմականութեան մասին:

Գտար, որ դա բեմին յարմար չէ:

Բայց ինձ համար պարզ չեղաւ. դրամաս ընդհանրապէ՞ս բեմին յարմար չէ, թէ՞ սովետական բեմին յարմար չէ:

Եթէ իմանամ, որ միայն սովետական բեմին յարմար չէ՝ համեմատաբար քիչ դժբախտ կը զգամ ինքզինքս: Որովհետեւ սովետական դեկավարները արուեստը յայտարարել են պարտիական, իսկ ես չլինելով պարտիական, կարող եմ ինձ իրաւունք վերապահել միշտ էլ գրել սովետական բեմին անյարմար պիեսներ:

Իմ դժբախտութիւնը պակասում է նաեւ նրանով, որ այդ պիեսս փորձուած է նախասովետական բեմում եւ բարձր գնահատանքի է արժանացել թատերասէր հասարակութեան եւ մասնաւորապէս ներկայացնող Զարիֆեանի կողմից:

Ներկայացման ժամանակ հանդիսատեսը քարացաւ իր տեղում եւ վերջանալուց յետոյ էլ չէր մտածում շարժուել իր տեղից: Իսկ երբ իմացաւ, որ հեղինակը ներկայ է դահլիճում, մեծ ոգեւորով բեմ կանչեց եւ չլսուած օվացիա սարքեց:

Իսկ ներկայացումից յետոյ էլ դերասան Զարիֆեանը ասաց ինձ.

— Դու ունես հանդիսատեսին հաւասարապէս խնդացնելու եւ լացացնելու կարողութիւն: Եւ դա զարմանալի չէ, որովհետեւ լացն ու ծիծաղը միեւնոյն ակունքից են բխում, — զգացմունքից: Այն հեղինակ, որ տիրապետում է այդպիսի կարողութեան, իր ձեռքում ունի մի բանալի, որն աջ պտտցնելով կարող է ուրախացնել հասարակութեան, ձախ պտտցնելով՝ լացացնել:

Իսկ դու, սիրելի Վարդան, երգիծանքին դուռնանալ ես ձգտում այն հանգամանքի, որ ես, լինելով երգիծաբան, փորձում եմ նաեւ դրամաներ գրել:

Այս ասելուց յետոյ, ես կանգնում եմ մի հետաքրքիր առեղծուածի առջեւ.—

Ինչպէ՞ս է պատահում, որ նախասովետական դերասանը այսքան մեծ պատուի է արժանացնում իմ պիեսը, ռեցենզենտը բարձր գնահատական է տալիս, եւ սակայն նոյն այդ պիեսը անարժան է ընկալուում սովետական բեմը բարձրանալու:

Հակառակի պէս պիեսը ո՛չ միայն հակասովետական չէ, այլ նաեւ շատ սովետական է, որովհետեւ ծխտում է ծառանգականութեան օրէնքը...

Ցետոյ, սիրելի Վարդան, նկատի ունեցիր եւ այս.—

Հնում գոյութիւն չունէր պետական թատրոն եւ դերասանը

digitised by A.R.A.R.@

ռոճիկով ապահովուած չէր: Գոյութիւն ունէին միայն «մենատրն-տես» դերասաններ, որոնց եկամուտը որոշւում էր պիեսի ընտրութեան յաջողութիւնից:

Ու այս պայմաններում իսկ, դերասան Զարիփեանը բեմ հանեց իմ պիեսը:

Ինչո՞ւմն է բանը: Ինչո՞ւ միեւնոյն պիեսը հնում գնահատուի, իսկ ներկայումս խոտանուի:

Պէ՞տք է այն վերագրել երկու հասարակութիւնների գեղարուեստի մասին ունեցած տարբեր հասկացողութիւններին:

Մի՞թէ գեղարուեստական հասկացողութիւնը ընդամէն 45 տարի է ապրում, եւ նրանից յետոյ մեռնում:

Հնում ներկայացնում էին Շեքսպիր, Շիլլեր, Իբսէն, Մոլիէր, իսկ ներկայումս՝ «*Կարմիր մանեակ*», «*Օղակում*», «*Միեւնոյն յաբկի տակ*», «*Կամուրջի վրայ*», «*Կամուրջի տակ*»:

Սրանք ներկայացնում էք դուք ձեր թատրոնում, յետոյ էլ «*Գարնան անձրեւը*» կապում վրան, որ զայ սրբի տանի...

Դուք ներկայացրիք Զարեանի «*Փորձադաշտը*»: Ճիշդ է, վերջում վար առիք այն բեմից, բայց դրանից յետոյ բեմը մնաց փորձադաշտ:

Անվերջ ներկայացնել նման չփորձուած պիեսներ եւ միեւնոյն ժամանակ թատրոնը կոչել «ակադեմիական»՝ չի կարելի: Նրան պիտի անուանել «ծխական թատրոն»:

Նայելով ներկայացուող պիեսաներին, դժբախտաբար չեմ էլ կարող մխիթարել մեր թատրոնին ասելով՝ «*Վհատելու չէ, վերջ կ'ունենան, կու գան ու կ'երթան*»:

Ամբողջ ցաւն այն է, որ այո՛, «կու գան» բայց չեն «երթար»...

Անմխիթար վիճակ է ապրում ո՛չ միայն սովետական թատրոնը, այլեւ՝ ողջ գրականութիւնը:

Տարբերութիւնն այն է, որ՝ հազարաւոր անուն գրքեր պահեստներից հաւաքւում այրւում են, իսկ թատրոնի ռեպերտուարը յաւերժորէն կրկնւում է:

Լեզու կծած խրուշչովը իր ճառերից մէկում ասաց.

— Մեր գլուխներ յաճախ այնպիսի երկեր են գրում, որոնք կարդալիս ընթերցողի քունը տանում է եւ արթուն մնալու համար պիտի ասեղով ծակի իր մարմինը:

Ի՞նչն է գրականութեան այս անմխիթար վիճակի պատճառը:

Ասեմ:

Ա՛յն, որ մեր ղեկավարները արուեստն ուզում են ի սպաս դրնել միայն մի գաղափարի, հաշուի չառնելով, որ աշխարհում գոյութիւն ունեն նաեւ այլ գաղափարներ:

Իր ժամանակին այդպէս վարուեց քրիստոնէութիւնը: Ողջ գրականութիւնը վերածուեց քրիստոնէութեան քարոզի եւ սակայն ոչ մէկը այդ քարոզների շնորհիւ քրիստոնեայ չդարձաւ, որովհետեւ աշխարհում գոյութիւն չունի այնպիսի մարդ, որի մի երեսն ապտակելիս՝ միւսը դարձնի, որ երկու շապիկ ուզենալիս՝ մէկը չուզեցողին տայ:

digitised by A.R.A.R.@

Արուեստը գոյութիւն ունեցող բոլոր գաղափարների սինթեզն է: Ինչպէս կոմպոզիտորը չի կարող դաշնամուրի միայն մի կլաւիշին հարուածելով սիմֆոնիա ստեղծել, այնպէս էլ գրողը չի կարող միայն մի գաղափարի երկրպագելով արուեստին ծառայել:

Ինչքան էլ այդ գաղափար լինի վեհ եւ ազնիւ: Բայց, սիրելի Վարդան, թողնենք այս բոլորը եւ վերադառնանք իմ պիեսայի մասին որ յայտնած կարծիքին: —

Գաղտնիք չէ, որ մեզանում մարդիկ պտտւում են երկու տարբեր երեսներով: Մէկ երեսը համայնական բնոյթ ունի, միւսը՝ անհատական:

Առաջին երեսով նա վաստակում է իր հանապազօրեայ հացը, երկրորդ երեսը ծառայեցնում է իր անհատական համոզումներին:

Եւ ոչ միայն երկու երես: Ունի նաեւ երկու աչք, որոնցից մէկով մեր կենցաղի վերելքն է տեսնում, միւսով՝ վայրէջքը: Ունի երկու ականջ՝ լաւ եւ վատ լսելու համար: Ու եթէ Աստծուն յայտնի լինէր ներկայ պահանջները, նա մարդու բերանում երկու լեզու կը դնէր. մէկը գովաբանելու, միւսը պարսաւելու համար:

Հիմա ես ուզում եմ իմանալ. դու իմ պիեսը որ ո՞ր աչքովն ես կարդացել, պետակա՞ն, թէ՞ մասնաւոր:

Եթէ մասնաւոր աչքով ես կարդացել՝ վա՜յ ինձ, ինձ փրկութիւն չկայ: Իսկ եթէ պետական՝ այդ ոչինչ: Պետութեան ամէն ինչ փոփոխական է, սկսած դեկավարներից մինչեւ կոլխոզային սիստեմը, որը հիմա սկսել է սովխոզի վերածուել:

Այսքանը երկար:

Հիմա՝ խօսքի կարգը: —

Դու իմ պիեսան չես հասանել, այնպէս չէ՞:

Եթէ «Սնդուկեանի թատրոնին» կից գոյութիւն ունենար նաեւ մի «Պնդուկեան թատրոն» եւ ինքս այնտեղ ներկայացնէի իմ պիեսան, դու պիտի տեսնէիր, թէ ինչպէս «Սնդուկեանի» հանդիսատեսները ջրվէժի նման «Պնդուկեան» կը լեցուէին՝ տեսնելու ներկայացումս:

Մա՛նաւանդ գիտես, որ ես Վանում յայտնի դերասան էի: Իմ առաջին ներկայացումը շշմեցրեց Վանի հասարակութեանը, ա՛յն աստիճան, որ այն ժամանակուայ երկու հակառակ կուսակցութիւնների թերթերը, որոնք իրենց կեանքում ոչ մի բանի շուրջ համաձայնութեան չէին գալիս, իմ դերասանական յաջողութիւնը ստիպեց նրանց վերջապէս, մի անգամ միատեսակ կարծիք յայտնել: —

Դաշնակների «*Աշխատանք*»ը ինձ «իսկական գեղարուեստ» համարեց, իսկ ռամկավար «*Վան-տոպ*»ը՝ «անմման կոմիկ»:

Այո՛, եթէ գոյութիւն ունենար «Պնդուկեան թատրոն» ես «Սնդուկեան»ի մինչեւ թը չէի քաշի:

Թեմ կը հանէի պիեսս, այն թողնելով հասարակութեան դատաստանին:

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ

1965 թ.

digitised by A.R.A.R.@

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ

ՀՈԳՈՒ ՋԱՒԱԿ

(ԴՐԱՄԱ ՉՈՐՍ ԱՐԱՐՈՎ)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ՅԱԿՈԲ	— 60 տարեկան
ՄԱՆԱՆ	— Նրա կինը
ԱՆԴՐԷԱՍ	— Նրանց ճկարթչ որդին 30 տարեկան
ՌՈԶԱ	— Անդրէասի կինը 25 տարեկան
ԿԱՏԱՐԻՆԷ	— Սպասուհի
ԳԱՍՊԱՐ	— Մեր բժիշկ (պանսիոներ Յրանց տանը)
ՊԵՏՐԻՆԱ	— Յակոբի ամուսնացած դուստրը
ՄԱՐԱՆ	
ՅՈՎՍԷՓ	— Դրացիներ
ՎԱՐՊԵՏ ԵՂԻԱԶԱՐ	
ՅՈՎԱԿԻՄ	
ԼԵՒԻԿ	— Պետրինայի որդին 3 տարեկան
ԵՐԿՍԵՌ ՀԻՒՐԵՐ	

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ

Սենեակ Յակոբի տանը: Մանանը կարգի է բերում շտապ:

ՏԵՍԻԼ Ա.

ՅԱԿՈԲ (Ներս մտնելով ապշած իր շուրջն է նայում) — *Ի՞նչ խաբար, այ կնիկ:*

ՄԱՆԱՆ — *Որ ասես՝ կը գտնես:*

ՅԱԿՈԲ — *Ասա, ինձ պինդ կը պահեմ:*

ՄԱՆԱՆ — *Այս բոպէիս Մասկուայից ժամանում է Անդրէէս նշանածը, դէ պինդ պահիր քեզ:*

ՅԱԿՈԲ — *Ի՞նչ նշանած...*

ՄԱՆԱՆ — *Իմ Անդրէէս նշանածը՝ անունն էլ Ռոզա:*

digitised by A.R.A.R.@

ՑԱԿՈԲ.— Մինչեւ անգամ անունն էլ Ռոզա։ Ուրեմն ճիշդ է։ Դէ ինձ բլոնեցէք, ես խելապաբուում եմ։

ՄԱՆԱՆ.— Մի կողմ կանգնիր ու ինձ մի խանդաբիր։

ՑԱԿՈԲ.— Գատմիր բոլորը, ի՞նչ ես վազվզում։

ՄԱՆԱՆ.— Մոսկուայում, ամէն ինչ եղել է Մոսկուայում։

ՑԱԿՈԲ.— Այսպէս յանկա՞րծ։

ՄԱՆԱՆ.— Տարիների ընթացքում։ Սիրել են իրար, ապրել են իրարով ու վերջ։

ՑԱԿՈԲ.— Եւ մենք, նրա ծնողները, այդ մասին ոչինչ չենք իմացել։

ՄԱՆԱՆ.— Ի՞նչ վնաս։ Մարդիկ յանկարծամահ են լինում, մենք էլ այդ օրինակով յանկարծակեանք ենք լինում, յանկարծ կեանք ենք ստանում, յանկարծ երջանկանում, յանկարծ մեր տարիների իզմը կտաբուում է։ Վա՞տ է։

ՑԱԿՈԲ.— Վատ չէ, Մանան, բայց հաչիւ կայ։ Երեւակայիր, ինչ կը լինէր մեր դրութիւնը, եթէ մայրս յանկարծ ծնուէր, յանկարծ ապրէր ու յանկարծ մեռնէր։ Այդ կը նշանակէր ճեպընթաց տրանզիտով գալ, աշխարհից անց կենալ, առանց բերանը ճպճպացնելու եւ կեանքի համն առնելու։ (խօսում է կնոջ հոսքից վազվզելով)։ Մինչդեռ շատ անհրաժեշտ է, որ ծնողը ինն ամիս ինն օր առաջ տեղեկանայ իր որդու աշխարհ գալու մասին, որ ժամանակ ունենայ իր երեխային երբեմն աղջիկ, երբեմն տղայ երեւակայելու, աղջկայ անունը Լուսիկ դնելու, տղայինը՝ Բաղրիկ, տղային դերասանական դպրոց ուղարկի, աղջկան՝ երաժշտական։ Մանան, այս լուրը թող ինձ յայտնէիր դէթ երեկ երեկոյեան, որ ես պատկէի ու իմ հարսին պատկերացնէի աշխարհում իմ տեսած բոլոր դեղեցկուհիների պատկերով, նրա հոգին զարդարէի մարդկային ամենաքնքուշ զգացումներով։ Չէ՞ որ Անդրէասին ամուսնացնելը մեր տարիների երազն է եղել։

ՄԱՆԱՆ.— Մուրազիդ հասաբ։

ՑԱԿՈԲ.— Հասնելը հասայ, բայց չէի ուզում այսպէս յանկարծ լինէր։ Գիտես, Մանան, երբ մարդ պատրաստւում է հեռու ճանապարհի, ու յանկարծ ասեն հասաբ, մի տեսակ հուշա է լինում։

ՄԱՆԱՆ.— Քա մարդ, Աստծու սիրուն, վերջ տուր քո անտեղի երեւակայութիւններին։ Այս տեսակ բոպէներին ինչպէ՞ս կարող ես դատել։ Ես լսելիս ճչացի ու որդուս փաթաթուեցի։ Իսկ դու այնպէս երկար ու բարակ դատում ես, կարծես Անդրէասը չի պակւում, այլ մի ուրիշը։

ՑԱԿՈԲ.— Անդրէասը պակւո՞ւմ, չեմ հաւատում ականջիս։ (Նստելով)։ Իրաւունք ունես, Մանան ջան, իրաւունք ունես։ Ի՞նչ ընտանիքի զաւակ է մեր հարսը։

ՄԱՆԱՆ.— Հայրը երկրորդ Համաշխարհային պատերազմին սպանուած է, մայրը ապրում է Ռոստովում։

ՑԱԿՈԲ.— Ըբը... Ինչ պիտի ասէի... Աչքերը կապո՞յտ են, թէ սեւ, ասա։

ՄԱՆԱՆ.— Այդ ես չգիտեմ։ Գիտեմ միայն, որ այնպիսի աչքեր են, որոնց սիրել է Անդրէասը։

ՑԱԿՈԲ.— Այդ ճիշդ ասացիր, Մանան։ Ուրեմն այսպէս ձեւակերպենք. եթէ կապոյտ են հարսիս աչքերը՝ նրա կապոյտ աչքերին մատաղ, թէ սեւ են՝ նրա սեւ աչքերին մատաղ։ Ես հօ չե՞մ կամենում իմ ճաշակը թելադրել որդուս. ես ուզում եմ նախնապէս իմանալ, որ սազ նրա սազի վրայ լաբեմ։ Ներդաշնակութեան համար։

digitised by A.R.A.R.@

ՄԱՆԱՆ (Կատարինէին).— *Կատրի, դու էլ վազիր բաղնիքը վառիր, հիմա կը դայ կեղտոտ, փոչոտ։* (Կատարինէն գնում է)։

ՑԱԿՈԲ.— *Իսկ ո՞ր համբով պիտի դայ։ Զղնա՞մ դիմաւորելու։*

ՄԱՆԱՆ.— *Այդ մասին Անդրէասն էլ չդիտէր։ Նա երկաթուղու կայարան չտապեց, բայց Թոդան կարող է ուստրուսով դալ։*

ՑԱԿՈԲ (ինքն իրեն մտմտում է՝ ապա կնոջը).— *Մանան, այստեղ մի փոքր վիրաւորական բան կայ։ Նա մեզ բանի տեղ չի դրել։ Բայց այդ յետոյ, շատ յետոյ ես ու դու կը վիրաւորուենք արդէս ծնողք։ Համաձա՞յն ես։*

ՄԱՆԱՆ.— *Երբ Անդրէասն է ամուսնանում, ես ընդհանուր ներումն եմ շնորհում ուշխարհի բոլոր յանցաւորներին՝ իրենց հասցրած վիրաւորանքների համար։ Այսօր դարձեալ է, իմ ծննդեանը առաջին օրը։*

ՑԱԿՈԲ.— *Եթէ անմիջապէս ես էլ չհեռուեմ քեզ՝ 60 տարով քեզանից մեծ ամուսինդ պիտի լինեմ։*

Դրսից ոտնաձայն։ Մանանը ձեռքի ծաղկամանը գցելով գրկատց դէպի դուռն է վազում։ Ներս է մտնում Կատարինէն։

ՄԱՆԱՆ.— *Ես կարծեցի... Ա՜հ, սիրտս ո՞նց խփեց...*

ՑԱԿՈԲ.— *Ուրեմն, որ ներս մտաւ այդպէս պիտի գրկէ՞ս։*

ՄԱՆԱՆ.— *Զգրկե՞մ հարխս։*

ՑԱԿՈԲ.— *Այո, բայց դրան ձեւ կայ, ժամանակ կայ։ Նախ ես կը հարցուփորձեմ ու բանը կը հասցնեմ այնտեղ, որ ինքն իր բերանով կը յայտնի իր դալստեան նպատակը։ Յայտնեց՝ դու կը յարձակուես ու կը սկսես համբուրել։ Թէ քեզանից մի բան աւելացաւ՝ այն էլ ես կը համբուրեմ։*

ՄԱՆԱՆ.— *Լաւ, բայց շատ հեռուից չսկսես, ինձ պահել չեմ կարողանայ։ Մանօթ եմ քո սովորութեանը։*

ՑԱԿՈԲ.— *Ոչ, Մանան, շատ կարճ ու կտրուկ։* (Ինքն իրեն)։ *Բարեւ ձեզ, օրիորդ։* — *Բարեւ ձեզ։* — *Նստեցէք։ Ո՞ւմ հետ պատիւ ունեմ ծանօթանալու՝ Անդրէասի ընկերուհո՞ւ։* — *Գուցէ մի բան աւելի՞, քան ընկերուհու։* — *Գուցէ։* — *Իսկ չի՞ կարող պատահել, որ ուղղակի նրա կինը լինէք, այսինքն՝ իմ հարսը։ Նա լռում է։* — *Լռութիւնը համաձայնութեան նշան համարե՞մ։* — *Ինչպէս կ'ուզէք։* — *Ո՛չ, ես չեմ ուզի, դուք ուզէք։* — *Թող այդպէս լինի։* — *Լինի՞, դէ պատրաստուէք յարձակման։* (Կնոջը)։ *Այն ժամանակ, Մանան, ես ալից կը յարձակուեմ վրան, դու՝ ձախից՝ մեր հարսը կը գրաւենք...*

ՄԱՆԱՆ.— *Այդ՝ եթէ աւտրուսով դալու լինի։ Իսկ գնացքով դալու դէպքում Անդրէասը թեւանցուկ ներս կը բերի ու առանց «ներեցէք», օրիորդների ու «խնդրեմ, նստեցէք»ների ներս կը հրի ու կ'ասի.* — *Ահա իմ կեանքի ընկերը... Օ, Աստուա՞ծ իմ, սիրտս պայթում է երջանկութիւնից։*

ՑԱԿՈԲ.— *Եւ այդ բոլորը ինչպէս անդթաբար մինչեւ օրս ծածկել էր մեզանից մեր հարազատ որդին։*

ՄԱՆԱՆ.— *Ասում է ի նկատ առի ձեր անհամբեր բնաւորութիւնը։ Զպիտի թողնէիք խեղճ աղջիկը համալսարանն աւարտի։ Իսկ հիմա, երբ աւարտեց, իմացէք։* (Ականջ դնելով)։ *Աւտո՞ կանգնեց մեր դրանը։*

digitised by A.R.A.R.@

ՏԵՍԻԼ Բ.

Նայնք, Ռոզա, յեսոյ Կատարինէ։

ՌՈԶԱ (Ներս է մտնում փոքրիկ ճամպրուկը ձեռքին)։— *Բարեւ ձեզ ասացի՞։*

ՑԱԿՈԲ։— *Ոչ, օրիորդ, նոր պիտի ասէք։*

ՌՈԶԱ։— *Ներեցէք, ես ճամբից գալիս եմ՝ փոչոտ ու կեղտոտ։*

ՑԱԿՈԲ։— *Կարեւորն այն է, որ դուք գալիս էք, իսկ թէ ինչպէ՞ս էք գալիս՝ դա լրացուցիչ պարագայ է։ Դուք կարող էք գալ նաեւ յոգնած, քաղցած ու ծարաւ։ արանք բոլորը բայի պարագաներ են, օրիորդ, որոնք մենք հիմա կը վերլուծենք կամաց-կամաց։* (Մանանն ուզում է յարձակուել, ցակոբը նշանացի սաստում է)։ *Սիրտդ պինդ ուսհիր։* (Կինը վերցնում է Ռոզայի ճամպրուկն ու ծածուկ համբուրում։ Ցակոբը՝ Ռոզային)։ *Օրիորդ, կինս ձեր ճամպրուկը համբուրում է, եթէ մէջը վատգաւոր բան կայ՝ խնդրեմ հանեցէք։*

ՌՈԶԱ։— *Ճամպրուկում Անդրէասի նկարած վերջին էտիւդներն են։ Հիանալի բաներ են, արժէ համբուրել։*

ՑԱԿՈԲ։— *Դուք հաւանո՞ւմ էք, օրիորդ։*

ՌՈԶԱ։— *Սասարիկ։*

ՑԱԿՈԲ։— *Այդ լաւ է։ Հիմա՝ մի ուրիշ բան, օրիորդ։ ձեր լսածով Անդրէասը Մոսկուայում սիրահարուել է մի աղջկայ վրայ։ Գուցէ մեզ կ'ասէք, թէ ինչպիսի՞ն է այդ։ կրթուա՞ծ է, խելացի՞, գեղեցի՞կ։*

ՌՈԶԱ (Կարմրելով)։— *Այդպիսի մէկը չեմ ճանաչում...*

ՑԱԿՈԲ։— *Նրա լուսանկարը տեսնէք՝ գուցէ ճանաչէք։*

ՌՈԶԱ։— *Չգիտեմ։*

ՑԱԿՈԲ (Վերցնելով սեղանի հայելին՝ բռնում է դիմացը)։— *Այս աղջկան ճանաչո՞ւմ էք։*

ՌՈԶԱ։— *Ա՜հ...*

ՑԱԿՈԲ։— *Կնիկ, յարձակուիր, բռնել եմ մեր աղայի սիրտը յափշտակող աւազակին։* (Գրկում են Ռոզային ու խեղդում համբոյրներով, ապա երեքն էլ միասին արտասուում են։ Վերջը ցակոբը սրբելով աչքերը)։ *Կնիկ, այս օրիորդը, որ իր կեղտոտ, յոգնած, սոված վիճակով մեզ այսպէս բախտաւորեցրեց, եթէ տանես բաղնիք լողացնես, քերենք այստեղ նախաճաշ տանք, յետոյ տանենք ննջարանը մի փոքր հանգիստանայ՝ ինչպիսի՞ բախտի պիտի արժանացնի։* (Ներս է գալիս Կատարինէն)։ *Կատիկ, մոռացանք քեզ էլ մաս հանել մեր բախտաւորութիւնից։ Հապա, համբուրիր քո նոր տիրուհուն։*

ԿԱՏԱՐԻՆԷ (Հարցական Մանանին)։— *Ուրեմն...*

ՄԱՆԱՆ։— *Այո՛, այո՛, սա մեր հարսն է, քո տիրուհին։*

ԿԱՏԱՐԻՆԷ (Համբուրում է)։— *Բարի գալուստ, տիրուհի, աշխարհի ողջ բարիքը ձեր գլխին լինի։ Մլէք ու ծաղկէք։ Մեր չորացած տունն այսօր լցեց երջանկութեան յորդ արցունքներով։* (Պատուհանից նայելով)։ *Անդրէասը գալիս է վազելով։*

ՑԱԿՈԲ։— *Իսկապէ՞ս, կա՛ց, ես իմ վրէժը լուծեմ նրանից։* (Ռոզային քաշում է շիրմայի խոռոչ)։ *Ռոզա ջան, թաքնուիր այստեղ առանց ծլպտունի, ես մի թեթեւ խաղ պիտի խաղամ իմ որդու գլխին։*

digitised by A.R.A.R.@

ՏԵՍԻԼ Գ.

Նոյնք եւ Անդրէաս

ԱՆԴՐԷԱՍ (Ներս է գալիս հեւալով)։— Զկայ, մամա ջան, չկայ։ Հօ աւետարանով չի՞ եկել։

ՑԱԿՈԲ (Անտարբեր)։— Ո՞ւմ մասին է խօսքը։

ՄԱՆԱՆ։— Անդրէասի նշանածը պիտի գար այսօր Մոսկուայից։

ՑԱԿՈԲ։— Դա ի՞նչ նշանած է, որի մասին նոր հիմա ենք իմանում։

ԱՆԴՐԷԱՍ։— Այդ նշանածը, հայրիկ ջան, որ այսօր չեկաւ եւ հաւանաբար վաղն այստեղ կը լինի՝ աշխարհի ամենաչքնաղ էակն է։

ՑԱԿՈԲ։— Դէմ չեմ, բայց մեզանից ծածուկ չքնաղութիւն չեմ ընդունում։

ԱՆԴՐԷԱՍ։— Սիրելի հայր, ծածուկ՝ որովհետեւ եթէ առաջուց իմանայիք՝ պիտի դժուացնէիք խեղճ աղջկան եւ կուկլայի պէս հետը խաղալով, չպիտի թողնէիք համալսարանն աւարտի։ Դու եւ մաման ժամացոյցի ճօճանակի պէս անվերջ պիտի Մոսկուա գնայիք-գայիք։ Ինչի՞ նման կը լինէր այդ։

ՑԱԿՈԲ։— Անդրէաս, աշխարհի ա՛շ մի պատճառաբանութիւն չի արդարացնի քեզ այն մեղադրանքից, որ այսօր պիտի բարդեմ վրադ։ Լինել այդքան բախտաւոր եւ զրկե՞լ ծնողին դրան մասնակից լինելու։

ԱՆԴՐԷԱՍ։— Հայրիկ, եւ այդ զրկելու համար չեմ արել։ Եթէ վշտացել էք՝ ներողութիւն, քաւեմ մեղքս ինչով կարող եմ։ Միայն ապաշխում եմ, մի թույլ տուր, որ իմ կեանքի ամենաերջանիկ այս պահին եւ խղճի խայթ զգամ մեր հանդէպ, ես շնահեղձ եմ լինում երջանկութիւնից, մարմնիս ներսս է գալիս իմ հոգում առաջ եկած փոթորկից։ Հայրիկ ջան, տես, չոքում եմ քո առջեւ, ներողութիւն խնդրում։ (Ջոնում է)։

ՄԱՆԱՆ։— Ինչ՞է անգութ մարդ է։ Ծօ մա՛րդ Աստծու, հիմա հաշուեյարդի ժամանա՞կ է։

ՑԱԿՈԲ։— Այդ էլ ճիշդ ասացիր, Մանան, կորչի թուաբանութիւնը։ (Համբուրելով որդու ճակատը)։ Վեր կաց, զաւակս, քո բոյին մատաղ։ Դու ամուսնութեամբ բախտաւորուիր՝ թէկուզ մեր ոսկորների վրայ։ Իսկ հիմա, որովհետեւ ուշացել ես, չտաղ պատմիր քո գեղեցկուհու մասին։

ԱՆԴՐԷԱՍ։— Եթէ մի այլ գեղեցիկ լինէր, հայրիկ։ Մի հոգի ունի՝ լաբիւրինթոս։ Մէջն քանդոն այլեւս դրսի աշխարհը կը մոռանայ։ Ինչպէս մոռացայ այդ աղջկանը՝ չիմացայ, ինչպէս ժուլուեցի նրա հետ՝ անկարող եմ պատմել։ Միայն հիմա գիտեմ, որ նրա հետ միաձուլուել եմ իմ հոգու եւ մարմնի իւրաքանչիւր մասնիկով, որ ապրում ու շընչում եմ նրանով միայն, որ ես իմ ողջ նկաբչական հուշակը նրան եմ պարտական։

ՑԱԿՈԲ։— Պատմելիս զգուշացիր չափազանցելուց։ Տիեզերքն անդամ իր սահմաններն ունի։ Զգա։

ԱՆԴՐԷԱՍ։— Ունի, այո, ամէն բան չափ ու սահման ունի, բացի այն սիրուց, որ ես տածում եմ դէպի նա, իմ Ռոզան։

ՑԱԿՈԲ։— Դժբախտաբար, իրենց զգացմունքներն անհունութեան միտքով չափելը բոլոր սիրահարներին է յատուկ։ Ցիշո՞ւմ ես, Մանան, ես էլ մի ժամանակ յաւերժութեամբ ապառնացի քեզ։ Պատմի՞մ Անդրէա-

digitised by A.R.A.R.@

սին, թէ ինչպէս խաբեցիր ինձ ու հետս ամուսնացար։

ՄԱՆԱՆ — Ե՞ս խաբեցի, թէ դու։

ՑԱԿՈԲ — Ասեմ, Անդրէաս։ Մենք միասին ուսանում էինք միեւնոյն դպրոցում։ Սա թուաբանութիւնից բոլորիս էր։ Ամէն օր խնդիրները լուծելիս բերում էր ինձ, թէ՝ սխալ է դուրս գալիս, օգնիր։ Այսպէս մի օր, երկու օր, երեք օր՝ տեսայ էս տնաւորի աղջիկը ոչ մի օր ճիշդ չի լուծում՝ մտածեցի. — Այս աղջիկը երեւի ինքն է սխալ ստեղծուած, առնեմ իրեն ու մէկ անգամից ուղղեմ։ Ամուսնացայ հետը։ Եւ իրօք, ա՛յ տղայ, դրանից յետոյ ոչ մի օր սխալ չէր լուծում... Բայց այս բոլորը մի կողմ։ Անդրէաս, ես քեզ մի ուրիշ կին եմ գտել։

ԱՆԴՐԷԱՍ — Ի՞նձ։

ՑԱԿՈԲ — Այո, քեզ։

ԱՆԴՐԷԱՍ — Ուշացել ես, հայրիկ, շատ ես ուշացել։

ՑԱԿՈԲ — Ինչո՞ւ, հօ Զաքսով չէ՞ք միացել։

ԱՆԴՐԷԱՍ — ԵԹԷ Զաքսով միացած լինէինք՝ հեշտ կը լինէր մեզ բաժանուել, բայց մենք այնպիսի մի բանով ենք միացել, որ սիեղերական ոչ մի ուժ մեզ չի բաժանի։

ՑԱԿՈԲ — Էլի՛ սիեզերք։ Ա՛յ տղայ, դու խուրդա բաների հետ գլուխ չունե՞ս... Որ իմանաս ինչպիսի դեղեցկուհի է իմ գտած հարսնացուն։ Կարծեմ նրա հոգին էլ ինչ-որ լաբիւրինթոս պիտի լինի։

ԱՆԴՐԷԱՍ — Իմ Ռոզայից գեղեցիկը դեռ հողը չի ծնել։

ՑԱԿՈԲ — Մի տես՝ յետոյ խօսիր։

ԱՆԴՐԷԱՍ — Ո՛չ կը տեսնեմ, ո՛չ կը խօսեմ։

ՄԱՆԱՆ — Ցակոբ, շատ ես երկարացնում։

ՑԱԿՈԲ — Զէնդ, ա՛յ կնիկ... Այդ գէպքում ես կը մտնեմ իմ հայրական իրաւունքի մէջ եւ կը հրամայեմ քեզ առնել ո՛չ թէ քո Ռոզային, այլ իմ Ռոզային։

ԱՆԴՐԷԱՍ — Մի աւելորդ հրաման, որն անկատար պիտի մնայ դժբախտաբար։

ՑԱԿՈԲ — Տես, տես, տես, մի սրա՛ն նայեցէք... Անկատար կը թողնի տըզան իր ծնողի հրամանը։

ԱՆԴՐԷԱՍ — Ծնողները միայն կեանք են տալիս, նրանք իրենց տուած կեանքը եւս վերցնելու իրաւունք չունեն։

ՑԱԿՈԲ — Ա՛յ տղայ, արի համաձայնիր։ Քո Ռոզան դեռ վաղն է գալու, իսկ իմ Ռոզան արդէն եկել է։ Նշանդը մի թողնի՝ ճիսիայի եռեւից վազի։

ՄԱՆԱՆ — Քա մարդ, վե՛րջ տուր, կատակն այդքան չեն երկարի։

ՑԱԿՈԲ — Կնի՛կ, մի խանգարիր, ես սրա հոգին հանելու եմ։ Մնողից ծանուկ գործ է բռնում, հա՞։ Անդրէաս, դու իմ Ռոզային պիտի առնես։

ԱՆԴՐԷԱՍ — Ա՛խ, հայրիկ, ի՞նչ ասեմ։ Հիմա Ռոզաս էստեղ պիտի լինէր, որ իմանայիր ինչ աղջիկ էր։ Այնպէս էլ շուկայական ոճով ասում ես պիտի առնեմ, կարծես սեխ ես ծախում։

ՑԱԿՈԲ — Ոճը շուկայական է՝ բանաստեղծականի կը վերածեմ — դու քո հոգին պիտի ձուլես իմ Ռոզայի հոգուն։ Եղա՞։

ԱՆԴՐԷԱՍ — Այսինքն ինձ առաջարկում ես աշխարհի անկարելին։

ՑԱԿՈԲ — Եւ սակայն միաժամանակ աշխարհի ամենակարելին։

ԱՆԴՐԷԱՍ — Հայրիկ ջան, կատակի նիւթը փոխենք, ղերիս վրայ ազդում է։

digitised by A.R.A.R.@

ՑԱԿՈԲ.— Իմ գտած աղջկայ հոգու խորութիւնը թէեւ չեմ չափել, բայց կարծեմ քո Ռոզայի չափը կը լինի: Տեսնեա՛ կը հաւանես:

ԱՆԴՐԷԱՍ.— Այդ կարելի էր միայն այն դէպքում, եթէ Աստուած իմ Ռոզայից երկուսն ստեղծած լինէր:

ՑԱԿՈԲ.— Իսկ եթէ քո Ռոզայի նոստարիուսով հաստատուած պատճէ՞ն ցոյց տամ:

ԱՆԴՐԷԱՍ.— Ոչ մի նոտարիուս նրա պատճէնը չի հանի: Ա՛խ, հայրիկ, եթէ տեսնէի՛ր նրան...

ՄԱՆԱՆ (Որդուն).— Լաւ, Անդրէաս, թող պատճէնը լինի, ասա՝ ցո՛յց տուր:

ԱՆԴՐԷԱՍ.— Գիտեմ, որ կատակում է, մայրիկ:

ՑԱԿՈԲ.— Կատա՞կ, այ հիմա ես ցոյց կը տամ, եւ դու համարձակուիր մերժել ինձ, (Բարձրացնում է շիրման):

ԱՆԴՐԷԱՍ (Նետի պէս ձերս ընկնելով).— Ռոզա, Ռոզա՛ դու եկե՞լ ես արդէն: (Գրկախառնւում են: Ծնողները յուզմունքից լաց են լինում): (Անդրէասն ծնողներին).— Բայց դուք լաց էք լինում:

ՑԱԿՈԲ.— Դու էլ ինձ նման մի երեսուն տարեկան որդի ունենայիր, որն ամուսնութեան քո բոլոր յոյսերը խորտակէր ու յանկարծ մի օր էլ այսպէս անակնկալ իր կնոջը փաթաթուէր՝ դու էլ, զաւակս, դու էլ ինձ նման երջանիկ կ'արտասուէիր: (Կնոջը): Մանան, կարո՞ղ էիր երեւակայել այսպիսի բախտաւորութիւն:

ՄԱՆԱՆ.— Ես այս վաղուց գիտէի: Ես ծածուկ կարդում էի Անդրէասի բոլոր նամակները: Ես ամէն գիշեր լսում էի, թէ նա ինչպէս էր խոսում քնի մէջ իր Ռոզայի հետ:

ՑԱԿՈԲ.— Եւ ինձ ոչինչ չէիր ասում: Ի՞նչ բան է սա, բոլորդ խոսքերդ մէկ առած դաւանանո՞ւմ էք ինձ, ինչ է...

ՄԱՆԱՆ.— Քեզ զգոնութիւն վստահել՝ նշանակում է թերթում յայտարարութիւն տալ: Դու զգոնութիւն պահող մարդ ես: Իսկ ես կատուի նման տապ կացայ, ծպտուն չհանեցի, որտորդի սպասեցի այս օրուան, ոյ հո՛պ, վրայ վազէի ու բռնէի մկանը:

ՑԱԿՈԲ.— Բայց, Մանան, լաւ է, որ մարդիկ Աստծու հետ գրաւոր պայման չեն կապում ու վկաներով չեն հաստատում այն: Ես ասում էի՝ Աստուած, ո՛ր օրը Անդրէասիս ամուսնացնեմ՝ նոյն օրը մեռնեմ: Իսկ հիմա, որ նպատակիս հասել եմ, բոլորովին չեմ կամենում մեռնել:

ԱՆԴՐԷԱՍ.— Մահուան մասին երբեք չպէտք է մտածել, սիրելի հայրիկ, պիտի ապրել յաւիտեան, իսկ մահը համարել միջանկեալ եւ անկարեւոր մի բան: Պէտք է մեռնել փակագծի մէջ:

ՑԱԿՈԲ.— Դժբախտաբար մեր կեանքն այնքան է կարճ ու մեր մահն այնքան երկար, ապրում ենք այնքան քիչ եւ մեռնում ենք այնքան շատ, որ այդ անհնարին է դառնում:

ԱՆԴՐԷԱՍ.— Ես այնքան բուռն եմ ապրում այս բոպէիս, հայրիկ, որ չեմ հասկանում, թէ ինչ բան է մահը: Ռոզա ջան, դու հասկանո՞ւմ ես:

ՌՈԶԱ.— Բոլորովի՛ն: (Սեղմւում է մարդուն):

ՑԱԿՈԲ.— Ես էլ, ես էլ չեմ հասկանում հիմա: Սրանից մէկ ժամ առաջ կքած էի մահուան երկիւղից, ասում էի՝ մենք մարդկութեան ծառի վրայ մի չորցած ոստ մնացինք, որի վրայ ադուաը նստած մեր մահը պիտի կոնչայ. հիմա տեսնում եմ, թէ մեր ծառն ինչպէս բողբոջում է:

digitised by A.R.A.R.@

ԱՆԴՐԷԱՍ.— Դու իրաւունք ունես, հայր։ Մոլորուել, դուրս էի եկել ես կեանքի բնական ճամբից եւ մտածում էի՝ անմահանալ իմ նկարներով. բայց յանկարծ իմ մոլոր գնացքը բախուեց այս աղջկան։ (Ռոզային ցոյց տալով)։ Եւ ես ընկայ բնական ճանապարհի վրայ ու դրնացքս այսուհետեւ պիտի ուրայ դէպի ճշմարիտ յաւերժութիւն։ Թոռներ կը տամ ձեզ...

ՅԱԿՈԲ (Ռոզային).— Ուրեմն, օրիորդ, ես իմ անմահութիւնը քե՞զ եմ պարտական։

ՌՈԶԱ.— Անդրէասը չափազանցնում է։

ՅԱԿՈԲ.— Անդրէասը չի չափազանցնում։ Ասա, օրիորդ, այդ թանկագին նուէրի համար ինչո՞վ կարող եմ վարձահատոյց լինել, երբ ես անպատմելի աղքատ եմ։

ՌՈԶԱ.— Նա, ով Անդրէասի նման որդի ունի, իրաւունք չունի աղքատութեան մասին խօսելու, հայրիկ։

ՅԱԿՈԲ.— Դու արժէքաւորեցիր նրան, Ռոզա։ Քեզանից առաջ նա մի գերեզ էր թուանշանի ձախ կողմում գրուած։ Դու նրան իմաստաւորեցիր քո աջ կողմը անցկացնելով։ (Անդրէասի ձեռքը Ռոզային տալով)։ Քեզ եմ նուիրում իմ որդուն, Ռոզա, ես տալիս եմ իմ այն բոլորը, ինչ ես ունեմ այս աշխարհում։

ՌՈԶԱ.— Իսկ ես վերցնում եմ խորին շնորհակալութեամբ։

ՄԱՆԱՆ.— Փառք չատ, Աստուած, այս օրին էլ արժանացանք։ (Իմիմ Իրեն)։ Ուրեմն, ես հիմա ազատ եմ, հարս ունեմ եւ կարող եմ հրամայել։ (Ռոզային՝ խիստ)։ Ռոզա՛, ի՞նչ պարապ, ձեռքը ձեռքին դրած կանգնել չատախօսութիւն ես անում։ Չգիտե՞ս, որ նախաճաշի ժամն է։ Ես քո կարծած ազատներից չեմ, գիտե՞ս։ Կը քամեմ քեզ։ (Իմիմ Իրեն)։ Չէ, յաջող եմ կատարում իմ գերը։

ՌՈԶԱ.— Մի օր միայն ժամանակ տուր, մամա, տեղերին ծանօթանամ։

ՄԱՆԱՆ.— Ի՞նչ կայ ծանօթանալու. ապատիզէնն այս պահարանումն է, իսկ կոֆեն խոհանոցում եռում։

ԱՆԴՐԷԱՍ.— Այսպէս միանգամի՞ց։ Ի՞նչ անզութն ես, մամա՛։

ՄԱՆԱՆ.— Չէ, քեզ նման կը դնեմ դլխիս մահ կ'ածեմ։

ԱՆԴՐԷԱՍ.— Խստութեանդ մէջ չատ յաջող ես, մամա, հիմա էլ սիրալիրութիւնդ փորձիր։

ՄԱՆԱՆ.— Սիրալիրութի՞ւն։ Այս բոպէիս։ (Գրկում է հարսին)։ Քո կանաչ աբեւին մատաղ. քանի ես ողջ եմ՝ չեմ թողնի ո՛չ մի բանի ձեռք տաս։ Դու մեր տան թագուհին ես՝ մենք քո ծառաները, հրամայի՛ր։ (Ցանկին)։ Ես իմ ազատութիւնը փորձեցի, դու էլ քո ազատությունը փորձիր։

ՅԱԿՈԲ.— Ես փորձելու կարիք չունեմ, որովհետեւ 40 տարուայ ազատայր եմ արդէն։

ՄԱՆԱՆ.— Իսկ ո՞ւր էր հարազ, ա՛յ մարդ։

ՅԱԿՈԲ.— Երեւակայութեանս մէջ, Մանան։

ՄԱՆԱՆ.— Ասա տուն չունեցած՝ դուռ ես պատրաստել։

ՅԱԿՈԲ.— Այո, պատրաստել եմ, ա՛ հիմա, երբ տուն ունեցայ, օգուտ եմ պատրաստի դռնից՝ այն իր տեղը կախելով։

ՄԱՆԱՆ.— Երեւակայութեամբ սիրել կարելի՞ է։ Կարելի՞ է մեռնել հարսին բոյին, առանց հանգստութիւն ունենալու նրա հաստակի երկա-

digitised by A.R.A.R.@

բուքիւնից։ Կամ կարելի՞ է մառաղ լինել հարսի աչքերին՝ սեւ ու կապոյտ չիմացած։

ՅԱԿՈԲ.— Ես անսխալ երեւակայել եմ, միայն չափը փոքր եմ վերցրել, չիմանալով, որ հարսս իրականութեան մէջ այսքան գեղեցիկ կարող է լինել։ Է՛հ, ոչի՛նչ, կը կրկնապատկեմ, կ'եռապատկեմ, կը քառապատկեմ հիմա այդ չափը։

ՌՈԶԱ (Մանանին).— Այնքան վախացրիր ինձ, մամա, որ ստիպուած եմ գործի անցնել։ Ո՞րն է խոհանոցի ճամբան։

ԱՆԴՐԻԱՍ.— Ռոզա, այսօր մենք միասին կը տանք նախաճաշը։

ՄԱՆԱՆ.— Շատ էլ լաւ կ'անէք։ Կեանքումս ես տուային անգամ պիտի հանդգնամ։ Յակոբ, արի կողքս նստիր։ (Անդրիասն ու Ռոզան խոհանոց են գնում։ Մանանն մարդուն)։ Քա մա՛րդ, հաւատեցի՞ր հարսիդ։

ՅԱԿՈԲ.— Անմա՛ն է, Մանան։

ՄԱՆԱՆ.— Ինչ ճկուն իրան...

ՅԱԿՈԲ.— Ինչ խոհուն աչքեր...

ՄԱՆԱՆ.— Մազերն ուսես մեսաքա լինեն։

ՅԱԿՈԲ.— Իսկ վիզը՝ կարապի։

Հարսն ու որդին մտնում են սպասեհրով եւ սարքում սեղանը։

ՄԱՆԱՆ (Յակոբին).— Մարդ, ի՞նչ թուանշան կը դնես հարսիդ։

ՅԱԿՈԲ.— Հինգ ու խաչ։

ՄԱՆԱՆ.— Իսկ ես՝ երկուս։

ՅԱԿՈԲ.— Ինչո՞ւ...

ՄԱՆԱՆ.— Սեղանի վրայ չե՞ս նկատում պակասութիւն։

ՅԱԿՈԲ.— Ո՛չ։

ՄԱՆԱՆ.— Ոչ մի բաժակի կանթ գէպի խմողը չի ուղղուած։

Ընդհանուր ծիծաղ։

ՅԱԿՈԲ.— Ռոզա ջան, որպէսզի յանկարծակի չդաս, այժմուանից ծանօթացնեմ քեզ քո ապերոջ հետ։ — Սատանիկ թծախնդիր։ Եթէ տունը հրդեհուած է, եւ դու դուրս ես վազում առանց մազերդ ոսնորելու՝ քեզ փրկութիւն չկայ. ա՛յնքան կը խօսի, որ կը ցաւես ազատուելուդ համար։

ՄԱՆԱՆ.— Զէ, հապա թողնեմ, որ ճճան մազերով ինքզինքը պատուհանից վայր գցի։

ՅԱԿՈԲ.— Տեսա՞ր։ (Ընդհանուր ծիծաղ)։ Ռոզա, ենթադրենք դու մի շըրջազգեստ ես կարել տուել, հագել եւ ասուն ես եկել։ Ընտանիս։ Նախ՝ պիտի կանչնես քո սկեսուրի առջեւ։ Գեղ այնքան աջ գարձնի, այնքան ձախ գարձնի, ետեւ անել տայ, առջեւ անել տայ, վեր նայես, վար նայես, արեւելք թնքուես, արեւմուտք չուռ գաս, որ չշմեռս ու հագիւ հազ մի աթոռի վրայ գցես քեզ։ Իսկ եթէ չրջազգեստիդ կոճակներից մէկը օդակի դէմ դուրս չեկաւ՝ քանդ պրծած է։ Գեստրը դէպի ետ պիտի հանեն երկրի երեսին, երկրագնդի շարժումը կանգ պիտի առնի, ոչ մի պտոյտ ա՛չ իր առանցքի, ո՛չ արեգակի շուրջը։ Մարդ-

digitised by A.R.A.R.@

բակներն էլ տեղներիցը չպիտի շարժուին, մինչեւ կամակն իր տեղը ընկնի։

ՄԱՆԱՆ.— Լաւ, բուակոն է, հիմա խեղճ աղջիկն էլ պիտի հալած իւղի տեղ ընդունի ասածներդ։

ՑԱԿՈԲ.— Ռոզա ջան, մաքրութիւն ու միայն մաքրութիւն։ Եթէ մաքրելու համար ծխնելոյզը պիտի իջնես՝ վրայիդ չորերը պէտք է լուացուած, արդուկուած լինեն։ Ասում եմ էլի՝. եթէ սա մեռած, դագաղի մէջ պառկած իսկ լինի, եթէ ես տնկուած օձիքով իրեն մօտենամ լալու՝ դլուխը պիտի վեր բարձրացնի ու ինչքան ձայն ունի՝ գոռայ. «օձի՛քդ»։ Ա՛խ, իմ սիրելի Ռոզա, թէ ինչեր եմ քաշել այս պառաւի ձեռքին՝ Աստծուն է միայն յայտնի։

ՄԱՆԱՆ.— Զէ, թոյլ տամ, որ թափթփուածութիւնդ փիլիսոփայութիւն համարես, պարծենաս նրանով։

ՑԱԿՈԲ.— Իրաւունք չե՞ս տայ ինձ պարզ մարդ լինելու։

ՄԱՆԱՆ.— Ո՛չ, պարզութեանն էլ չափ ու սահման կայ։

ՑԱԿՈԲ. (Ռոզային).— Իմ յոյսը մնացել ես դու... Անդրէաս, ես վերջացրի, հիմա էլ դու քո պառաւի մասին պատմիր։

ՏԵՍԻԼ Դ.

Նոյնք եւ Գասպար

ԳԱՍՊԱՐ (Մտնելով).— Ցակոբ, շանմաա խաղո՞ւմ ենք։

ՑԱԿՈԲ.— Խաղում ենք։ Դեռ մի նեղութիւն քաշիր նստիր։

ԳԱՍՊԱՐ.— Նստեցի։ Նորութիւն եմ տեսնում ձեր տանը։ (Նայելով Ռոզային, յետոյ Ցակոբին)։ Ո՞ւմ հետ պատիւ ունեմ ծանօթանալու։

ՑԱԿՈԲ (Կանգնելով).— Սա... Սա... Սա... Գասպար, լեղուս չի բռնում ասեմ։ Սա...

ՄԱՆԱՆ.— Սա մեր հարսն է։

ՑԱԿՈԲ.— Ո՛չ, ատրոյ տուր բժիշկ, ես պիտի ծանօթացնեմ։ Սա (ցոյց տալով որդուն) ենթական է, այս՝ (Ռոզային) ստորոգեալ. իսկ մենք, երկու պառաւներս, երկրորդական լրացումներ, որոնց կրճատումով նախադասութիւնն իր իմաստը չի փոխի։ Աւելի՛ն. մենք աւելորդութիւն ենք այլեւս։ Իսկ աւելի պարզ՝ սա իմ Անդրէասի ամուսինն է, բժիշկ, ամուսինը։

ԳԱՍՊԱՐ.— Այդ ե՞րբ ամուսնացան, որ ես կողքի սենեակում չիմացայ։

ՑԱԿՈԲ.— Վաղուց են ամուսնացել. սա կը լինի երկու ժամ։

ԳԱՍՊԱՐ.—Բա ինչպէ՞ս է, որ դեռ չեն բաժանուել։

ՑԱԿՈԲ.— Նրանք յաւերժական սէր են ուխտել։

ԳԱՍՊԱՐ.— Ներկայիս յաւերժութիւնները շատ են կարճ։ Ո՛չ աւելի, քան մէկ ժամ։ Բայց իսկապէս, ես ո՞ւմ հետ գործ ունեմ։

ՑԱԿՈԲ.— Ասում եմ եւ խնդրում եմ հաւատալ։

ԳԱՍՊԱՐ.— Զեմ հաւանում... Ամուսնանալ այսքան յանկարծակո՞ն, այսքան դաւադրակա՞ն, եթէ կարելի է այսպէս ասել։

ԱՆԴՐԷԱՍ.— Իմ ծնողներն այնպիսին չեն, որ իրենց զգացմունքի մէջ չափ ու սահման գնեն։ Այդ պատճառով ներեցէք ինձ իմ փոքրիկ խորհրդանկութեանը։

digitised by A.R.A.R.@

ՅԱԿՈԲ.— Զլսօսենք այդ մասին, բժիշկ։ Իր այս վերաբերմունքով եթէ քեզ մէկին է վիրաւորել, մեզ՝ ասանդմէկ։ Բայց եկէք ներումն չնորհենք յանցաւորներին ու սիրենք։ Ծանօթացէք, խնդրեմ, մեր սիրելի հարսի հետ։ (Բժիշկը սեղմում է Ռոզայի ձեռքը)։ Ռոզա ջան, բժիշկը մեր տան անդամն է, ա՛յն տարբերութեամբ միայն, որ տարբեր ազգանուն է կրում։ Իմ մանկութեան անբաժան ընկերը, մեր տան միակ բարեկամը, քո երկրորդ հայրիկը։

ԳԱՍՊԱՐ (Անվերջ նայելով Անդրէասին ու Ռոզային).— Եթէ ուրախանալու հարցը չլինէր, ես պիտի չարունակէի չհաւատալ աչքերիս։ Բայց ո՞րովհետեւ պիտի հաւատալ, որ կարելի լինի ուրախանալ, ուստի հաւատում եմ եւ համբուրում եմ ձեր երկուսի ճակատները հաւասարապէս։ (Համբուրում է)։

ՅԱԿՈԲ.— Նստիր, բժիշկ։ (Կանեակի բաժակները լցնելով)։ Վերցրէք։ Սա երեսուն տարի թաղային լիազօրը մեր անային գրքոյկն ստուգելիս կարգում էր երեք անուն. երեսուն տարի մենք տեղում մարշ էինք անում։ Այսօրուանից քայլ յառաջ, մարշ. չորս ենք արդէն։ Ինն ամիս ինն օր յետոյ հինգ ենք, բժիշկ։ Յետոյ վեց, ապա եօթը ու այսպէս անվերջ գնում ենք դէպի յաւերժութիւն։ Մենք այլեւս չոր ոստ չենք մարդկութեան ծառի վրայ։ Մենք կանաչեցինք, մենք ապրում ենք։

ԳԱՍՊԱՐ.— Այնպէս յուզուած եմ, Յակոբ, որ ասես այս բանը ինձ պատահած լինէր։ (Համբուրում, ապա դատարկում բաժակները)։

ԱՆԴՐԷԱՍ.— Բժիշկ, յանձին ձեզ, ես մի հայր եւս ունեմ։ Զեր երկուսին այնքան միասին եմ տեսել, որ այլեւս չեմ զանազանում իրարից։

ԳԱՍՊԱՐ.— Զղայուած եմ, Անդրէ ջան... Բայց մենք ի՞նչ արինք. առաջին բաժակը նորապսակների կենացը պարպելու էինք։

ՅԱԿՈԲ.— Մի մտածիր։ Այս չիշը այնքան պարունակութիւն ունի, որով տասը Անդրէաս կը պսակենք։

ԳԱՍՊԱՐ.— Ռոզա ջան։ Ի՞նչ մասնագիտութիւն ունես։

ՌՈԶԱ. (Պատասխանելու փոխարէն Անդրէասի երեսին է նայում)։

ԱՆԴՐԷԱՍ.— Գիտական աշխատող է, բժիշկ, դիսերտացիա է պաշտպանում։

ԳԱՍՊԱՐ.— Իսկ նի՞ւթ։ Մեր գիտնականներն էլ նիւթ թողնե՞լ են աշխարհում, որ Ռոզան գրի։

ԱՆԴՐԷԱՍ.— Դեռ չի գրուած Աստուածաշնչում քանի՞ «ա» է գործածուած, քանի «բ», որքան «գ»։ Այբուբենը միայն 39 գիտնականի կարող է կերակրել։ Ուսումնասիրուա՞ծ է, թէ մէջին եռանդի ճանճը օրական քանի առարկայի վրայ է թառում։ Ո՛չ։ Ահա քեզ դիսերտացիայի նիւթ։ Վերջապէս հիմա ո՞վ է ինքնուրոյն մտածում։ Վերցրու մի լայնարձակ չակերտ, ուրիշի մտքերը մէջը թխիր ու քո անունով հրատարակիր։ (Յակոբին)։ Հայրիկ, յիշո՞ւմ ես, ասում էիր 18 թուականին Հայաստանում նոր չոր չկար, բոլորը ուրիշի հին չորերն էին հագնում։ Երբ մի ժողովուրդ կարող է չակերտում ապրել, միայն ի՞նչ է, որ չապրի։ Ռոզա, եթէ ինքնուրոյն ես ուզում լինել՝ իրրեւ դիսերտացիայի նիւթ վերցրու մօրս կարկատանի բոխչան։ Դասաւորել կարկատանները ըստ գարշելիների, բրդեղէնը զատել բամպակեղէնից, կազմել ցանկը՝ սա գործ է։

ՄԱՆԱՆ.— Դու ծաղրիր իմ կարկատանի բոխչան, բայց մի մոռանայ, որ եթէ այդ բոխչան չլինէր, հիմա քո 2000 ռուբլի արժողութեան կաս-

digitised by A.R.A.R.@

տիւմը դէն պիտի նետէիր՝ ընդամէնը մի փոքրիկ այրուածքի պատճառով։

ՅԱԿՈԲ.— Ձիշդ է ասում, մեր շատ գիտնականների աշխատութիւնները կատարեալ կարկատանի բոլոր են։ Անկապ ու անսիստեմ մոքեր հաւաքած զանազան գրքերից։ (Անդրէասին)։ Մօրդ առաւելութիւնը նրանումն է, որ իր կարկատանի բոլոյով չի ձանձրացնում հասարակութեանը, չի պահանջում դոկտորի կամ պրոֆեսորի կոչում եւ չի խրժռում պետական միջոցները։ Եթէ մեր գիտնականները մօրդ նման օգտակար լինէին մարդկութեանը...

ԳԱՅԳԱՐ.— Բայց Թոզան նկարչի կին գառնալուց յետոյ անելիք չունի։ Նա աջ պիտի նկարուի, ձախ պիտի նկարուի։ Հանդիստ գործ։

ԱՆԴՐԻԱՍ.— Հանդիստ գործ։ Բժիշկ, աշխարհում նկարուելուց աւելի դժուար գործ չկայ։ Վա՛յ, որ տեսնես, թէ կլիէնտներս ինչպէս են նեղւում անշարժ մի տեղում քարացած նստելուց։ Մէջքը չի դիմանում եւ, որ գլխաւորն է, քունն է գալիս, մա՛նաւանդ ամառները։ Բայց Թոզան նստելու կարիք չունի, ես նրան քացակայութեանը աւելի լաւ եմ տեսնում, քան ներկայութեանը։ Երեւակայութեան աչքը խոշորացոյց է։

ԳԱՅԳԱՐ.— Մշտական ընկերդ սար ու ձոր թափառելիս։

ԱՆԴՐԻԱՍ.— Այդ նեղութիւնից էլ կ'ազատեմ նրան։ Հեռաւորութիւնը չի խանգարի, որ ես նրան զգամ, տեսնեմ ու շօշափեմ։

ՅԱԿՈԲ.— Ահա քեզ մի հեռակայ ամուսին։ Ա՛յ տղայ, եթէ առանց նրա ներկայութեան կարող ես ապրել նրանով, էլ ինչո՞ւ առար։

ԱՆԴՐԻԱՍ.— Վախենում եմ քնապիրը գործածելուց, հայրիկ, նրա պատճէնն եմ հետս վերցնում։

ԳԱՅԳԱՐ (Վերցնելով բաժակը).— Սա ո՞ւմ կենացը խմենք։

ՅԱԿՈԲ.— Նման դէպքերում խմւում է քոթուկի, այսինքն՝ ամուսնացողների ծնողների կենացը, բայց ինչպէս գիտես, ես գինու երկաթացրած կեանքին չեմ հաւատում։ Նա, ընդհակառակն, կարճացնում է կեանքը։ Հարբե՞լ ես ուզում, բժիշկ, սիրիր։ Սիրով հարբած մարդը նման է շոգիով աշքացաւոյ սենեակի, որի սիրտը լիքն է մեղայուն եւ երկարատեւ տաքութեամբ։ Ա՛խ սէ՛ր, սէ՛ր, սէ՛ր... (Կանչը)։ Գառա՛ւ, արի քեզ մի համբուրեմ։

ՄԱՆԱՆ.— Ամաչիր, մա՛րդ, այստեղ ջահել աղջիկ կայ նստած։

ՅԱԿՈԲ.— Այո, եւ այդ ջահել աղջիկը միայն կը հասկանայ, թէ ինչ բան է սիրածի համբոյրը։ (Ռոզալինին)։ Ձիշդ չե՞մ ասում։ (Տոնը փոխելով)։ Նու, լաւ, այս մասին յետոյ։ Իսկ հիմա, Անդրէ, տար թագուհուդ իր ապարանքը թող տեսնի։ Գարեգ տար, թող իմ տնկած ծառերի պտուղները փորձի եւ անմիջապէս մի նկարի պրոեկտ յղացիր «Ադամ Նուռն դրախտում» վերտառութեամբ։

ԱՆԴՐԻԱՍ.— Տեսնես նոյն գեղեցի՞կ կին է եղել։

ՅԱԿՈԲ.— Անչո՛ւշտ։ Չէ՞ որ Աստուած միակ նմոյշն էր ստեղծում։ ԻնչուԹի ցուցափեղկում խոտան կը դրուի՞։

ԱՆԴՐԻԱՍ.— Իսկի էլ չէ։ Երբ կինը մէկ է ամբողջ աշխարհում, նա ոչ գեղեցիկ, ոչ տգեղ կարող է լինել։ Կինը գեղեցիկ է լինում իրենից տգեղի հետ համեմատած։

ՌՈԶԱ (Վեր կենալով).— Սեղանը հաւաքել է պէտք։

digitised by A.R.A.R.@

ՄԱՆԱՆ.— Ես կը հաւաքեմ, հոգեա՛կս։ Դուք պարտէզում մեն եկէք մի փոքր։ Յետոյ կը գամ, կը լողանամ, կը պառկիմ։ Հինգ օր ճամբայ եմ եկել։ Բայց սկեսրայրիդ խօսքերին չհաւատաս, հա, ես վատ կին չեմ։

ՑԱԿՈԲ.— Հա, հա, հա, հա. այնքան ժամանակ դրա մասի՞ն էիր մտածում, կնիկ։ Զլինի՞ դու էլ համոզուած ես դրանում։

ԱՆԴՐԷԱՍ (Կնոջը թեւանցուկ).— Գնանք, Ռոզա ջան։ (Գնում են)։

ԳԱՍՊԱՐ (Վեր կենալով, Ցակոբին).— Քեզ կը սպասեմ չախմախ։ (Գնում է)։

Տ Ե Ս Ի Լ Ե.

Ցակոբ, Մանան, յետոյ Պետրինա

ՑԱԿՈԲ (Սեղանի մի ծայրից միւսը վազելով).— Մանան, Մանան, Մանան... Այժմ պէտք է դիրքաւորուել, պէտք է պատրաստուել այս բախտաւորութեանը եւ ընդունել ինչպէս հարկն է։ Սա երջանկութեան կայծակ էր խփեց մեզ, որից պէտք է ուշքի դալ։ Մանան, ի՞նչ ես նստել, չպարե՞նք մի վալս մի՞ասին, թէ՞ վերցնեմ ֆուքակս եւ «Մայիսի ձօնը» նուագեմ։ Ինչ է սպասում մեզ, Մանան։ — Առաջին անգամ մի ճոխ հարսանիք, որից ողջ քաղաքը դղրդայ։ Հարսանիքից յետոյ... Հարսանիքից յետոյ... Աստ՞ծ ինչ կը լինի, Մանան։ Ա՛խ, լեզուս չի դառնում այդ բառն արտասանելու։ Հարսանիքից յետոյ, Մանան, կ'անցնի ինն ամիս, ինն օր, ինն վայրկեան, եւ մենք կ'ունենանք մի Թոռնիկ, Մանան (հանելով ծոցատետրը), որը եթէ մանչ լինի, Արիստոդոմ պիտի կոչուի, եթէ աղջիկ՝ Աստղիկ։ Կամ՝ եթէ մանչ՝ Գօդոս, եթէ աղջիկ՝ Վերգինէ։ Զոյգ ծնելու դէպքում էլ Գօդոս եւ Վերգինէ։

ՄԱՆԱՆ.— Այդ այլանդակ անուններով ես թոռ չունեմ կոչելու։ Գօդոս... Նշանակում է թոռդ կլեկչի՞ պիտի դառնայ։ Քաղաքի բոլոր կլեկչիները Գօդոսներ են։ Ոչ էլ Արիստոդոմ կամ Վերգինէ։

ՑԱԿՈԲ.— Ա՛յ կնիկ, սրանք բոլորը երկար մտածուած անուններ են։ Քանի տարի անքուն գիշերներ եմ լուսացրել այս անունների համար։

ՄԱՆԱՆ.— Ի զո՞ւր, ի զո՞ւր։

ՑԱԿՈԲ.— Սրապիոն լաւ անուն չէ՞։

ՄԱՆԱՆ.— Բոլոր Սրապիոնները փողոցներում մեն են դալիս ու դանակամկրատ են սրում։

ՑԱԿՈԲ (Նայելով ծոցատետրին).— Իսկ Մաղաթե՞լ։

ՄԱՆԱՆ.— Մաղաթելը չէ՞ր, որ օրը ցերեկով իր կինն սպաննեց։

ՑԱԿՈԲ (Նայելով տետրին).— Գրիգոր։

ՄԱՆԱՆ.— Աստուած հեռու տանի, այնքան չատախօսութիւն պիտի անի։ Զե՛մ ուզում։

ՑԱԿՈԲ (Տետրին նայելով).— Թաչատուր։

ՄԱՆԱՆ.— Ողջ կեանքում պիտի սրանից քաւոր լինի, չե՛մ ուզում։

ՑԱԿՈԲ.— Հէյ վա՞խ, Մանա՛ն, որ այդպէս է, մեր թոռն անանուն մնաց. վա՞յ մեզ, որովհետեւ բոլոր անուններով էլ արատաւոր մարդիկ լինում են։

digitised by A.R.A.R.@

ՄԱՆԱՆ (Բաց անելով կամոդը)։— *Դու այնքան գիշերներ ես անցկացրել մի քանի փոռած անուններ ճարելու համար, իսկ ես իմ թոռան համար տես ինչպիսի կտորներ եմ առել հագուստ շինելու։* (Մէկ-մէկ հանելով)։ *Սա զուտ բուրդ է, եթէ ողջայ լինի՝ չալվար, եթէ աղջիկ՝ չըրջազգեստ։ Այս մետաքս կտորը թոռնիկիս ամառնային բլուզի համար՝ եթէ ողջայ լինի, իսկ վերնազգեստ՝ եթէ աղջիկ լինի։* (Համբուրում է կտորները առանձին-առանձին)։ *Ընտիր թել՝ երկուսն էլ ձեռնոց գործելու համար։ Կոճակներ ոսկի եւ արծաթ, խաղալիքներ ամէն մեծութեան...*

ՑԱԿՈԲ։— *Մանան, այսօր եւեթ պարտէզի բոլոր չլորները ալրուխարա կը պատուաստեմ, ճղոմի դեղձերը լոռ կը դարձնեմ, իսկ ծիրանները՝ աղջանարաթ։ Պատրաստուենք, պատրաստուենք, Մանա՛ն, արժանավայել ընդունել մեր ժառանգին, մեր օջախը վառ պահողին, մեզ յաւերժին կապողին։*

ՊԵՏՐԻՆԱ (Ներս է մտնում յուզուած)։— *Մամա, այս ի՞նչ եմ լսում։*

ՄԱՆԱՆ։— *Ճիշդ է, ճիշդ է, Պետրինա։*

ՊԵՏՐԻՆԱ։— *Ուրախութիւնից չոքերս դողում են։* (Համբուրում են)։ *Ինչպէ՞ս պատահեց այդ։*

ՄԱՆԱՆ։— *Այդ պատահել է ցուցահանդէսում։ Տեսնելը-սիրելը մէկ է եղել։*

ՊԵՏՐԻՆԱ։— *Գեղեցի՞կ է։*

ՄԱՆԱՆ։— *Անմա՛ն։*

ՊԵՏՐԻՆԱ։— *Ծնողներ ունի՞։*

ՄԱՆԱՆ։— *Մի մայր միայն։*

ՊԵՏՐԻՆԱ։— *Ո՞ւր են հիմա։*

ՄԱՆԱՆ։— *Պարտէզ գնացին։*

ՊԵՏՐԻՆԱ։— *Գնամ գրկելու մեր հարսին։* (Մայրն ու աղջիկ դուրս են վազում)։

ՑԱԿՈԲ (Կնոջ ետեւից)։— *Մանա՛ն։*

ՄԱՆԱՆ։— *Հը։*

ՑԱԿՈԲ։— *«Մինասը» քեզ դո՞ւր է գալիս։*

ՄԱՆԱՆ։— *Վէ՛րջ տուր յիմարութեանդ, Ասատուծդ սիրես։*

ՑԱԿՈԲ (Մենակ)։— *Գիժ է այս կնիկը... Ուրեմն անուան պատճառով թոռ չպիտի՞ ունենանք։* (Սպառնական)։ *Ես քո հոգին կը հանեմ, Մանան։ Սպասիր։ Մնուելուն պէս անունը Մինաս պիտի դնեմ ու փախչեմ։*

ՎԱՐԱԳՈՑՐ

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ

(Շար. 1)

digitised by A.R.A.R.@

ԽԱՄԱՃԻԿԸ ԱՆՁՐԵՒԻՆ ՏԱԿ

Ձեռքերը բաց հոն կանգնած էր:

Գամուած գլխարկէն
ջուրը կը հոսէր:
Գատտուած
վերարկուին մէջ մոխրագոյն,
հովը կու գար
ուղղութիւնը իր գծելու
եւ կուրծքը իր
կը ներշնչէր,
կ'արտաշնչէր
այդքան իրաւ, զարմանալի:

Դէմքն ու աչքերը ուրուած
իմաստութիւն մը ունէին —
կարծես ամէն ինչ կը տեսնէր,
կարծես ամէն ինչ ան գիտէր:

Իրաւ մարդ մը ըլլար եթէ՝
քայքայուած էր մինչեւ հիմա...
Սակայն այնտեղ
խամաճիկի իր կացութեամբ
գոյութիւնը կը քաշքշէր
եւ կը մնար...

ԾԻԱԾԱՆԻ ՏՈՒՆԿԵՐԸ

Նախ՝ փոշի էր անտանելի.
աւազի ամպը աչքերն կը գոցէր,
ոունգերը եւ շրթունքները:

Զոր արեւ էր,
որ միներուն քրտինքին հետ
անապատի լուռ աւազը կը շաղախէր:
Ե՞րբ փոխուեցաւ,
հազար թեւեր
ե՞րբ ծաղկեցան իր մարմինէն...
Հոս ապրելու օրէնքները
ան կը փորձէր իւրացնել,
բայց ե՞րբ գտաւ ինքզինք այսպէս
քաքթուսի մը ձեւով փշոտ:

Դէմքը՝ շուրջն էր,
իր կերպարով, որ թրը չէր:
Թանձր կեղեւը արտաքին
սպունգային զգայնութեամբ,
որ կը պահէր զինք տեղ մը, ուր
այլ կերպարներ կը մերժուէին:

Անտեսանելի,
խորութեան մը մէջ,
ջուրը կը խաղար —
իր մարմինին մէջ:
Եւ զինք կը պահէր:

Բայց անապատին
մէջ այս տարածուն,
ուր որեւէ այլ կեանք չկար,
կենդանութեան նշանն էր,
քաքթուսներու անտառին մէջ:
Ծիածանի տունկերն էին,
եւ կամ այնպէս կը կոչուէին:
Եւ գիտէին ինչպէս ծաղկիլ —
իրենց այլանդակ մարմինին վրայ,
ջնջուած, ներքին աշխարհը բանալ,
տարաշխարհիկ ծաղիկներ ինչպէս...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ՇԱՌԼ ՓԵԿԻ

20րդ դարու սկզբնական չրջանի Ֆրանսական գրականութեան ամէնէն ցայտուն հեղինակներէն մէկն է Շառլ Փեկի, արձակագիր, մտածող եւ բանաստեղծ նոյն ատեն։ Ան գրած է Գերկոնի իմաստասիրութեան խոր ազդեցութեան ասկ։ Կը պատկանի ժոռէսի, Ռոմէն Ռոլանի, Անթոլ Ֆրանսի, Մեարէի Սիւարէսի խումբին։ Իր մշտանումներով յանախ կը մօտենայ Պառէսին եւ Մորէասին, որոնք պաշտպան հանդիսացան Ֆրանսական աւանդութեանց, ընդդէմ Գերմանիոյ յարձակապաշտ քաղաքականութեան։

Փեկի անմեւորից իր մէջ ամէնէն ծայրայեղ եւ բուռն գաղափարները։

Խանդուսիրով խորհրդապաշտ է՝ սրքան կրօնական, հոյնքան եւ աշխարհիկ իմաստով։ Իր գաղափարները հիմնուած են գլխաւորապէս ազատութեան պաշտամունքին վրայ։ Ինչն է, որ յայտարարած է. «Կարեւորը այն է, որ հոգեկան խարիզապաշտութիւնը կեր չդտանայ քաղաքականութեան, որում ծնունդ տուած է ինքն»։

20րդ դարու սկիզբը ազդող Ֆրանսայի մեծագոյն գրագէտներէն մէկն է ան։ Իր մտածումները կը ծնին բարոյական ներքին զօրաւոր հակազդութենէ մը։ Նոյն ատեն ան մեծ բանաստեղծ է, լեզուի ճոխութեամբ եւ զգացումներու խորութեամբ։ Իր քերթուածներուն հիմնական նիւթը կը կազմէ անցաւորին եւ յաւիտենականին ապրումը։

Փեկի գրած է ընդարձակ պոեմներ։ Ինչպէս «Ծաղ տ'Արքի խորհուրդը», «Երկրորդ առաքինութեան խորհուրդը», «Սուրբերու անմեղութեան խորհուրդը», «Մեռան», «Ներքի Տաճ» եւ կեղեցին, եւայլն (1910էն 1913)։

Փեկի քնքուշ եւ կիսաձայն երգերը չարագրող ապաստաց մը չէ, այլ՝ մեծաշունչ եւ յորդահոս լեփոբահար մը։ Կարելի չէ խուլ մնալ անոր երգերուն հանդէպ, որոնք կը հնչեն մայր տաճարներու զանգերուն պէս։ Ան կը բազմապատիկ իր պատկերները եւ կը տարածէ լայն պատատէ վրայ։ Մարգարէաշունչ իր խօսքերով ընթերցողը կ'ուանէ ու կը տանի հեզնի մը պէս։ Եւ խոսպէս պատկերաւոր քառերու եւ հեռահար ուղի զօրացող նախադասութիւններու հեղեղ մըն է ասոր բանաստեղծութիւնը։ Ան մեզ կը պահէ իր հեւասպառ եւ անդադրում գնացքին մէջ։ Փեկիի արտայայտած զգացումները, գունագեղ եւ մեծավայելուչ պատկերներու լարքի մը ընդմէջէն, կը վերածուին չգեղ թափորի։

Թ. Ի.

ՕՐՀՆԵՐԳ ԳԻՇԵՐՈՒԱՆ

Ո՞վ իմ աստղազարդ Գիշերս, ինչ առաջինը ստեղծեցի։
Դուն՝ որ կը ինացնես, դուն՝ որ յաւիտենական
ստուերի մէջ կը սնոդես
բոլոր արարածներս,
Ամէնէն մտահոգները — նեռյգն ամեհի, մրջիւնը ժրաջան
եւ մարդը, մտահոգութեան այդ հրէշը։
Ո՞վ գիշեր, որ կը յաջողիս ինացնել մարդը,
Մտահոգութեան այդ ջիհորը,
Ինքը առանձին ուելի մտահոգ՝ քան արարչագործութիւնը
բովանդակ։
Մարդը, հոգերու այդ ջրհորը։

digitised by A.R.A.R.@

Ինչպէս որ կը բնացնես հորին ջուրը:
Ո՜վ իմ մեծահանդերձ գիշերս,
Որ կ'առնես մանուկներն ու մանուկ Յոյսը
Քու պարեգօտիդ ծալքին մէջ.
Ո՜վ իմ զեղեցիկ գիշերս, քեզ առաջինը ստեղծեցի
Եւ գրեթէ նախառաջինը,
Անդորրաւէտ ու մեծդի առագաստներով:
Դուն՝ որմէ երկրիս վրայ կ'իջնէ նախաճաշակ մը,
Դուն՝ որ կը տարածես ձեռքերդ, դուն՝ որ երկրիս
վրայ կը հեղուս
Առաջին խաղաղութիւնը՝ նախակարապետ
յաւիտենական խաղաղութեան.
Առաջին հանգիստը՝
նախավայելք յաւիտենական հանգիստին:
Առաջին բալասանը, այնքա՜ն զով. առաջին
երանութիւնը՝ նախաճաշակ յաւիտենական
երանութեան:
Դուն՝ որ կը մեղմես, կը բուրումնաւէտես, կը մխիթարես:
Դուն՝ որ վէրքեր կը կապես եւ խոցոտուած անդամներ,
Դուն՝ որ կը բնացնես սրտերը, կը բնացնես մարմինները,
խոցոտուած սրտեր, խոցոտուած մարմիններ
Մահացու յոգնութենէ, հոգերէ, մտածումներէ,
ցաւերէ տարանջատ անդամներ, փշրուած կողեր.
Դուն՝ որ դառնութենէ բզկտուած կոկորդներու
մէջ սպեղանի կը լեցնես,
Այնքա՜ն զով ու կազդուրիչ:
Ո՜վ իմ մեծասիրտ աղջիկս, զոր առաջինը ստեղծեցի.
Գրեթէ նախառաջինը. անհո՜ւն ստինքներով աղջիկս:
Եւ ես լաւ գիտէի, թէ ինչ կ'ընէի:
Ես թերեւս գիտէի, թէ ինչ կ'ընէի:
Դուն՝ որ մանուկը կը բնացնես իր մօր թեւերուն մէջ.
Մանուկը՝ լուսաւորուած նինջին ստուերով,
Ներքնապէս ժպտուն.
Իր մօրը վստահութեամբ գաղտնօրէն ցնծուն.
Ինչպէս եւ իմ վրաս ունեցած վստահութեամբ.
Շրթներուն ծալքին մէջ ծրարուած իր ժպիտով:
Դուն՝ որ մանուկը կը բնացնես անմեղութեամբ
յորդուն եւ վստահալից
Իր մօր թեւերուն մէջ:
Դուն՝ որ կը բնացնէիր Յիսուս մանուկը ամէն իրիկուն
Սրբուհի եւ Անարատ կոյս մօրը թեւերուն մէջ.
Դուն՝ որ բոյրն ես Յոյսին.
Ո՜վ իմ գեղանի դուստրս, առաջինը առաջիններուն մէջ.
դուն՝ որ մինչեւ իսկ կը յաջողիս,
Դուն՝ որ երբեմն կը յաջողիս
Մարդը բնացնել մայրական Նախախնամութեանս թեւերուն մէջ.
Ո՜վ իմ աստղավառ ու մթին աղջիկս, ողջո՜յն քեզ:
Դուն՝ որ կը վերանորոգես, դուն՝ որ կը սնուցանես,

digitised by A.R.A.R.@

դուն՝ որ կը հանգստացնես.
Ո՛վ Ստուերի լռութիւն.
Նման լռութիւն կ'իշխէր մտահոգութեան ստեղծումէն առաջ,
Մտահոգութեան իշխանութեան հաստատուելէն առաջ.
Նման լռութիւն պիտի իշխէ, բայց լոյսի լռութիւն մը,
Երբ այդ ամբողջ մտահոգութիւնը սպառի.
Երբ մարդիկ հորին ամբողջ ջուրը քաշած ըլլան:
Այսպէս, աղջիկս, դուն հին ես եւ ուշացած.
Վասնզի մտահոգութեան այս տիրապետութեան ներքեւ
դուն կը ոգեկոչես, կը վերյիշեցնես,
դուն գրեթէ կը վերահաստատես.
Դուն գրեթէ կը վերսկսիս այն հինաւուրց Անդորրութիւնը,
Երբ իմ հոգիս կը սաւառնէր ջուրերու վերեւ.
Բայց նոյն ատեն, իմ աստղազարդ աղջիկս, մթաստուեր
պարեգօտով, դուն կանխահաս ես եւ յառաջապահ.
Վասնզի դուն կը ծանուցանես, դուն կը ներկայացնես,
ամէն իրիկուն դուն գրեթէ կը վերսկսիս
Ցաւիտենական լոյսի իմ Անդորրս:
Ո՛վ գիշեր, սուրբ ես դուն, մեծ ես դուն, գեղեցիկ ես դուն,
Մեծահանդերձ ո՛վ գիշեր...
Ես կը սիրեմ քեզ, գիշեր, եւ կ'ողջունեմ քեզ եւ
կը փառաւորեմ քեզ:
Դուն իմ մեծ աղջիկս ես եւ իմ արարչագործութիւնս:
Ո՛վ գեղեցիկ գիշեր, աստղազարդ ու մեծ պարեգօտով
իմ դուստրս,
Դուն կը յիշեցնես, դուն ինծի՛ կը յիշեցնես
այն մեծ լռութիւնը, որ կար,
Երբ դեռ չէի բացած ապերախտութեան ջրաթումբերը.
Եւ դուն կը ծանուցանես, դուն ինծի՛ կը ծանուցանես
այն մեծ լռութիւնը, որ պիտի ըլլայ
Երբ ես փակեմ զանոնք:
Ո՛վ քաղցր, ո՛վ մեծ, ո՛վ սուրբ, ո՛վ գեղեցիկ գիշեր,
թերեւս ամէնէն սուրբը աղջիկներուս,
մեծահանդերձ եւ աստղազարդ գիշեր,
Դուն ինծի կը յիշեցնես այն մեծ լռութիւնը, որ
կար աշխարհիս մէջ
Մարդու տիրապետութեան սկսելէն առաջ.
Դուն կը ծանուցանես այն մեծ լռութիւնը, որ պիտի ըլլայ
Մարդու տիրապետութենէն ետք, երբ ես վերստին
ձեռք առնեմ իմ մականս:
Եւ ես հիմակուընէ երբեմն կը մտածեմ այդ մասին,
վասնզի այս մարդ արարածը իսկապէս
շատ աղմուկ կը բարձրացնէ:
Բայց դուն, գիշեր, ինծի կը յիշեցնես մանաւանդ ա՛յն գիշերը.
— եւ ես զայն պիտի յիշեմ յաւիտենապէս:
Ինն երորդ ժամը հնչած էր: Իմ ժողովուրդիս՝
Իսրայէլի երկրին մէջ էր:
Ամէն ինչ վերջացած էր: Վերջացած էր այդ հսկայական
արկածախնդրութիւնը:

digitised by A.R.A.R.@

Վեցերորդ ժամէն ի վեր ամբողջ երկրի վրայ
խաւար էր տիրած մինչեւ իններորդ ժամ:
Ամէն ինչ վերջացած էր: Ա՛լ չխօսինք այդ մասին:
Բան մը՝ որ ինծի ցաւ կը պատճառէ:
Անհաւատալի այդ էջերը Որդուոյս՝ մարդոց մէջ, մարդոց մօտ:
Եւ ի՞նչ ըրին մարդիկ իրեն:
Իր երեսուն տարիները, երբ աւն ատաղձագործ եղաւ մարդոց մէջ.
Իր երեք տարիները, երբ տեսակ մը քարոզիչ դարձաւ մարդոց մէջ.
Դարձաւ քահանայ:
Իր երեք օրերը, երբ աւն մարդոց զոհը դարձաւ, մարդոց մէջ:
Իր երեք գիշերները, երբ մեռեալ դարձաւ մարդոց մէջ,
մարդոց մօտ:
Եւ այն դարերն ու դարերը, երբ թշնամանքի թիրախ դարձաւ
մարդոց մէջ:
Ամէն ինչ վերջացած էր. վերջացած էր անհաւատալի
արկածախնդրութիւնը, որով ես՝ Աստուածս,
կապուած մնացի իմ յաւիտենութեանս համար:
Այն արկածախնդրութիւնը, որով Որդիս թեւերս կապեց.
Յաւիտենապէս կապելով իմ արդարութեանս թեւերը,
յաւիտենապէս քակելով իմ ողորմածութեանս թեւերը:
Եւ իմ արդարութեան դէմ հնարելով արդարութիւնն իսկ:
Սիրոյ արդարութիւն մը, Յոյսի արդարութիւն մը:
Ամէն ինչ վերջացած էր:
Ինչ որ պէ՛տք է ըլլար. ինչպէս որ պէտք է ըլլար:
Ինչպէս ծանուցած էին իմ մարգարէներս:
Տանարին վարագոյրը երկուքի ճեղքուած էր,
վերէն մինչեւ վար:
Երկիրը շարժած էր, ժայռերը հալած էին:
Գերեզմաններ բացուած էին եւ մահացեալ բազմաթիւ սուրբերու
մարմիններ յարութիւն էին առած:
Եւ մօտ իններորդ ժամուն Որդիս արձակած էր ճիչ մը,
որ պիտի չմարի քնաւ: Ամէն ինչ վերջացած էր:
Զինուորները վերադարձած էին իրենց զօրանոցները:
Հարիւրապետ մը միայն կը մնար եւ քանի մը ուրիշներ:
Փոքրաթիւ գունդ մը կը մնար՝ պահելու համար մահապարտին
անկարեւոր խաչը:
Կախաղանը, ուր իմ Որդիս կը խաչուէր:
Քանի մը կանայք միայն մնացած էին:
Մայրը հոն էր.
Թերեւս նաեւ քանի մը աշակերտներ.
եւ այդ ալ դեռ որոշ չէ:
Արդ, ամէն մարդ իրաւունք ունի թաղելու իր զաւակը.
Աշխարհի երեսին ամէն մարդ, որ այս մեծ
դժբախտութեան կը մատնուի.
Զաւակէն առաջ մեռած չըլլալու դժբախտութեան:
Եւ ես միանակս, ես՝ Աստուած, թեւերս կապուած մնացի
այս արկածախնդրութեամբ.
Ես միս–միանակ այդ վայրկեանին, հայր՝ այնքա՛ն
ուրիշ հայրերէ

Digitized by A.R.A.R.@

Ե՛ս միայն չէի կրնար թաղել զաւակս:
Այն ատեն է որ, ո՞վ գիշեր, դուն եկար:
Ո՞վ իմ սիրասուն աղջիկս, ես զայն կը տեսնեմ տակաւին եւ պիտի
տեսնեմ ամբողջ յաւիտենականութեանս ընթացքին:
Այն ատեն է, որ դուն եկար, ո՞վ գիշեր եւ
հսկայական պատանքի մը մէջ ծածկեցիր
հարիւրապետն ու իր հռոմէացի մարդիկը.
Կոյսն ու սուրբ կանայք.
Եւ այն լեռն ու այն հովիտը, որոնց վրայ իրիկունը կ'իջնէր.
Եւ իմ Իսրայէլի ժողովուրդս ու իր մեղանչողները եւ Ան՝
որ կը մահանար, որ մահացած էր իրենց համար:
Եւ Յովսէփ Արիմաթացիի մարդիկը, որոնք կը մերձենային
արդէն ու կը բերէին սպիտակ պատանքը:

ՇԱՌԼ ՓԵԿԻ

Թարգմ. Մ. ԻՇԽԱՆ

digitised by A.R.A.R.@

Բ. ՔԵՊԱՊՃԵԱՆ

ՑՈԼԱՑՈՒՄՆԵՐ

Ձմեռան շատ կարճ էր։ Մարդ հեռաւորութիւն չէր կրնար կոչել զայն։ Պարզապէս քանի մը քայլ։ Անշո՛ւշտ որ քոմի տունը չէր։ Ոչ այդքան մօտ։ Մենք բան, ինչի՞ս կառքը։ Հիմա, որ պենզինի գինը գլխապտոյտ կ'առաջացնէր։ Հապա՛ւ անկիւնը պիտի դառնար եւ, ահաւասի՛կ։ Ցեռո՞յ, անկիւնէն ետք պիտի չարունակէր անշուշտ։ Ի՞նչ ուրիշ։ Հասած էր արդէն իր տեղը։ Բնականաբար չէր յոգներ։ Ցողնելիք բան մը ալ չկար։ Նեղուեցաւ Սուրէն։ Անհեթեթ չէ՞ր այս մենախօսութիւնը։ Որո՞ւն դէմ կը պաշտպանէր իր գործատեղիին մօտիկութիւնը։ Թող հազար անգամ չեշտէին։ Այո՛, իր տունը մօտ էր գործատեղիին եւ ուրի՞շ։ Ոչինչ, անշուշտ։ Գրեթէ աննմանելի գլխու շարժումով մը բարեւեց այդ կինը, որ ամէն օր կը տեսնէր եւ չէ՞ր մը անց ակամայ էր բարեւել։ Հակառակ անոր, որ չէր ճանչնար զայն։ Հակառակ անոր, որ յստակօրէն չէր գիտեր, թէ կինը կը բարեւէ իրեն։ Սխալած էր թերեւս եւ իր գլխուն պատահական մէկ շարժումը մեկնած՝ իբրեւ բարեւ։

Աւելի ցոյլին էր սովորականէն։ Մտածել չուզեց պատճառի մասին, քանի որ ապարդիւն պիտի մնար իր պրպտումը։ Ցեռոյ այդքան ալ ցոյլին չէր, որ արժէր մտածել։ Օդը այնքա՞ն գեղեցիկ էր որ։ Կարեւորը այդ էր։ Եւ երկինքը այնքա՞ն կապոյտ։ Խորունկ չունչ մը քաշեց։ Քալուածքին դոնէ արտաքնապէս կայտառութիւն մը տուած էր։ Կը պակսէր միայն լաւատեսութիւնը, բայց չկրցաւ ժպտիլ։ Նոյնիսկ պուրնուզով մարդը չկրցաւ ուրախացնել զինք։ Ամէն օր լողալու կ'երթար եւ վերադարձին կը գնէր թարմ հացիկներ։ Իւրաքանչիւր քայլափոխին կը տեսնուէին իր գիրուկ սրունքները։ Թերեւս մարդուն արտաքինին (պուրնուզ-գիրուկ սրունքներ) եւ աշխուժութեան (լողալ-տարուան բոլոր եղանակներուն) միջեւ գոյութիւն ունեցող հակասութիւնն էր, որ ժպտիլ կու տար իրեն, բայց ոչ այսօր։ Քանի մը օր ետք, կառքի մը տակ պիտի մնար, գետինը փռուած, պուրնուզը տաւելի բաց եւ իր գիրուկ սրունքները աւելի տեսանելի, թարմ հացիկները մէկ կողմ գլորուած։ Այն ատեն Սուրէն պիտի ըսէր՝ լողալն ալ չօգնեց իրեն։

Ցողնա՞ծ էր։ Այդ կա՞րճ ձմեռայէն։ Առաւաւն այդ կանուխ ժամուն դեռ չէր աշխատած։ Կ'աշխատէին ուրիշներ, հանրախանութին պատերուն նոր ազդագիրներ կը փակցնէին։ Ծրառու Շուփեթեր, խանութին գլխաւոր աշխատակիցը, հրէկուան թերթերը կը ժողվէր՝ անոնց տեղը նորերը դնելու համար։ Կը ժպտէր աշխատած ատեն։ Սուրէն ենթադրեց, թէ իրեն ուղղուած էր այդ ժպիտը, հակառակ անոր, որ երէկ պէտք եղածէն աւելի առիւծ ծռած էր՝ անոր կուրծքերը տեսնելու համար։ Թերեւս անոր համար կը ժպտէր։ Կը ժպտէին մայրերը, որոնց տղաքը դպրոց կ'երթային։ Կը ժպտէին եւ թեւերնին կը ճօճէին տղաքը։ Սուրէն անոնց ժպիտին մէջ կարծեց տեսնել լաւատեսութիւն մը։

digitised by A.R.A.R.@

Աստուած այդ զովացուցի՛չ օդը։ Խորունկ շունչով մը պիտի լեցնէր թոքերը լորու ծաղիկի բուրմունքով։ Մաներէն կու գային անոնք, փողոցի երկու կողմի ծառերէն։ Օրուան այդ ժամուն չկար այդ մտերմութիւնը, որ քաղաքը մոռցնել պիտի տար իրեն։ Խորունկ շունչը, որ կ'ուզէր քաշել՝ չքաշեց։ Անիծեալնե՛ր, ըսաւ։ Անիծեալները կառքերն էին։ Անոնք կը խարդախէին լորու ծաղիկի բուրմունքը եւ իրեն կը յիշեցնէին, թէ չատ հեռու չէր քաղաքի կեդրոնէն։ Կրնային նոյնիսկ վարորդները ըլլալ անիծեալները, որոնց քանի մը անգամներ նայած էր անցեալին, պարզապէս կապ մը հաստատելու համար անոնց հետ, թէկուզ հպանցիկ եւ մակերեսային ըլլար անիկա։ Երկու հոգիի ուշադրութիւնը կրցած էր գրաւել։ Միւսները աչքերնին անգամ չէին դարձուցած իր կողմը։ Մէկը — կին մը — անընմանելիօրէն ժպտած էր, միւսը՝ չփոթած իր հայեացքէն, գլուխը քանի մը անգամ ետ դարձուցած էր։ Թերեւս մարդը զինք կը ճանչնար։ Այսօր ոչ ոքի նայեցաւ. գիտէր, որ արդիւնքը տարբեր պիտի չըլլա՛ր։ Անիծեալները կրնային ըլլալ այդ երիտասարդները, որոնք ասպետի նման իրենց մոթիւսներուն վրայ բաղմած՝ կ'առաջանային կրիայի արագութեամբ։ Իրականութեան մէջ գլուխնուն ասպաւարտ մը անցուցած պէտք է ըլլային, որպէսզի արկածի մը պարագային գլուխնին չվնասուէր։ Ի՞նչ կայ մէջը, որ պիտի վնասուի, մրմնջաց Սուրէն եւ ժպտեցաւ։ Ժպտեցա՞ւ։ Ահռելի աղմուկ կը հանէին, որ որեւէ համեմատութիւն չունէր իրենց արագութեան հետ։ Թաք-ա-թաք-ա-թաք-ա-թաք։ Ճիշդ Ա. Աչխարհամարտի ժանդոտած, իւղի երես չտեսած դեղացիներուն պէս։

Պարզապէս յետամնաց բաներ, որոնք կարելի չէր համեմատել ուղղաթիռներուն ամրացուած արդի տարբերակներուն հետ։ Գրեթէ անաղմուկ կը գործէին անոնք։ Աղմուկը, որ կար եւ լսելի էր, ուղղաթիռներուն պտուտակներէն կու գար, մոռցնել տալով դեղացիրներուն գոյութիւնը։ Անոնց մասին կարելի չէր խորհիլ այդ պահուն։ Սուրէն իր բաղկաթոռին մէջ նստած էր եւ աչքերը սեւեռած պատուհանին։ Կը դիտէր ուղղաթիռները, որոնք յարձակողական վիճակի մէջ մտած՝ կը մօտենային վիւթնամեան փոքրիկ գիւղին։ Ցարձակումը կը սկսէր վակնէրեան կտորով մը — եթէ չէր սխալիր «Վալֆիւրքնրիթ»է էր, որ կը յորդէր ուղղաթիռներուն ամրացուած բարձրախօսներէն։ Չհիանալ անկարելի էր։ Գեղեցիկ եւ «համակրելի» ուղղաթիռները, զուգահեռ իրարու, մարտական հոյակապ երաժշտութիւն մը, որ ամենավախկոտն անգամ կը վերածէր — գոնէ անոր սեւեռութեանը ընթացքին — կատարեալ հերոսի մը։ Պատերազմ էր ասիկա։ Սուրէն յիշեց ամերիկեան ճրագ նաւատորմի խոթանպուլ կատարած այցելութիւնը — չատ տարբեր առաջ, երբ ամէն ինչ տարբեր էր։ Վակնէրի շեփորներու շեշտակի ահազանգով ուղղաթիռները սուզուեցան դէպի վար, դէպի վիեթնամեան գիւղը, միչտ կանոնաւոր, միչտ զուգահեռ իրարու։ Կը տեսնուէին գիւղացիներ, որոնք չուարած կը վազէին աջ ու ձախ։ Օտար երաժշտութի՞ւն էր արդեօք, որ գիրենք կ'ապշեցնէր։ Ոմանք յանկարծ գետին ինկան, ուրիշներ շարունակեցին վազվզել, բայց աւելի դանդաղ, վարանոտ։ Ուրիշներ բերանին բացին՝ անձայն պոռալով։ Պոռացին նաեւ դինուորները, նոյնպէս անձայն։ Վակնէր ամէն ինչ կը խեղդէր։ Կարծես արտայայտութեան տարբերութիւն մը նշմարել գիւղացիներուն եւ դինուորներուն միջեւ։ Գիւղին մէկ անկիւնը ոսմբ մը ինկաւ, որմէ կարմրագոյն ոսնկ մը բարձրացաւ։ Նափալմ, ըսաւ քովը նստողը։ Սունկին գոյնը չատ լաւ կը յարմարէր կոյս անտառի կանանչին։ Սուրէն երբեք չէր երեւակայած, որ այդքան գեղեցիկ կրնար ըլլալ նափալմին գոյնը։ Եթէ այդ էր պատերազմը՝ ընելիք չկար։ Լիովին զոհացում կը զտնէին մարդուս գեղագիտական հակումները։

Ամէն ինչ վերջացած էր։ Ուղղաթիռները գիւղին — աւելի ճիշդ՝ անոր

մնացորդացին — քով թառած էին։ Հրապարակը լեցուն էր ոտքի կեցողներով եւ գետինը պառկողներով։ Այս վերջինները գիւղացիներն էին։ Անոնք՝ որոնք ի վիճակի էին պահանջներ յայտնելու, կ'ընէին այս մէկը։ Նոյնիսկ ան, որուն աղիքները դուրս թափած էր, տաքլով ջուր կը խնդրէր։ Էն Գի Սիի եւ Սի Գի էսի թղթակիցները ուղղութիւն մը անկիւնէն մէկնեղ կ'ելլէին, ռազմագաշտէն ամենաթարմ պատկերները խսկոյն Նիւ Եորք, Շիքակօ, Տիթրոյթ, Լոս Անճելըս եւ այլուր հաղորդելու համար։ Եւ անշուշտ գունաւոր։ Հրամանատարը հարցումներուն կը պատասխանէր, ալ ձեռքով եւ ջնջելով իր բառապայի գլխարկը։ Գիւղին ռազմավիտական նշանակութիւնը մեծ էր, քանի որ մերձակայ ծովը սէօրֆինգի լայն հորիզոններ կը բանար իրեն եւ իր զինուորներուն։ Անշուշտ, պէտք է սչընչացնէին գիւղը։ Եթէ հանգիստ գլուխով սէօրֆինգ ընել կ'ուզէին, ղանէ մասամբ։ Գետին թքեց հրամանատարը։ Նկատի պէտք չէ առնէին, անշուշտ, Վիեթքոնկի աւելի հեռուն գտնուած թնդանօթները, որոնք հանդիպը մասամբ պիտի նրաւգեցնէին։ Եւ կամ հակառակը, պիտի մեծցնէին։ Ըստ մարդուս կեցուածքին։

— Ի՞նչ կը խորհիս, — հարցուց Սուրէն։

— Ոչինչ, — պատասխանեց Քէրսթին, — կ'ուզէ՞ս լոյսը բանամ։

Սուրէն նախընտրեց մութին մէջ մնալ, հակառակ անոր, որ շատ կ'ուզէր անոր երեսը տեսնել։ Զանձրացուցա՞ծ էր գայն։ Կրնար շատ մանրակրկիտօրէն պատմած ըլլալ շարժանկարին այդ հատուածը, պէտք եղածէն աւելի ծանրանալով մանրամասնութիւններուն վրայ, որոնք միայն մասնագէտի մը համար նշանակութիւն ունէին։ Հրամանատարին քառապոյի գլխարկը յատուկ նշանակութիւն ունէր անշուշտ, նոյնպէս՝ վակնէրեան երաժշտութիւնը։ Սպասած էր, որ այդ պահերուն սրամիտ ծպիտով մը խնդար Քէրսթին, միասնաբար ըմբոշխնելով Քոքոլային հնաբքները։

— Բան մը խմել կ'ուզէ՞ս, — հարցուց

Օգը տաք էր, բայց Սուրէն չուզեց։ Դուրս պիտի ելլէր Քէրսթին, գաւաթով մը եւ դարեջուրի շիշով մը պիտի վերադառնար եւ գիրկը նստելով՝ նորէն ինչո՞ւ նեղուեցար, պիտի հարցնէր։ Ցոզնած եմ, — ըսաւ Քէրսթին։

Մութին մէջ յուսեցաւ յօրանջումը, գրկէն անլսելի ճարճատումը ծնօտին։

Քէփթըն Վիլլարտ պաղարիւն մէկն էր։ Կամ՝ այնպէս ըլլալ կը թուէր։ Ի վերջոյ զինուոր էր։ Եւ իր այդ հանգամանքով գտապարտուած էր այդպէս ըլլալու — գուսպ, անզգայ։ Անպայման իր բարի համբաւը աւելի ետք, Սուրէն խորհեցաւ, թէ հոս ինչ կը նշանակէր այդ գրարի համբաւը։ — պատճառ հանդիսացած էր, որ իր պեռը իրեն յանձնէ խիստ կարեւոր պաշտօն մը՝ Սայկոնի տասնեակ հազարաւոր սենեակներէն մէկուն, դաղտնագործական խուցի մը մէջ։ Մեռցնել Քոլոնիլ Քուրթց մը, որ ապրստամբած էր եւ կ'ապրէր կոյս անտառին խորերը, սահմանէն անդին՝ Քամպոճիա, իշխելով ընիկներուն վրայ։ Իր մասին ճշգրիտ տեղեկութիւններ քաղելը գրեթէ անկարելի էր։ Կը շրջէին զանազան զրոյցներ. խելագարած էր, կը տիրէր անդթօրէն, իր շուրջը ասրասպ կը տարածէր, իրեն հետ կապ հաստատելը անկարելի էր։ Ղրկուած բոլոր պատուիրակները չէին վերադարձած։ Մեռցուած կրնային ըլլալ։ Ո՛չ, տագանդաւոր մարդ էր քոլոնիլ Քուրթցը։ Միայն ինքնայատուկ պայքարի եղանակներ հնարած էր Վիեթքոնկի դէմ։ Անոնք էին — եւ կամ ա՛յն՝ ինչ որ ծանօթ էր անոնցմէ — որ կասկած կը ստեղծէին իր մտային առողջութեան մասին։ Այժմն պարագայի՝ ամէն ինչ խորհրդաւոր էր։ Այնպէս՝ ինչպէս այն գիրքին վերնագիրը, որ գտած էր գրադարանի մը մէջ, պրպտելու ատեն — «Մթութեան կեդրոնը»։ Այդ մըթութիւնն էր, որ հմայած էր զինք։ Անմիջապէս տուն տարած էր գիրքը։ Մըթութիւնը, որ կար վերնագրին մէջ, փոխանցուած էր իրեն։ Սրտի բարախումով թերթած էր Ճոզէֆ Քոնրատի այս վիպակը եւ հանդիպած Քուրթցի մը։ Քոլոնել չէր ան, այլ՝ փղոսկր արտածող

digitised by A.R.A.R.@

ընկերութեան մը աշխատակիցը, հեռաւոր Ափրիկէի մէջ։ Վիպակի սկիզբէն ի վեր կար խորհրդաւոր, չըսելու համար ճնշիչ մթնոլորտ մը, կար թաքուն լարուածութիւն մը, որ գիրքին հերոսին՝ Մարլովի բերնով կը պատմուէր ամէն ինչ, կը գտնէր ամէնուրեք։ Մարլով նաւապետ էր, այսինքն՝ քէպթէն։ Գործով եկած էր Քոնկո, գետին գետաբերանը, ֆրանսական ընկերութեան մը քովը աշխատելու համար։ Այդ գետը, որուն տեսքը նոյնիսկ քարտէսին վրայ իրեն երևցած էր ճնշիչ եւ մահասփիւռ՝ օձի մը նման։ Որուն երկու ափերուն վրայ չարուած էին ընկերութեան մասնաճիւղերը, լեցուած յառաջդիմութեան կաշառուած ուխտաւորներով։ Մարլով գրեթէ ոչինչ գիտէր իր ուղեւորութեան բուն նպատակին մասին, բացի անկէ, որ պիտի մտնէր այդ օձին ծոցը։ Անորոշութիւնը, որ կար, կը չտանար ժամանակով, ժամանակ՝ որուն ընթացքին կը սպասէր իր շոգենաւին նորոգութեան համար անհրաժեշտ կաղմածներուն։ Ի՛նչպէս Քուրթցի մը անունը եւ կը զգար, թէ ան էր իր բուն նպատակը։ Գրեթէ ոչինչ կը պատմուէր իր մասին, կային ակնարկներ։ Կարծես անոնց նշումով կը հաղորդուէր ամէն ինչ, հանելուկի մը մասնիկներուն պէս, որոնց ճարպիկ միացումով պիտի պարզուէր ընդհանուր պատկերը թերեւս ամէն մարդու, բայց ոչ՝ Մարլովի։ Սուրէն շատ կը փափաքէր տեսնել Մարլովը իր մութ եւ յուսալքուած մասնաճիւղին մէջ։ Եւ իւրաքանչիւր կարդացած էջով կը զօրանար իր այդ իղձը։ Երեսը, որ կը տեսնէր եւ կը շոյէր, պարզապէս Քէրթինին երեսն էր։ Անոր երեսը կը շոյէր անձայն, միայն երբեմն մրմնջալով այն բառերը, զորս սովոր էր ըսել նման առիթներով։ Զարմանքով կը նշմարէր երբեմն, թէ երեսը, որուն վրայ կը հանդչէին իր մատները, երիկմարդու մը համար կակուղ էր, անհաւատալի ըլլալու տարբեր։

Ճամբան շատ կարճ էր։ Իրականութեան մէջ գրեթէ հասած էր տեղը։ Միայն քանի մը քայլ եւս։ Տիկին Տոլորէս խանութը չէր բացած տակաւին։ Նորոգուած տաբատները, փէշերը եւ վերարկուները կը սպասէին իրենց տիրոջը տունը վերադառնալ։ Բանջարավաճառ Հոլլանդէրէ խնձորի եւ այլ պտուղի սընտուկները դուրս կը հանէր՝ զանոնք անդաւորելու համար։ Այտերը կարմիր էին իր խնձորներուն պէս, բայց հիւանդագին կարմրութիւն մը։ Կը ոգար։

— Բարեւ, — ըսաւ Կուիթման։

Զեռքը պարապ տոպրակը կ'երթար հացագործին՝ 15 ֆենիկի հացիկներ գընելու համար, զորս պիտի ծախէր 30 ֆենիկի։ Սուրէն իւրաքանչիւր անգամ կը նեղուէր՝ Կուիթմանին ադուէսի նմանող խորամանկ երեսը տեսնելով։ Այսօր չնեղուեցաւ։ Շատ մօտ էր արդէն իր հասնելիք տեղին։ Քանի մը քայլ միայն։ Ոչ մէկ բան կրնար իր ուշադրութիւնը դրաւել։ Նո՛յնիսկ առջեւէն գացող աղջկան օրօրուող յետոյքը։

Մարլովի եւ Վիլլարտի միջեւ կար թաքուն կապ մը, թերեւս նոյն անձերն էին։ Այս մէկը գրեթէ անկարելի է, խորհեցաւ, քանի որ Մարլով կ'ապրէր դարասկիզբին, իսկ Վիլլարտ՝ անկէ մօտ 70 տարի առաջ։ Բայց կը փնտռէին նոյն խորհրդաւոր անձը՝ Քուրթցը — 70 տարուայ տարբերութեամբ։ Վերջապէս ճամբայ պիտի ելլէին։ Մարլով՝ իր շոգենաւով, Վիլլարտ՝ իր պղպատէ մարտանաւով, որ քառապոյի գլխարկով հրամանատարը բերել տուած էր ուղղաթիռներու օգնութեամբ։ Գետն ի վեր նաւարկելը կը նմանէր աշխարհի ստեղծման շրջանին տանող ճամբորդութեան մը, երբ բոյսերը գրաւած էին երկիրը եւ հրոկայ ծառերը թոգաւորներ էին։ Գարապ գետ մը, անհուն լռութիւն եւ անթափանցելի անտառ մը։ Լռութիւնը չէր նշանակեր անդորրութիւն, այլ կը նմանէր անհաշտ զօրութեան մը, որ անդուշակելի ծրագիրներ կը մշակէր։ Այդ պահերուն էր, որ անցեալը կը կենդանանար, գոնէ՛ Սուրէնի եւ Մարլովի համար։ Այս վերջինը յայտնի էր, քանի որ

digitised by A.R.A.R.@

գիրքին մէջ գրուած էր։ Վիլլարտին ինչ խորհիլը յայտնի չէր։ Սուրէն վստահ էր, որ անոր պատատին վրայ սփռուած երեսը կը մատնէր մէկ բան, թէ ան ոչինչ կը խորհէր, ոչինչ կը յիշէր։

Մինչ Մարլով եւ Վիլլարտ բոյսերու, ջուրի եւ լուութեան այդ տարօրինակ աշխարհէն ներս կը մտնէին, Սուրէն կը յիշէր Քէրսթինին յարկաբաժինը տանող սանդուխներէն վեր ելլելը։ Իր բարձրանալը հեռու էր անազմուկ ըլլալէ։ Ընդհակառակն, կը խնդային բարձրաձայն եւ Քէրսթին ուրախ էր, որ իրարու հանդիպած էին փողոցը։ Սուրէնին գլխուն մէջ կը շրջէին Մարլովը, Վիլլարտը, Քուրթցը եւ իր այդ ադմկոտ հանդիպումը կը վերածուէր խորհրդաւոր, անձայն հանդիպման մը, բացուող եւ գոցուող բերանների տողանցքի մը, որոնց հանած ձայները — կարծես անօգտագործութեան մը մէջ գործէին անոնք — անլսելի էին։ Կը տեսնէր Քէրսթինին սենեակը իր երեւակայութեան մէջ։ Սենեակ մը լեցուն գիրքերով, որոնք պատի մը պէս կը բարձրանային, կը կազմէին երկրորդ պատ մը, ահմանելով սենեակին բուն տարածութիւնը։ Գիրքերը միշտ յուռ էին, անիմաստ էր անոնց հետ զբաղիլ ուզելը։ Այսուհանդերձ, շատ անգամ անոնց առջեւը կը կենար, մա՛նաւանդ Քէրսթինին բացակայութեան ու կը դիտէր զանոնք։ Ինչո՞ւ այս գրկախառնումները, ինչո՞ւ այս շոյելը, ինչո՞ւ այս հառաչումները, որոնք առաջին անգամ հանոյք պատճառած էին, որ յաճախ երազած էր՝ շատ աւելի վառ գոյներով, քան իրականութիւնն էր։ Եւ քանի կը թափանցէր Քէրսթինին մտերմութենէն ներս, այդքան կը դժուարանար պատասխան մը գտնել այդ հարցումներուն։ Քանի որ ամէն ինչ սովորական դարձած էր։ Ատեն մը եռք մտցած էր նոյնիսկ այդ հարցումները։ Պարզապէս անոր քով մնացած էր եւ մնալով զգացած էր, թէ կը փոխուէր ինքը, իր էութիւնը։ Ինչո՞ւ չէ։ Զէ՞ն փոխուեր նաեւ Մարլով եւ Վիլլարտ՝ թափանցելով կոյս անառուէն ներս, գեղին անդորրութենէն ներս, անդորրութիւն մը, որ կը ստեղծէր լարուածութիւն։

Կը կորսուէր ժամանակի զգացումը, ժամանակը ետ կ'երթար։ Կարծես անդրաշխարհային շողենաւ մը կը սլանար դեռն ի վեր։ Մարլով եւ Վիլլարտ կը փոխադրուէին աշխարհ մը, որ միայն մը-շուլի մը պէս գոյութիւն ունէր մարդկութեան յիշողութեան մէջ։ Այդ մութ անցեալը, որ կը կենդանանար բնութեան մոռցուած ուժերու միջոցով, բնիկներու միջոցով, որոնք 20րդ դարու մէկ շոգենաւին վրայ կը յարձակէին նետերով։

Սուրէն նաեւ կը զգար այդ փոփոխութիւնները։ Ո՛չ շոգենաւի հետ կապ ունէր եւ ոչ ալ գետի մը հետ։ Իր համբորդութիւնը ուրիշ տեսակի համբորդութիւն էր։ Որուն ընթացքին աւելի բացայայտ կը դառնային իր ինքնութեան թաքուն շերտերը։ Տիրե՞լ, իշխե՞լ։ Ա՞ն։ Սուրէ՞նը։ Երբե՛ք։ Նամակներուն պատասխանը գիտակցաբար ուշացնե՞լ։ Անշա՛ւշտ որ ոչ։ Անհերթք պատճառներով յետաձգե՞լ ժամադրութիւնները։ Բնա՛ւ։ Գիտէր, որ մտահոգուողը Քէրսթինը պիտի ըլլար։ Թերեւս — անշա՛ւշտ — աւելի պիտի կապուէր — մի՞թէ — իրեն։ Նախ անգիտակցաբար կը պատահէր այս բոլորը, իբրեւ պատահական երեւոյթ, որ ատենով կը ստանար մեթոտի բնոյթ, գիտակցաբար գործադրուող միջոց։ Ո՛չ թէ սէրն էր, որ կը կապէր զինք Քէրսթինին, կրնար չսիրել նոյնիսկ։ Ո՛չ գեղեցկութիւնը, որ սովորական դարձած էր ատեն մը եռք, ամէնօրեայ երեւոյթ։

Սուրէն հետզհետէ նմանութիւններ կը տեսնէր իր եւ Մարլովի եւ Վիլլարտի միջեւ, քանի որ ան ալ համբորդութեան մը մէջ էր, խորհրդաւոր նոյնպիսի պայմաններու տակ, որոնց ի յայտ բերած խաւերը նոյնքան նախնական էին։ Միակ անորոշ կէտը Քուրթցն էր։ Ո՞վ էր իր

digitised by A.R.A.R.@

Քուրթց կը մնար մութին մէջ։ Անհամար մամերու լոյսը կը ցոլար իր ճակատին վրայ։ Թաւ էր իր ձայնը։ Կ'արտասանէր հատուածներ Թ. Ս. Էլիոթի «Տը Ուէյսթ լենտ»էն եւ «Տը հոլլո մէն»էն։ Կ'արտասանէր, ծանրանալով իւրաքանչիւր բառին վրայ։ Վիլլարտ կը նայէր անոր, յիշելով էջս չորցած գրքերը, որոնք դուրսը, Քուրթցին ապարանքին առջեւ, ցիցերու վրայ ամրացուած էին, որոնք տեսած էր նաեւ Մարլով, 70 տարիներ առաջ։ Զայն կը պաշտէին բնիկները, իրենց աստուածն էր ան։ Ունէր ծրագիրներ՝ թէ՛ փղոսկրի արտադրութեան եւ թէ Վիեթքոնկի դէմ պայքարելու համար։ Բոլորը գրի առած էր։ Առաջինը՝ ձեռագիր, երկրորդը՝ մեքենագիր։ Բիւրեղեայ էին անոնք եւ որեւէ կասկած չէին արթնցներ իր հոգեվիճակին մասին։ Ցոգնած էր Քուրթց իր կրած բեռան ծանրութենէն։ Դիւրին չէր աստուած ըլլալը, դիւրին չէր ամէն օր տեսնել կէս չորցած գլուխներ ցիցերուն վրայ, որքան որ անոնք չարուած ըլլային հոն, ըստ իր կամքին։ Ցոգնած էր եւ կը սպասէր իր վախճանին, պատրաստ էր։ Եւ իր մահուան հրեշտակը կը բարձրացնէր սուրը։ Սուրը ահռելի ուժով կը մօտենար անոր։ Քուրթց կը մրմնջէր «Մաքսափը, սարսափը», երբ արդէն բատցած էր մահացու հարուածը։ Կը մրմնջէր եւ անլսելի կը դառնար՝ թէ՛ Մարլովին եւ թէ Վիլլարտին՝ իր մահուան հրեշտակին համար։ «Մարսափը, սարսափը» եւ անոր կը խառնուէր Քէրթինին բարձրաձայն եւ թափանցող ազաղակը։

Անամօթ խնդուքս կը մատնէ ամէն ինչ ուզածս-չուզածս աւելի ուզածս ինչո՞ւ չհարցնել թէ չե՞ս ուզեր հետս պառկիլ աճ չրրաւ անշուշտ գործել առանց շատ խօսելու ըրա՞ւ բնաւ ես ալ չեմ գիտեր Անայիս Նինը մէջբերելու նպատակը ի՞նչ է ժամերով նստեր եւ խմեր է ուժեղ խմիչքներ մինչեւ որ... յետո՞յ կարծես աչքերուս առջեւն է խոզ Տիթերը իր խոզի սրունքները կարնուկ տարատի մը մէջ սեղմած կուրծքը բաց ինն ամսուան փոքր ցցած կը տոզանցէ Քանինի փողոցները եւ կ'որսայ բսածին համեմատ օրը հրեթ հատ ազգիկ երեք հատ յուսախաբութիւն ազգիկներուն համար Կրօսսէ Շտրասէի վրայ պտրտելու չի նմանիր ասիկա համբուրկեր մը կը կերցնես վերջին պատառը չկլլած կը բացատրես ուզածդ եթէ չեղաւ հետեւէն Քոքա-Քոլա մը ծախսերը կը շատնան բայց հոգ չէ տասնըվեցնոց ազգիկին խմիչք չի տրուիր թերեւս ան չնշմարած կ'աւելցնես ուսկ մը օդի Քէրսթինին չեն նմանիր անոնք ամէն շաբաթ ձեռքդ բան մը պիտի երթաս իրեն երբեմն ուրախանալը-չուրախանալը յայտնի չ'ըներ այս կ'ըսէ կը նստի տեղը իր խեղճուկրակ ընկերոջը այլանդակ ձայնապնակները որ իբրեւ թէ իր ընկերը չէ թող ուրիշին պատմէ այդ հեքիաթները ձայնապնակները կը պահէ եղեր ոչ թէ սիրելուն համար պարզ բարեկամութիւն է եղեր չհարցուցի թէ ինծի ուրիշներուն ինչպէս կը ներկայացնէ ճիշդ խոզ Տիթերին յատուկ խնդիր մըն է ասիկա երբէ իրեն հարցնես խոզ Տիթերր երազելը շատ կը սիրէ ինծի պատմեց թէ ինքը ինչպէս երբեք օրուան մէջ պիտի լուծէ այս խնդիրը որ ես երբեք ամիսէ ի վեր չեմ կրցած լուծել ըսեմ որ յուսախաբ եղած էր խոզ Տիթերը Քէրսթինը տեսնելով կարնուկ սրունքներ եւ հաստակեկ յետոյէ ունի ըսաւ խոզ Տիթեր-

digitised by A.R.A.R.@

ը հայելի նայելու սովորութիւն չունի իրեն բնաւ չպատմեցի թէ տաքատէ եւ շապիկէ զատ ուրիշ բան չի հագուիր ան իրեն ինչ առաւելութիւններն ալ չըսի ես գիտեմ ինծի կը բաւէ հակառակ որ երկու օր առաջ հետս սրճարան մտնել չուզեց իր ընկերոջը հետ յանախ հոն կու գայ եղեր չ'ուզեր եղեր որ միասին տեսնեն մեզ հիմա այլեւս իրեն բան մը չեմ ճուիրեր քոզ հասկնայ պարզապէս կը պտըտիմ դիտելով ցուցափեղկերը ոչինչ կը հետաքրքրէ զիս չափերն ալ մոռցած եմ խաղալիք չէ ասիկա ոչ ալ մեր առաջին զարունը որ հարցնեմ ի՞նչ կ'ուզես հրնշտակս ձգէ մի խտղտեր համբուրե՞մ վերջը ես տաքարիւն եմ չեմ դիմանար այս ըսէ այս ճամբաս շատ կարճ է գրեթէ հասայ արդէն քանի մը քայլ եւս եւ հոն եմ աղմուկը կը շատնայ անիծեալ կառքերը արտառոց մեքենաները հեծանիւները որոնց զանգակները անընդհատ կը հնչեն գլուխս պիտի ճաքի բարեւ Հէրր ի՞նչ էր ձեր անունը բարեւ Տիկին Քլարա ձերինը չմոռցայ վերջ տուէք այս աղմուկին մեքենաներ կեցէք քանի մը քայլ եւս հեծանիւներ դադրեցուցէք ձեր եկայ վերջին լուսամորին քայլ մը եւս եւ հասայ հասա՞յ ո՞ւր:

ՐԱՖՖԻ ՔԵՊԱՊՃԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԼՈՅՍ–ՁԱՅՆ–ՁԵՒ–ԳՈՅՆ

Մօտեցիր ռուսգերուս
Եւ զգայ պաղ-տաք օդին երթեւեկը —
Անձրեւը, հովը, երկրաշարժը, աստղը,
Լոյսը, ձայնը, ձեւը, գոյնը:

Կանաչ տարածութիւններուն վրայ,
Պիտի սուզուիմ
Ցօղի փոքր կաթիլի մը մէջ,
Ուր կը ծնի տեսողութիւնը յստակ:

Փոքրիկ պիտի յիշէ քեզ
Եւ հորիզոնին վրայ տեղ մը անէանայ,
Վերստին շիշին մէջ անշարժանայ,
Շրթունքներուդ փուշերով, թուղթերուն վրայ,
Զինք ծնող գոյգ մը բառերու ջերմութիւնը
Սպառնացող քունին մէջ իյնայ:

Հառաչանքներով խանգարուած գետեր
Կ'ուղերսեն շնչառութեանս չափաւոր ռիթմը:

Երգերուս առուակը
Կը լճանայ ծովն ընդներա՝
Այլափոխելու համար շնչափառիս ցիչը
Մոխրագոյն լացի:

Մտերիմ բառեր կը հասկնան քեզ,
Բայց երբ օդին
Զարնուող ձայնդ փրփուրի կը վերածուի
Եւ կը լուայ միայն ականջդ՝
Անսահման կիրքը կը պակսի
Եւ աւելորդ կը դառնայ յորդելու փափաքը...

Մարք՝
Ցաւով սահմանուած,
Երանի՛ թէ կաւով շինուած ըլլայիր:

Խարուսիկ ջղաբջիջներու մոլորեցնող էլեկտրական հոսանքին մէջ
Ամիոփած մարմինս՝
Կ'երթամ դէպի արեւներուն նորոգուող կրակը,
Ուր գիտակցութիւնը կը քայքայուի:

ԱՐԱՄ ՃԻՒՂԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ժ. Խ. ԺՊՐԱՆ

ՄԱՐԳԱՐԷՆ

Թ.— ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Եւ ոստայնանկը ըսաւ.

— Խօսէ՛ մեզի Հագուստներու մասին:

Եւ ինք պատասխանեց.

— Ձեր հագուստները կը բողարկեն ձեր գեղեցկութեան մեծ մասը, բայց չեն ծածկեր տգեղութիւնը:

Եւ թէեւ հագուստներուն մէջ կը փնտռէք ազատութիւնը մտերմութեան, կրնաք անոնց մէջ գտնել միայն ասպարէզ ու շղթայ:

Երանի՛ թէ կարենայիք հանդիպիլ հողին եւ արեւին, աւելի՝ ձեր մարթով եւ նուազ ձեր հանդերձներով:

Որովհետեւ կեանքին շունչը արեւուն լոյսին մէջ է, եւ կեանքին ձեռքը՝ հովին:

Ձեզմէ ոմանք կ'ըսեն. «Հիւսիսի քամին է հիւսած զգեստները, զորս կը կրենք»:

Եւ ես կ'ըսեմ.— Այո՛, հիւսիսի քամին է:

Ամօթխածութիւնն եղաւ սակայն անոր ջանքերը, եւ ջիղերու մեղկութիւնն՝ անոր թելերը:

Եւ երբ իր գործը կատարեց, ան ծիծաղեցաւ անտառին մէջ:

Մի՛ մոռնաք, որ համեստութիւնը վահան է լոկ պղծամիտին աչքին դէմ:

Եւ երբ անհետի պիղծը, ի՞նչ կ'ըլլայ համեստութիւնը, եթէ ոչ կաշկանդանք եւ մտային նողկանք:

Եւ մի՛ մոռնաք, որ հողը կը հրճուի՝ զգալով ձեր մերկ ոտքերը եւ հովերը կը փափաքին խաղալ ձեր մազերուն հետ:

Ժ.— ԱՌՈՒԾԱԽԻ ՄԱՍԻՆ

Եւ վանառական մը ըսաւ.

— Խօսէ՛ մեզի Առուծախի մասին:

Եւ ինք պատասխանեց ու ըսաւ.

digitised by A.R.A.R.@

— Երկիրն իր բերքը կը շնորհէ ձեզի, եւ ո՛չ մէկ կարիք պիտի ունենամ, եթէ միայն գիտնամ, թէ ինչպէս հարկ է լեցնել ձե՛ր ձեռքերը:

Երկրին բարիքները փոխանակելով է, որ պիտի գտնէք առատութիւն ու լիանամ:

Գայլմանաւ, որ փոխանակումն ըլլայ սիրով եւ բարեացակամ արդարութեամբ, ապա թէ ոչ՝ անիկա կրնայ անյագութեան առաջնորդել ոմանք, եւ ուրիշներն ալ՝ անօթութեան:

Երբ շուկայի մէջ, ծովու, դաշտերու եւ այգիներու աշխատաւորներդ հանդիպիք ջուլհակներու, բրուտներու եւ համեմավաճառներու, —

Ոգեկոչեցէք այն ատեն հոգին տիրակալ ոգին, որ գայ եւ սրբագործէ ձեր արուեստները եւ հաշիւը, որ կը հակադրէ արժէք արժէքի:

Եւ մի՛ հանդուրժէք բնաւ, որ ձեր գործառնութեանց մասնակցին ամլամտեռն մարդիկ, որոնք լեզու պիտի թափեն ձեր աշխատանքին փոխան:

Այս տեսակ մարդոց պէտք է ըսէք.

«Դաշտ եկէք մեզի հետ, կամ ծով գացէք մեր եղբայրներուն հետ՝ ուռկան նետելու.

«Որովհետեւ հողն ու ջուրը նոյնքան առատաձեռն պիտի ըլլան ձեզի՝ որքան որ եղան մեզի»:

Եւ եթէ գան երգիչները եւ պարողներն ու սրնգահարները՝ գնեցէք անոնց ընծաներն ալ:

Որովհետեւ անոնք ալ պտղաբաւար եւ խնկաբաւարներ են, եւ ինչ որ կը մատուցանեն, թէեւ անրջային, հանդերձ է եւ անուշ ձեր հոգիին համար:

Եւ շուկայէն վերադառնալէ առաջ նայեցէք, որ ո՛չ ոք մեկնած ըլլայ ձեռնունայն:

Որովհետեւ երկրին տիրակալ ոգին խաղաղութեամբ պիտի չճիրանէ հովին վրայ, մինչեւ որ ձեզմէ ամենայնիսին պէտքերը գոհացում չգտնեն:

ԺԱ.— ՈՃԻՐԻ ԵՒ ՊԱՏԻԺԻ ՄԱՍԻՆ

Այն ատեն, քաղաքի դատաւորներէն մէկը առաջացաւ եւ ըսաւ.

— Խօսէ՛ մեզի Ոճիրի եւ Պատիժի մասին:

Եւ ինք պատասխանեց, ըսելով.

— Այն ատեն է, երբ ձեր հոգին կը թափառի հովին կրայ,

Դուք, առանձինն ու անկաշկանդ, անիրաւութիւն կ'ընէք ուրիշներու, եւ ուրեմն՝ դուք ձեզի:

Եւ կատարուած այդ անիրաւութեան համար պարտաւոր էք դուռը զարնել ընտրեալներուն ու պահ մը սպասել արիամարհանքի մէջ:

Ովկիանոսի նման է ձեր հա-աստուածը.

Ան կը մնայ յաւիտեան անարատ:

Եւ նման հրերին, ան կը բարձրացնէ թեւաւորները միայն:

Եւ նոյնիսկ արեւին նման է ձեր հա-աստուածը.

digitised by A.R.A.R.@

Ան չի ճանչնար խլուրդին ճամբաները, ոչ ալ կը փնտռէ օձին ծակերը:
Ձեր ես-աստուածը, սակայն, առանձինն չի բնակիր ձեր էութեան մէջ:
Շատ բան ձեր մէջ դեռ մարդ է, եւ տակաւին շատ բան ալ մարդ չէ,
Այլ՝ գաղան մը տխեղծ, որ քնաս կը քալէ մշուշին մէջ, իր իսկ զարթնումը փնտռելով:
Եւ պիտի ուզէի հիմա խօսիլ ձեր մէջի մարդուն մասին:
Որովհետեւ ա՛ն է եւ ոչ թէ ձեր ես-աստուածը, ոչ ալ մշուշին մէջ դեգերող գաղանը, որ կը ճանչնայ ոգիին ու անոր պատիժը:

Լսած եմ յանախ ձեզմէ, որ կը խօսիք յանցագործի մը մասին, իբրեւ թէ ան ձեզմէ եղած չըլլար, այլ՝ օտարական մը ձեր մէջ, կամ ինքնակոչ մը՝ ձեր աշխարհէն ներս:
Սակայն կ'ըսեմ ձեզի, ինչպէս որ սուրբն ու արդարը չեն կրնար ուելի բարձրանալ, քան վսեմագոյնը, որ կայ ձեզմէ իւրաքանչիւրին մէջ,
Այնպէս ալ՝ չարն ու տկարը չեն կրնար աւելի ցսեմանալ, քան յոռեգոյնը, որ նմանապէս ձեր մէջ է:
Եւ ինչպէս որ միակ տերեւ մը չի դեղնիր, առանց ամբողջ ծառին լուռ գիտակցութեան,
Այնպէս ալ՝ չարագործը չի կրնար սխալիլ, առանց ձեր բոլորին ծածուկ հաւանութեան:
Ինչպէս թափօր մը, դուք բոլորդ միասին կը յառաջանաք դէպի ձեր ես-աստուածը:
Դուք ճամբան էք եւ ճամբորդները միանգամայն:
Եւ եթէ ձեզմէ մէկը ինչայ, ան կ'ինչնայ անոնց համար, որ իրմէ ետ են, ազդ՝ գայթակղութեան քարին դէմ:
Այո՛, ան կ'ինչնայ նաեւ անոնց համար, որ իրմէ առաջ են, որոնք թէեւ ունեցած ըլլան աւելի արագ եւ հաստատ գնացք, մէկդի չեն նետած սակայն գայթակղութեան քարը:
Եւ տակաւին այս ալ, եթէ նոյնիսկ քառը ծանր ճնշէ ձեր սրտերուն.
Սպանեալը բոլորովին անպատասխանատու չէ իր սպանուելուն համար:
Եւ կողոպտեալը անմեղադրելի չէ՝ կողոպտուած ըլլալուն համար:
Եւ արդարը անպարտ չէ՝ չարագործին արարքներէն,
Եւ ան, որուն ձեռքերը ներմակ են, սրբուած չէ ապիրատին ըրածներէն:
Այո՛, յանցաւորը գահն է յանախ նախատեալին,
Եւ տակաւին շատ յանախ, դատապարտեալը կը կրէ բեռը անմեղին եւ անմեղադրելիին:
Չէք կրնար զատել արդարն անարդարէն, եւ բարին՝ չարէն.
Որովհետեւ անոնք միասին կը կենան արեւին դիմաց, ինչպէս սեւ եւ ճերմակ դերձանները հիւսուած են միասին:
Եւ երբ կտրի սեւ դերձանները մէկը, ջուլհակը կը ստուգէ ամբողջ կերպասը, ինչպէս նաեւ կը քննէ ջաներակը:

Եթէ ձեզմէ մէկը դատի քաշէ անհաւատարիմ կինը,
Թող ան կշիռքի զարնէ նաեւ անոր ամուսինին սիրտը եւ խնամքով չափէ անոր հոգին:
Եւ ա՛ն, որ պիտի ուզէր խարազանել նախատողը, թող քննէ նաեւ նախատեալին միտքը:

digitised by A.R.A.R.@

Եւ ա՛ն, որ յանուն արդարութեան իր տապարը զարնելով պիտի ուզէր պատժել չարիքի ծառը, թող նկատի առնէ նաեւ անոր արմատները.

Եւ արդարեւ, ան պիտի զտնէ արմատները բարիին ու չարին, պտղատուին եւ անպտուղին, բոլորը իրարու փաթթուած հոգիի լուռ ընդերքին մէջ:

Եւ դո՛ւք, դատաւորներ, որ պիտի ուզէք արդար ըլլալ,

Ի՞նչ վնիռ պիտի արձակէք անոր, որ թէեւ մարմնով պարկեշտ, աւազակ է սակայն հոգիով:

Ի՞նչ պատիժ պիտի սահմանէք անոր, որ կը սպանէ մարմինը, երբ ինք արդէն սպաննուած է հոգիով:

Եւ ինչպէ՞ս պիտի հետապնդէք զայն, որ խարդախ է իր գործերուն մէջ ու հարստահարիչ,

Ինք ալ սակայն անիրաւուած է ու ճախատուած:

Եւ ինչպէ՞ս պիտի պատժէք զանոնք, որոնց խղճահարութիւնն աւելի մեծ է, քան իրենց գործած յանցանքը:

Խղճի խայթը ճիշդ այդ օրէնքին սահմանուած արդարութիւնը չէ՞ միթէ, որ դուք սիրայօժար պիտի ուզէք պարտադրել:

Այսուհանդերձ, չէք կրնար խղճահարութիւնը բարդել անմեղին վրայ եւ ոչ ալ զայն վերցնել յանցաւորին որդէն:

Անպատեհօրէն ան պիտի աղաղակէ գիշերուան մէջ, որպէսզի մարդիկ արթննան եւ իմացին

Եւ դո՛ւք, որ պիտի ուզէք արդարութիւնն ըմբռնել, ինչպէ՞ս պիտի կարենաք, եթէ երբեք պայծառ լոյսի տակ չքննէք ամէն բան:

Այն ատեն միայն պիտի գիտնաք, թէ կանգունն ու անկեալը միեւնոյն մարդն է, կեցած մթնշաղին՝ իր գաճաճ-եսի գիշերուան եւ իր հս-աստուածի ցերեկուան միջեւ,

Եւ որ տաճարին անկիւնաքարը աւելի բարձր չէ, քան անոր ամենախոր հիմնաքարը:

ԺԲ.— ՕՐԷՆՔՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Ապա իրաւաբան մը ըսաւ.

— Ի՞նչ ըսել սակայն, Ցէր, մեր Օրէնքներուն մասին:

Եւ ինք պատասխանեց.

— Կը հանդիսանաք օրէնքներ հաստատելով,

Եւ աւելի կը հանդիսանաք՝ զանոնք բռնաբարելով:

Նման տղոց, որոնք ովկիանոսի ափին կը խաղան աւազի աշտարակներ շինելու յարատեւութեամբ, եւ ապա կը քանդեն զանոնք խնդալով:

Բայց երբ կը շինէք ձեր աւազէ աշտարակները, ովկիանոսը ափ կը հանէ ա՛լ աւելի աւազ:

Եւ երբ կը քանդէք զանոնք, ովկիանոսը կը խնդայ ձեզի հետ:

Իրականութեան մէջ, ովկիանոսը միշտ կը խնդայ անմեղին հետ:

Ինչ ըսել սակայն անոնց մասին, որոնց համար կեանքը ովկիան մը չէ, եւ ոչ ալ մարդկային օրէնքները՝ աւազէ աշտարակներ,

Այլ կեանքը ժայռ մըն է, եւ օրէնքը՝ դուր, որով պիտի ուզէնք քանդակել զայն՝ իրենց նմանութեամբ:

digitised by A.R.A.R.@

Ի՞նչ բսել հաշտին մասին, որ կ'ատէ պարտողները:

Եւ ի՞նչ՝ եզան, որ կը սիրէ իր լուծը, համարելով անտառին եղեգներն ու այծեամները մոլորեալ ու թափառական:

Ի՞նչ՝ ծեր օձին, որ չկարենալով փոխել իր շապիկը, միւսները կ'ոբակէ մերկ ու անամօթ:

Եւ դեռ ի՞նչ՝ անո՛ր, որ կանուխ կու գայ հարսանիքի խնճոյքին, եւ յգիտացած ու յոգնած՝ կը մեկնի անկէ, ըսելով, որ խնճոյքները օրէնքի բրնաբարում, եւ հրաւիրեալները՝ օրինազանցներ են:

Ի՞նչ կրնամ ըսել ասոնց մասին, եթէ ոչ սա, թէ անոնք ալ կը կենան լոյսին մէջ, բայց իրենց կռնակը դարձուցած են արեւին:

Անոնք իրենց ստուերները կը տեսնեն միայն եւ այդ ստուերները իրենց օրէնքներն են:

Եւ ի՞նչ է արեւը իրենց համար, եթէ ոչ՝ ստուերներու ձեւաւորիչ մը:

Եւ ի՞նչ՝ օրէնքներու ճանաչումը, եթէ ոչ՝ ծոիլ եւ իրենց ստուերները գծել գետնին վրայ:

Բայց դա՛ւք, որ կը քալէք դէպի արեւը, գետնէն արտացոլուած ի՞նչ պատկերներ կը գրաւեն ձեզ:

Դա՛ւք, որ կը սուրաք հովին հետ, ո՞ր հողմացոյցը կրնայ ուղղութիւն տալ ձեր ընթացքին:

Մարդկային ո՞ր օրէնքը պիտի կապկէ ձեզ, եթէ երբեք կոտրէք ձեր լուծը, բայց ոչ՝ մարդու բանտին դրան վրայ:

Ո՞ր օրէնքները պիտի սարսափեցնեն ձեզ, եթէ պարէք, սակայն առանց սայթաքելու մարդու երկաթէ շղթաներուն դէմ:

Եւ ո՞վ է, որ ձեզ դատի պիտի քաշէ, եթէ պատռէք ձեր հագուստները ու նետէք զանոնք, առանց սակայն լքելու ուրիշներու ճամբուն վրայ:

Ժողովուրդ Օրֆալէզի, դուք կրնաք ծածկել թմբուկը եւ թուլցնել քնաբին լարերը, բայց ո՞վ պիտի արգիլէ արտոյտին երգել:

ԺԳ.— ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Եւ ճարտասան մը ըսաւ.

— Խօսէ՛ մեզի Ազատութեան մասին:

Եւ ինք պատասխանեց.

Քաղաքին դրան առջեւ, եւ ձեր տան մէջ, տեսած եմ ձեզ, եւ կ'երկրպագէք ձեր սեփական ազատութեան առջեւ եւ կը պաշտէք զայն:

Ինչպէս ստրուկներ, որ կը խոնարհին բռնակալի մը առջեւ եւ զայն կը գովաբանեն, երբ ան կը յաջոտէ զիրենք:

Այո՛, տաճարի պուրակին մէջ եւ միջնաբերդի շուքին, տեսած եմ ձեզմէ ամէնէն խիզախները, որոնք իրենց ազատութիւնը կը կրեն իբրեւ լուծ եւ ձեռնակապ:

Եւ սիրտս արիւնած է, որովհետեւ կրնաք ազատ ըլլալ միայն երբ ա՛լ ազատութիւնը որոնելու փափաքը կ'ըլլայ ասպազէն ձեզի եւ երբ կը դադրիք խօսելէ ազատութեան մասին՝ իբրեւ նպատակ եւ լրում:

digitised by A.R.A.R.@

Եւ իսկապէս ազատ կրնաք ըլլալ, երբ ձեր ցերեկներն ըլլան առանց մտահոգութեան, եւ գիշերներն ալ՝ առանց կարիքի ու կսկիծի:

Բայց մա՛նաւանդ, երբ այս բաները պարուրեն ձեր կեանքն ու դուք անոնցմէ յառնէք մերկ ու անկաշկանդ:

Եւ ինչպէ՞ս պիտի կարենաք յառնել ձեր ցերեկներէն ու գիշերներէն վեր, եթէ երբեք չփշրէք այն շղթաները, որոնցմով, ձեր խելահասութեան արշալոյսին, ամրացուցիք ձեր միջօրէի ժամուն շուրջ:

Իրականութեան մէջ ինչ որ ազատութիւն կը կոչէք, շղթաներուն ամենադժանն է, ի՞նչ փոյթ, թէ անոր օղակները փայլին արեւին տակ եւ շլացնեն ձեր աչքերը:

Եւ ի՞նչ է այդ, եթէ ոչ մասնիկներ ձեր ինքնութենէն իսկ, զոր պիտի ուզէիք վանել՝ ազատ կարենալ ըլլալու համար:

Եթէ անտրդար օրէնք մըն է, որ պիտի ուզէիք ջնջել, այդ օրէնքը գրուած էր ձեր իսկ ձեռքերով, ձեր սեփական ճակտին վրայ:

Չէք կրնար զայն սրբել՝ այրելով ձեր օրինագիրքերը, ոչ ալ լուալով ճակատը ձեր դատաւորներուն, եթէ նոյնիսկ անոնց վրայ թափէք ծովերուն ամբողջ ջուրերը:

Իսկ եթէ բռնակալ մըն է, զոր պիտի ուզէիք գահընկէց ընել, նախ ճանչցէք, թէ ձեր սրտերուն մէջ բարձրացած անոր գահը կործանա՞ծ է:

Որովհետեւ ինչպէ՞ս կրնայ բռնակալ մը իշխել ազատ եւ խրոխտ մարդոց վրայ, եթէ բռնակալութիւն մը գոյութիւն չունենայ իրենց սեփական ազատութեան մէջ, եւ ամօթ մը՝ իրենց սեփական հպարտութեան:

Եւ եթէ հոգ մըն է, որ պիտի ուզէիք հեռացնել, այդ հոգը աւելի ընտրուած է ձեր կոզմէ, քան թէ պարտադրուած ձեզի:

Եւ եթէ վախ մըն է, զոր պիտի ուզէիք փարատել, այդ վախին ակը ձեր սրտին մէջ է եւ ոչ թէ վախցնողին ձեռքերուն:

Արդարեւ, ձեր մտերիմ էութեան մէջ ամէն բան կը շարժի յարատեւ գրկախառնումի մը վիճակով. ամէն ինչ, որ կը ցանկաք եւ ամէն ինչ, որմէ կ'երկնչիք. ամէն ինչ, որմէ կը խորշիք եւ ամէն ինչ, որ կը պաշտէք. ամէն ինչ, որ կը հեռապնդէք եւ ամէն ինչ, որմէ կը խուսափիք:

Այս բաները կը շարժին ձեր մէջ, ինչպէս սերտօրէն իրերու զուգորդուած լոյս եւ ստուերի խաղերը:

Եւ երբ ստուերը կը տկարանայ ու կ'ամպոտի, լոյսն է, որ կը հիւծի եւ ստուերը կը դառնայ ուրիշ լոյս մը:

Եւ այսպէս, ձեր ազատութիւնը երբ կը կորսնցնէ իր խոչընդոտները, իր կարգին, կը կաշկանդէ աւելի մեծ ազատութիւն մը:

Թարգմ.
ԵՐ. Տ. ԳԱՐԱՃԵԱՆ

(Շար. 3)

digitised by A.R.A.R.@



Շ. ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ 1890 ԷՆ 1903

Փարիզի Համալսարանի պատմագիտական ճիւղի դասախօս Աստիս Տէր-Մինասեանի երկարաշունչ եւ շահեկան այս աշխատասիրութիւնը մանրամասնօրէն ծանօթագրեալ ներկայացումն է «Օխրանա»յի մէկ գաղտնի տեղեկագրին, Հայ Յեղափոխական շարժման մասին։ Հասարակական ծանօթ գործիչ Դ. Անանունի կողմէ առնուն խորհրդահայ «Նարդ» տարեգիրքին մէջ հրատարակուած տեղեկագրին մասին կատարուած այս ուսումնասիրութիւնը նախապէս լոյս տեսած է Փարիզի Սլաւական ցեղամեջ կեդրոնի պարբերական հրատարակութեան մէջ, քանի մը տարի առաջ։

Յաջորդական համարներով պիտի տանք՝ նախ Ա. Տէր-Մինասեանի Յառաջաբանը իր ծանօթագրութիւններով հանդերձ, ապա բուն իսկ «Օխրանա»յի տեղեկագիրը, Դ. Անանունի սկզբնական հայացումով՝ առաջերնէ, որուն կը կցուին երկին ծանօթագրութիւններ, մէջը՝ Ա. Տէր-Մինասեանի գրիչէն։

Յառաջաբանին եւ գոյգ մասերու ծանօթագրութիւններուն հայացումը «Բազինձ»ի համար կատարած է Յ. Փիւրջեանն։

1890էն մինչեւ 1918, հայերը մասնակցած են Պալքաններէն մինչեւ Միջին Արեւելք եւ Անդրկովկասէն մինչեւ Եգիպտոս տարածուող չըլլանի բոլոր յեղափոխական շարժումներուն։ Անոնք հանդիսացած են, այդ երկիրներուն մէջ, իսկական գարեան գրամատուներ մը, ե՛ւ ազգային, ե՛ւ ընկերվարական շարժումներուն համար։ Բայց իրենց դերը քիչ ծանօթ է արեւմտեան պատմագէտներուն։ Ասիկա՝ բազմաթիւ պատճառներով. լեզուական պատնէշը(1), ապա՝ 1896էն 1914 հայերու խստաբեմ ծառայող Բ. Մի-

(1) Յեղափոխական շարժումի զանազան երեսները շօշափող շատ տարածուն գրականութիւն մը գոյութիւն ունի հայերէնով։ Մատենադարաններու կամ արխիւներու մէջ, ցրը-

digitised by A.R.A.R.@

ջազդայնականի(2) *ձախողութիւնը, յետոյ՝ Առաջին Աշխարհամարտը, 1915ի ջարդերը եւ մեծ տարաղրութիւնը, որոնք գլխատեցին հայութիւնը. ու, վերջապէս, Հայաստանի խորհրդայնացումը, որ խլում առաջացուց հայ պատմագրութեան ընթացքին մէջ*(3)։

Այս ներածականին հետեւելիք փոստաթուղթը գաղտնի անգիկպիր մըն է, ուղղուած, Թիֆլիսի ոստիկանական վարչութեան կողմէ, Մոսկուայի ոստիկանական վարչութեան, 1903 *Փետրուարին։ Անոր շարժառիթ հանդիսացած է Մոսկուայի մէջ կատարուած սպանութիւնը*(4) *հայ հարուստ գրամատէրի մը՝ Իսահակ ժամհարեանի*, 1902 *Դեկտեմբեր* 15*ին։*

Մոսկուայի վարչութեան ուղղուած այս տեղեկագիրը, ըստ երեւոյթին, տարբերուած է, շրջաբերականի ձեւին տակ, ուրիշ վարչութիւններու, որովհետեւ Բաքուի քաղաքապետական արխիւներուն մէջ է, որ անոր մեքենագրեալ մէկ օրինակը գտնուեցաւ, 1918*ին։ Ան թարգմանուեցաւ հայերէնի*

ւած՝ Սիփիւռքի զանազան կեդրոններու տարածքին, այս պատմագրական նախանձիւրը երբեմ չէ օգտագործուած արեւմտեան գաղտնագէտներու կողմէ, որոնք տարբեր ունի նեղդարեան ու միջնադարեան պատմութեամբ, կամ հայ եկեղեցիի, հայկական արուեստի պատմութեամբ են հետաքրքրուած։ Քանի մը եզակի ժամանակակից աշխատասիրութիւններ, անգլերէն կամ ֆրանսերէն լեզուով, կը յղուին այդ ճոխութիւնին։ Լուիզա Նալպանտեան (*«Հայ Ազգագրական Շարժումը»*, Պերլին, 1967) իր աշխատանքը փաստօրէն հազիւ մինչեւ 1896 կը հասցնէ։ Ան՝ ճոխ Ռ. Ցովհաննիսեան՝ *«Հայաստանի Հանրապետութիւնը, I։ 1918–1919»*, Պերլին, 1971։ Այս վերջին երկուքը չեն ուսումնասիրեր հայ յեղափոխական շարժումը ուղղակիօրէն, այլ՝ ունի հայութեան բաղաքական պատմութիւնը ԺԹ. եւ Ի. դարերուն։ Ա. Պէյլէրեան (*«Հայկական Հարցի ծագումը, Սան Սթեֆանոյի դաշնագրէն մինչեւ Պերլինի վեհաժողովը»*, Փարիզ, 1972, մեքենագիր) կ'ուսումնասիրէ Հայկական Հարցին միջազգայնացումը 1878ին։ Ռ. Փայխս (*«Հորհրդային Միութեան կազմաւորումը»*, Գէյմպրիճ, Մասս., 1964) եւ Հրանտ Պատարամեան (*«Հայոց պատմութիւն»*, Փարիզ, 1971) իրենց կարգին կու տան քանի մը թեւադրումներ, բայց սերտաւոր էջեր։

(2) Ըստ Հնչակեան ադիւրներու, Ա. Գ. Հնչակեան կուսակցութիւնը երկրորդ միջազգայնական ընդունուեր է դեռ Փարիզի համաժողովին (1889), եւ յետոյ համաժողովներուն ներկայացուեր է Գիւիսմանի կողմէ։ Դաշնակցութիւնը ընդունուեցաւ Շտութկարտի համաժողովին (1907), իբր առաջին հնչակեան «Օտարանան հատուածի մը», դեռ գոյութիւն չունենցող։

(3) Սիփիւռքի տարածքին, դէպքերու վկաները, պատմաբաններ, լրագրողներ, ուսուցիչներ՝ ունի քանի յիսուն տարիէ ի վեր արձանագրած են մանրամասն ժամանակագրութիւնը (յաճախ ժայրայեղօրէն գատագովական) այս շարժումներուն, — Միքիել Արեւելէն Ֆրանսա եւ Միացեալ Նահանգներ։ Իրենց ընթերցողները եղած են բացառապէս հայեր։ Խորհրդային Միութեան մէջ, պատմագէտները, հայերէնի կողմին, ապտակայտուած են ռանիրէնով։ Բայց իրենց աշխատանքը ունի ճգտած է ժխտելու, քան ծանօթացնելու յեղափոխական շարժումը, որուն ուսումնասիրութիւնը եւ մեկնաբանութիւնը յանախ շատ վտանգաւոր կալուածներ դարձած՝ հանրապետութեան մը մէջ, ուր «նացիոնալիստական» շեղումները միշտ ալ հալածուեցան։ Այսուհանդերձ, պէտք է գանազանել նեցի շրջանը (ուր գիտական աշխատանքներ մարբեան քննադատութեան ենթարկեցին յեղափոխական շարժման ռամիկական անցեալը, խստօրէն, բայց որոշ ստարկայականութեամբ) ստալինեան շրջանէն, ուր լուրիւրը խզուեցաւ միմիայն չարախնիչ եւ զրպարտիչ գործերով։ 1956էն ի վեր, «ազատականացման» ներքոյս, բայց հետեւողական երեւոյթներէն մէկն ալ, պատմագրական դաշտի ընդլայնումն է, անցեալի գոնէ մասնակի «ռեփատանացումով» եւ գիտական մամուլի մէջ ազգային–ազատագրական շարժման եանգրաւանքներու վիճարկումով։ Տե՛ս *«Ռանքեր Հայաստանի արիւնների»*, *«Պատմա–բանասիրական հանդէս»*, *«Բանբեր Երեւանի համալսարանի»*։ Այս յօդուածի ծիրին մէջ կարելի չէ նոյնիսկ եռամատոս մատենագիտութիւն մը տալ հայերէն գործերու՝ հայ յեղափոխական շարժումներուն շուրջ։

(4) Դաշնակցական երիտասարդ անարեկիլի մը կողմէ։

digitised by A.R.A.R.@

եւ հրատարակուեցաւ Երեւանի «Նորք» պարբերաթերթին(5) մէջ, 1925ին։ Ընդհանուր գիծերու մէջ, ան մեղի կու տայ 1890էն 1903 դացող հանգրուանները հայ յեղափոխական շարժումին, այնպէս՝ ինչպէս երեւալու էին անոնք՝ Թիֆլիսէն գիտուած։

Բայց նախ քանի մը տեղեկութիւն՝ այս տեղեկագիրը գտնողին՝ Դաւիթ Անանունի եւ «Նորք» հանդէսին մասին, որոնք, երկուքն ալ, կը շահադրգռեն պատմութիւնը։

Դաւիթ Անանուն(6) (Դ. Տէր Դանիէլեան) ծնած է Ղարաբաղի Նահանդին մէջ, 1875ի շուրջ։ Դեռ աշակերտ՝ դաշնակցական է արդէն։ 1898ին կը տեղաւորուի Բաքու եւ կը դառնայ դրասենեակի պաշտօնեայ Բալախանի մէկ քարիւղի հիմնարկութեան մէջ։ Քսան տարի ամբողջ, Բալախանի եւ Բիբի-Էյբաթի(7) մէջ, կը հետեւի քարիւղի դրամատիրութեան զարգացմանը, կ'ուսումնասիրէ շուրջի հայ, Թուրք, պարսիկ, վրացի եւ առա բանուորութեան կեանքի պայմաններն ու մտայնութիւնը։ Իր դիտողութիւններն ու քննադատութիւնները կ'արձանագրէ բազմաթիւ յօդուածներու մէջ, հայ մամուլի էջերուն։ Նախ՝ դաշնակցական է, բայց Թուխոյ եւ Անդրկովկասի մէջ 1901էն 1902 ծայր տուած բուռն գործադուլները վճռական ազդեցութիւն կ'ունենան իր վրայ, կը հեռանայ իր կուսակցութենէն, զայն նկատելով արգելք՝ ռուսահայութեան դասակարգային-քաղաքական գիտակցութեան զարգացմանը, եւ հայութիւնը բեւեռող միայն Թուրքիոյ հայութեան դատին վրայ։ 1903ին, արդէն մարքսիստ կը նկատէ ինքզինք, առանց սակայն յանկու առա սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան։ Կը մօտենայ հնչակեաններուն, որոնք այդ Թուականին ունին բանուորական կարեւոր հատուած մը Բիբի-Էյբաթի Մանթաշեւ (Անդրկովկասի մեծագոյններէն մէկը) ֆիրմին մէջ եւ կը գործակցին դուռ սոցիալ-դեմոկրատներուն հետ։ 1903ի եւ 1904ի ընթացքին, Դ. Անանուն դասախօսութիւններ կու տայ հնչակեան բջիջներուն մէջ, Թուսնուքի (Գուլկարիա) «Վերածնութիւն» հնչակեան թերթին յօդուածներ կու տայ։ Այնքան վստահութիւն կը ներշնչէ հայ բանուորութեան, որ 1904ի Դեկտեմբերին, մեծ գործադուլին, կ'ընտրուի գործադուլի կոմիտէի անդամ։ 1905ի յեղափոխութեան, սակայն, կը հեռանայ հնչակեաններէն, որոնք, ինչպէս պիտի ըսէ, կրնան «ճառ խօսիլ մարքսիզմի մասին, բայց շղթայուած մնալ ազգայնականութեան՝ Հայկական Հարցին միջոցով(8)։ 1905ի սկիզբը, կը մտնէ հայ բանուորական սոցիալ-դեմոկրատ կազմակերպութեան(9) մէջ, որ ծնած էր հայ մարքսիստներու ներքին կազմա-

---

(5) Տե՛ս «Նորք», 5-6, 1925, էջ 419։ Յօդուածը խմբագրուած է «Ժանդարմական վարչութեան զեկուցումը հայերի յեղափոխական շարժումներու մասին»։ Նիւթական չունի, միայն մանի մը ճարեր. ստորագրուած՝ Դ. Ա. (Դաւիթ Անանուն)։

(6) Տե՛ս «Հայ հանրագիտակ», հրատարակուած՝ Հ. Մ. Գասպարեանի կողմէ, Պուէնոս Այրէս, 1938. նաեւ՝ Դ. Անանուն, «Հնչակեաններուն յարաբերութիւնը Թուրքիոյ յեղափոխութեան ու սոցիալիզմին», «Նորք», 2, 1924, էջ 274-315, ուր հեղինակը կու տայ մանի մը տարբեր տեսակէտ մասնագիտական կենսագրութենէն։ Նաեւ՝ Մէյրի Մարգսեան, «Երկու մարքսիստ մտածողներ՝ ազգայնութեան հարցին», «Ամերիկեան հանդէս՝ արեւելեան եւրոպական պրպտումներուն», Գենտ. 1957, էջ 489-500։ Ցիշատակուած հայ կուսակցութիւններու համար, տե՛ս ստորի վար։

(7) Բանուորական թաղամասեր՝ Բաքուի մէջ։

(8) Դ. Անանուն, «Հնչակեաններէն...», նշուած յօդուածը, էջ 279։

(9) «Սոցիալ-դեմոկրատական բանուորական հայ կազմակերպութիւն»։ Կազմուած Հոկտեմբեր 1903ին, Բաքուի մէջ, «Հայ սոցիալ-դեմոկրատական միութեան» ծիրէն (գոյու-

digitised by A.R.A.R.@

կերպական պատկառումներէն, 1903ին։ Հայ բանուոր դասակարգին ազգային սեփական կազմակերպութիւն առ՝, թէ մանել ռուսական կազմակերպութեան մէջ եւ պայքարել միջազգային դեռնի վրայ։ Դ. Անանուն չուտով կը դառնայ զեկավարներէն մէկը այս կուսակցութեան, որ սակայն երբեք պիտի չըլլայ խմբակէ մը աւելի տարածուն, եւ որուն անդամները իրենք դիրենք պիտի կոչեն մարքսիստ–սպեցիֆիստ(10)։

1905էն 1917, Դ. Անանուն կը դրաղի քարոզչութեամբ եւ լրագրութեամբ՝ միշտ հայկական ծիրի մէջ. միմեանութիւններ կ'ունենայ հնչակեաններու, դաշնակցականներու, մենշեւիկներու եւ համայնավարներու հետ, ե՛ւ դիւղացիութեան, ե՛ւ բանուորութեան, ե՛ւ մշակութային, ե՛ւ ազգային հարցերուն շուրջ, որոնք Անդրկովկասի ընկերվարականներուն կողմէ լրջօրէն ուսումնասիրուած էին։ Իբր ազգային–մշակութային ինքնավարութեան համակիր, 1913ին կը քննադատէ Ստալինը եւ անոր «Մարքսիզմ եւ ազգային հարցը» գրութիւնը, բայց, իր կարգին, խստօրէն կը քննադատուի Ստեփան Շահումեանի(11) կողմէ։ Եւ եթէ «օրինական» մամուլը կ'օգտագործէ, ինչպէս կ'ընեն նաեւ հայ բոլշեւիկները, միւս կողմէ՝ կը խմբագրէ, Բաքուի մէջ, 1909էն 1912, վաղամեռ «սպեցիֆիստ» հանդէսները(12)։ Յանդիսաւոր՝ 1917ի յեղափոխութեամբ, համազործակցականներու հանդէպ իր հետաքրքրութեան ընթացք կու տայ, ուռեղնելով համազործակցական դրոյթներ տարածող թերթ մը(13)։ 1917ի ընթացքին, կանոնաւոր աշխատակցութիւն կը բերէ «Գործ»ին, «գրական, գիտական, ընկերաբանական, քաղաքական» շատ լուրջ ամսագիր մը, որ կը համախմբէ Բաքուի մէջ յառաջդիմական մտաւորականներ եւ դաշնակցականներ։ Այս թուականին, արդէն որոշ համբաւ շահած է իբր պատմաբան–ընկերաբան։ 1915ին, Բաքուի մէջ հրատարակած էր առաջին հատորը իր ուշագրաւ գործին՝ «Ռուսահայերի հասարակական զարգացումը»(14), ուր կովկասահայութեան ընկերա–քաղաքա–

թիւն ունեցող՝ 1902էն 1903) հետացած որոշ տարրերէ, ճախկին դաշնակցականներու խմբակէ մը, Դայլն։

(10) «Սպեցիֆիստ» եզրը հետագային պիտի ստանայ բացառապէս փիտական երանգաւորում, մա՛ճատանդ՝ բոլշեւիկներու գրիչին տակ, եւ նոյնացուի «ճացիոնալիստ»ի հետ։ Դ. Անանունի համար, «սպեցիֆիզմ»ը ազգայնականութիւն չէ, այլ անդրկովկասեան փոքրէն ծնած պահանջը՝ ձայ բանուորութեան տալու իմքնավար դասակարգային կազմակերպութիւն մը՝ ՌՍԴԲԿ ծիրին մէջ (նոյն պահանջը ունէր երէկուան «բունդ»ը)։ Այլապէս հայկական հարցի ուրոյնութիւնը հայ ժողովրդական զանգուածները պիտի ներգրաւեցնող կազմակերպութիւններու գիրկը, որոնք անոնց ուժը պիտի գործածէին ազգային ազատագրութեան համար, շեղեցնելով զանոնք դասակարգային պայքարէն։ Վերջապէս, միշտ՝ ըստ «սպեցիֆիստ»ներու, ժողովուրդները պէտք չէր ունենային իմքնորոշման իրաւունք՝ մինչեւ անգամ, այլ անպայման խմբուէին դաշնակցային պետութեան մէջ։ Տե՛ս Դ. Անանուն, «Ռուսահայերի հասարակական զարգացումը», III, էջ 94–95, Վենետիկ։

(11) Տե՛ս Մ. Մարքոսեան, անդ։ Դ. Անանուն երկու յօդուած կը գրէ Թիֆլիսի դաշնակցական հանդէսին՝ «Նոր հոսանք»ի մէջ, որ խոսարիմ կը ծառայէ նաեւ հայ մենշեւիկներու։ Առաջինը՝ 1 եւ 2 թիւերուն (Մարտ–Ապրիլ, 1913), իսկ երկրորդը՝ թիւ ցին (Օգոստոս 1913) մէջ, խորագրուած՝ «Ազգային հարցը եւ դեմոկրատիան» եւ «Դարձեալ ազգային...»։ Շահումեանի յօդուածը լոյս կը տեսնէ միայն ցանիս 1914ին. «Ազգային կուլտուրական առաջադիմայի մասին» — տե՛ս «Երկեր», հատոր 1957, էջ 271–334։

(12) «Ուղի», 1909ին, ամսագիր. 1911ին՝ «Գոյ», երկշաբաթաթերթ. 1911–12ին՝ «Նոր կեանք», միայն երեք թիւ. 1912ին՝ «Մեր ուղի», մէկ թիւ միայն։

(13) «Վերածնունդ» երկշաբաթաթերթ (1917–18), վեց թիւ միայն։

(14) Ա. հատորը (1800–1870) երատարակուած է Բաքու, 1916ին։ Բ. հատորը (1870–

digitised by A.R.A.R.@

կան զարգացումը կը կապէ Ռուսիոյ ժողովրդավարութեան յառաջընթացին, կը մասնակցի՞, 1918ի Օգոստոսին, Բաքուի Կոմունայի պաշտպանութեան, դաշնակցականներուն եւ հնչակեաններուն հետ, թէ ոչ։ Իր հետքը կը կորսնցնենք այս թուականին, զայն գտնելու համար Երեւան, Հայաստանի անկախ Հանրապետութեան(15) մէջ, Հայկօգնի՝ համագործակցական շարժումի գլխուն։ Կը հիմնէ «Հայաստանի Կոսպերացիա» պարբերաթերթը, որ կը քաջալերուի Դաշնակցութեան կողմէ։ Մարքսիստ դիրքեր պահելով հանդերձ, ան կ'ընդունի անկախութիւնը եւ նոյնիսկ «երկուս» Հայաստաններու միացումը. կը գործակցի դաշնակցականներուն հետ, մանելով Բիւրոյի(16) պաշտօնաթերթի՝ «Ցառաջ»ի խմբագրական կազմին մէջ։ Հայաստանի խորհրդայնացումէն ետք, չ'տարաձայնիր եւ կը դառնայ համայնավարներու ուղեկից։ Կ'աշխատակցի «Նորք»ին, որուն մէջ կը հրատարակէ հայ յեղափոխական շարժման վերաբերող փաստաթուղթեր։ Կը ձերբակալուի եւ կ'աքսորուի Արխանգելսկ, 1927ին (կամ 1928ի՞ն)։ 1935էն ետք կ'անհետանայ։

Հայաստանը խորհրդայնացաւ 2 Դեկտ. 1920ին։ Բայց Դաշնակցութիւնը կրկին իշխանութեան բերող ապստամբութիւնը, 1921 Փետրուարին, մինչ կարմիր բանակը Վրաստան կը մտնէր, յապաղեցուց, քանի մը ամիսով, «մշակութային» յեղափոխութիւնը։ Այս վերջինը, 1921էն սկսեալ, Հայաստանի ու հայաբնակ այլ կեդրոններու (Թիֆլիս, Բաքու, Պաքում) մէջ, պիտի անհետացնէ հայկական հին մամուլը, որ հանդիսացած էր ո՛չ միայն արտայայտութեան գործիքը, այլ՝ հնոցը հայ քաղաքական դիտակցութեան։ Ան փոխարինուեցաւ ստեղծումովը համայնավար նոր մամուլի մը, մեծ ապաքանակով(17), կեդրոնացած մա՛նաւանդ Երեւանի մէջ, մինչ միւս կեդրոնները կը խաւարէին քիչ-քիչ։

Ուրեմն, Երեւանի մէջ է, որ հիմնուեցաւ(18) «Նորք», 1922ի վախճանին, հանդիսանալու համար 20ական թուականներու կարեւորագոյն հանդէսը։ Իր դերով եւ ճակատագրով, անիկա բուական կը յիշեցնէ ռուսական «Կրասնայա Նով» թերթը։

«Նորք»ի խմբագրական կազմին մէջ կը մտնէին անձնաւորութիւններ համայնավար կուսակցութենէն եւ կառավարութենէն. Աշոտ Յովհաննիսեան, Գօրգ Մակինցեան, Աւքանդ Մուսեան, Արտաշէս Կարինեան, ինչպէս նաեւ նոր սերունդի փայլուն քանաստեղծ Զարենցը, «պրոլետկուլտ»ով խանդավառ՝ այդ շրջանին։ Կը հրատարակէր յօդուածներ՝ «Հին խլչեւիկ»-

---

1900)՝ Էջմիածին, 1922ին (գրուած է երկրորդ անգամ, առանց խմբագրանի, որովհետեւ Դ. Անանունի բոլոր փաստաթուղթերը եւ նոթերը փճացեր են Բաքուի «Խմբագրատ»ի շրջանին. շատ նուազ որակաւոր, բան Ա. հատորը)։ Դ. Անանունի անձը եւ գործը խստօրէն քննադատուած են հարիւրամեայ Հայաստանի մէջ, Բ. հատորի հրատարակութեան շրջանին։ Դ. հատորը (1901-1918) հրատարակուած է Վենետիկի Մխիթարեաններուն կողմէ, 1926ին։

(15) 28 Մայիս 1918էն 2 Դեկտեմբեր 1920։

(16) Բիւրոն՝ Հ. Յ. Դաշնակցութեան գլխաւոր մարմինը։

(17) Յետպատերազմեան առաջ, դաշնակցութեան օրինական օրգան՝ «Հորիզոն» օրաթերթը 7էն 8000 տպաքանակով կը հրատարակուի Թիֆլիսի մէջ։ 1922էն սկսեալ, խորհրդահայ օրաթերթերը լայն կը տեսնեն 20-000ով։ Տե՛ս Գ. Լեւոնեան, «Հայոց պարբերական մամուլը», Երեւան, 1934 — վերլուծական շատ արժէքաւոր գրացանկ մը՝ 1794էն 1934, 1580 թերթի անուն պարունակող։

(18) «Նորք», գրական, գիտական եւ քաղաքական հանդէս, Երեւան, պետական հրատարակչութիւն։ Ցարեկան մէկ թիւ — ութը թիւ՝ 1922էն 1928։

digitised by A.R.A.R.@

ներէ՝ Լուկաշինէ (Ս. Սրապիոնեան), Ա. Միասնիկեանէ, Ս. Կասեանէ, գիտնականներէ, լեզուաբաններէ եւ պատմաբաններէ՝ Մ. Աբեղեանէ, Լէոյէ, Աղալլեկեանէ. ինչպէս նաեւ գործեր՝ խորհրդային վարչաձեւին կապուած փայլուն գրագէտներէ՝ Վ. Թոթովենցէ, Կոստան Զարեանէ, Դերենիկ Դեմիրճեանէ, Նայիրի Զարեանէ, Ակսել Բակունցէ, Վաղարշակ Նորենցէ, Գուրգէն Մահարիէ կամ նոր մահացած շատ ժողովրդական գրողներէ, ինչպէս՝ Յովհ. Թումանեան կամ Վահան Տէրեան(19)։ Այսպէս, «Նորք» կ'իրագործէր գժուարին առաջադրանք մը՝ խմբել համայնավար կուսակցութեան շուրջ հին ինտելիգենցիայի վերապրողները, որոնք երբեմն լծուած էին ազգային շարժումին։ «Նորք»ի նպատա՞կը. — ինչպէս որ մեր ներկան եւ ապագան կը ճանչցուին յեղափոխական մարքսիզմի շնորհիւ, նոյնպէս ալ մեր անցեալը պէտք է լուսաբանուի այս նոյն մեթոտի գործածութեամբ...(20)։

Ստեղծելով կապը հինի ու նորի միջեւ, ուրեմն, «Նորք» նախ պատմագիտական կոչումի մը կը ստանձնէր ինքզինք։ Եւ եթէ ունէր գրական եւ գրաքննադատական բաժին մըն ալ («Գրոլեսկուլտ»ի վիճարկում–քննարկում), ինչպէս նաեւ փիլիսոփայական (մարքսիզմ, անստուգածութիւն...), լեզուաբանական (ուսումնասիրութիւններ՝ Մառի շուրջ...), տնտեսագիտական, քաղաքական (Բուհրի գրաւումը՝ 1923ին), անիկա տեղ կու տար, մանաւանդ, պատմագիտական յօդուածներու, որոնց հեղինակները փորձած էին կիրարկել անցեալի (մասնաւորաբար հայութեան անցեալին) քննարկման մէջ տիալեքթիք նիւթապաշտութեան մեթոտները(21)։ Ո՛չ մէկ միատեսակութիւն կարելի էր գտնել թերթին մէջ. յօդուածները աւելի իրենց հեղինակներու կնիքը կը կրէին, անոնց խառնուածքին ու պատրաստութեան, քան հասարակաց գաղափարաբանութեան(22)։ Բացայայտ է, որ թերթը քարոզչական նպատակ կը հետապնդէր, երբ կը ներկայացնէր, Հայկական Հարցին շուրջ, լենինեան թեմաներ(23), կամ կը բացատրէր քիմիականութեան յառաջդիմական բնոյթը, եւ կամ կը փաստարկէր մուսաւաթեան, մենշեւիկ եւ դաշնակցական վարչաձեւերու(24) ազէտալի հետեւանքները՝ անդրկովկասեան զանգուածներու վրայ։ Բայց գովքը չէր վերածուեր պաշտամունքի, իսկ քննադատութիւնը կը մնար զուսպ եւ երանգաւորեալ։ Ցարաբերաբար անկախ այս կեցուածքը պիտի չհանդուրժուէր 1927էն ետք։ «Նորք» պիտի փակուէր։ Իր աշխատակիցներէն մէկ քանին պիտի ձերբակալուէին(25)։ Եւ իր շուրջ

---

(19) «Նորք»ի աշխատակիցներու մէկ մասը «մաքրագործումներու» զոհ գացին. — Զարեանց, Թոքովենց, Բակունց, Լուկաշին, Եւայլն։

(20) «Խմբագրութեան կոչմէն» «Նորք» I, 1922, էջ 5–6։

(21) Երկրորդ թիւն (1923) սկսեալ, «Մօտիկ անցեալից» խորագրին տակ հաւաքուած են բռնադրական շարժման, ընկերային կեանքի, հայ յեղափոխական շարժումներու մասին վկայութիւններ։ Այս բաժնին է, որ կ'աշխատակցի Դ. Անանուն։

(22) Նոյնիսկ երբ համայնավար կուսակցութեան կոչը կը պահանջէ վկայութիւններ բերել 1920 Մայիսի ապստամբութեան մասին, նկատուած՝ առաջին փորձը հայկական պրոլետարիատի՝ իշխանութեան տիրանալու։ Աշոտ Յովհաննիսեան, «Հայաստանի յեղափոխութեան Յուլիսն ու Հոկտեմբերը» խորագրուած յօդուածով մը («Նորք», 2, 1923) կենդանի ու մանրամասնեալ, բայց ճնշական–ճնշադատական զեկուցում մը կը բերէ Մայիսեան դէպքերու շուրջ։ Իր մեկնաբանութիւնները պիտի դատապարտուին 30ական թուականներուն։

(23) Գ. Մակինցեան, «Լենին եւ Հայկական Հարցը», «Նորք», 5–6, 1925։

(24) Շ. Ամիրխանեան, «Քաղաքական կացութիւնն Անդրկովկասում Հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ», «Նորք», 1926։

(25) Առանց կարգին՝ Դ. Անանունը։

digitised by A.R.A.R.@

պահուած լուութիւնը վերջնու մէյն(26) պիտի խզուէր։ Այս անկախութեան արտայայտութիւններէն մէկը (որ յատուկ չէ Հայաստանին, այլ՝ ժամանակաշրջանին ամբողջ) փաստն է, որ «Նորք», 1925ին հրատարակելով Դ. Անանունի գրած փաստաթուղթը, կը ստանձնէր դիմը յիշեցնելու իր ընթերցողներուն՝ հանդուրժանները եւ ծաւալումը յեղափոխական շարժումի մը, ուր քոյրերիկները հեռու են փայլելէ։ Գալով Դ. Անանունի, ան կը մնայ հաւատարիմ՝ հնչակեան եւ դաշնակցական յաճախադէպ աւանդութեան մը(27), մասնանշել, երեւան հանել պետութեան (թուրք կամ ռուս) կեղեքումը, քննադատել անոր բռնակալ բնոյթը՝ յայտնաբերելով գաղտնի փաստաթուղթեր՝ առհասարակ ոստիկանական–կառավարական պաշտօնագրեր։ Հայ յեղափոխականներուն համար, որոնք փայլուն կազմակերպիչներ եւ փրոփականտիստներ եղան, բայց միշտ տեսաբաններ, տեսաբանական հարցերու մասնակցութիւնը պիտի կայանար փաստերու ու վաւերաթուղթերու հաւաքումին, եւ անոնց լայն տարածում մը ապահովելուն մէջ(28)։ Դ. Անանուն կրնա՞ր տեսաբանի հանգամանք տալ ինքնիրեն, բայց այս փաստաթուղթը հրատարակելով եւ անոր եռեւ ծածկուելով(29), պարզապէս չէ՞ հետեւած ներքին խոր պահանջի մը (ինք, որ անդրիմիկասեան յեղափոխական շարժումին սերտօրէն մասնակցած էր)։ — Վկայել անցեալի եւ պատմագրական ճշմարտութեան մասին։

Հայկական շարժումը ներկայացնող այս տեղեկագիրը, ինքնին, բաւական վաստրակ է։ Անպոյն է ու միօրինակ ոճը, դէպքերու շոր ժամանակագրական ներկայացումը, կատարուած՝ առանց գոռմի եւ ընտրութեան, կը փաստեն նեկայութիւնը, իր եռին, Օխրանայի բարձր պաշտօնատարի մը, բծախնդիր եւ երեւակայութենէ զուրկ դիւանակալի մը, որ իր «քարտարանը կը պարպէ» եւ կը պահուրտի ոստիկանական բաժանմունքի հեղինակութեան եռին։

Ոչ մէկ բացատրութիւն՝ բացի ռուսահայերու եւ թրքահայերու եղբայրակցութեան փաստէն, յեղափոխական շարժման իրր պատճառ։ Ոչ մէկ փորձ՝ ճանչնալու ուժերու ընթացքը, որ կ'անցնի հայկական բնակերութեան ընդերքներէն. միայն դասակարգերու առասպելական դաշինք մը՝ կառավարութեան դէմ, մինչ հայ քաղքենիութիւնը հարուածող ահաբեկչութիւնը եւ բռնի հանդանակութիւնները կը փաստեն զոյութիւնը՝ դասակարգային պայքարի որոշ երեւոյթներու։

Սակայն այս տեղեկագիրը հայ յեղափոխական շարժումը կ'ընդգրկէ ոչ միայն իր պատմական ընթացքին՝ գոնէ՝ իր բոլոր փուլերուն մէջ։ Անշուշտ, կուսակցութիւններէն ամէն մէկուն կարեւորութիւնը եւ իրական ազդեցու-

---

(26) Ա. Գասպարեան, «Սովետահայ պատմութեան հարցերը «Նորք» հանդէսի էջերուն», «Բանբեր Հայաստանի արխիւներէն», 2, 1970, էջ 183–189։ Հեղինակը կը վերականգնէ թերթը, ընելով, սակայն, «զտում» մը, որ իսկապէս գրաքննութեան կը յանգի հրատարակուած յօդուածներու վրայ։ Ի մասնաւորի, Դ. Անանունի յօդուածներէն ոչ իսկ մէկը ճշգուած է։ Այսպէս, խորհրդահայ պատմագէտներու ճօտ կը հաստատենք նոյն շահագրգռութիւնը, որ իրենց ռուս պաշտօնակիցներուն է 20ական թուականներու պատմութեան եւ մշակոյթի հանդէպ, թայց նաեւ նոյն զգուշաւորութիւնը՝ իրենց պրպտումներուն մէջ։

(27) Ակնունի, «Սովետաբեր վէրքեր», Ժրնեւ, 1905։

(28) Այս խորհրդածութիւնները կը թելադրէ «Փրօ Արմենիա» (Փրանսերէն, 1900–1908) հանդէսի ընթերցումը. տե՛ս աւելի վաղ, տեղեկագրի նոթ, թիւ 88։

(29) Տեղեկագրին կ'ընկերանան միայն 23 նոթեր, շատ համառօտ։ Բոլորն ալ կը վերաբերին երկրորդական գէպքերու կամ անմեծաւորութիւններու։

digitised by A.R.A.R.@

թիւնը մինչ դեռ չեն դնահատուած ճշդութեամբ։ Այսպէս, Հնչակեան կուսակցութիւնը, շատ ակարացած եւ բաժան-բաժան՝ 1896էն ետք, կը թուի աւելի հետաքրքրել զայն, քան Դաշնակցութիւնը, որ, սակայն, 1903ի ամառուընէ սկսեալ, կովկասահայութեան քաղաքական կեանքին մէջ պիտի դրաւէ գերակշիռ կարեւորութիւն, զայն պահելու համար մինչեւ 1920։ Արդե՞օք ասոր համար, որ Դաշնակցութիւնը, մեծ թիւով երկիրներու վրայ տարածուղ իր կառոյցով, աւելի դժուար դիտելի է Թիֆլիսէն (ուր սակայն կը գտնուի իր կեդրոններէն մէկը...)(30)։ Անո՞ր համար արդեօք, որ ան կը բոլորէ, 1898էն սկսեալ եւ քանի մը տարուան համար, տեղատուութեան շրջան մը(31)։ Սակայն, մա՛նաւանդ, ո՞չ անոր համար, որ Դաշնակցութիւնը նը-ւազ ընկերվարական կը թուի, քան միւսները։ Մինչ, ընդհակառակն, ոստիկանութիւնը շատ մօտէն կը հետեւի քանուորութեան մէջ ծաւալող շարժումներուն, ճշդօրէն նշելու համար հայ սոցիալ-դեմոկրատիայի մը երեւումը, կապուած՝ ռուսականին, եւ անոր զարգացումը, որ լրջօրէն կը մըտահոգէ զինք։ Որքան ալ չնչին՝ թիւով, ան կը զրաղեցնէ Օխրանան, ա՛յն օրէն, երբ քանի մը հազար քանուորներու բազմաց ցոյց մը համարձակած էր տոգանցել(32) իր՝ Օխրանայի կեդրոնին առջեւ, 1902ի Մայիս 1ին։ Տեղեկագիրը յաւակօրէն կ'ընդգծէ ազգային-հայրենասիրական նկարագիրը առաջին երեք կուսակցութիւններուն՝ Արմենական, Հնչակեան եւ Դաշնակցական. բացառապէս հայերէ բաղկացած, մինչեւ ԺԹ. դարու վախճանը՝ անոնք նպատակ ունին միմիայն Թուրքիոյ հայութեան ազատագրումը։ Թշնամանքով կը նշէ բազմերկրեայ կառոյցը՝ տարասփիւռ ազգի մը այս կուսակցութիւններուն, որոնք իրենց ցանցերը ստեղծած են Թուսաստանէն Թուրքիա, Գուլկարիայէն Եգիպտոս, Ժընեւ, Փարիզ, Լոնտոն եւ Միացեալ Նահանգներ։ Մտահոգութեամբ կը հաստատէ 1895էն ետք անոնց ճանչցած միջազգայնացումը, ուրեմն, կապերու եւ յենարաններու ստեղծումը՝ եւրոպական հանրային կարծիքին (ազատական թէ ընկերվարական) եւ ռուս յեղափոխականներու մօտ։ Յեղափոխական շարժման առաջին պառակտումները, ինչպէս նաեւ «Թրքահայ Դատի լքումը, որոշ տարբերու կողմէ (մասնակցելու համար ռուս յեղափոխական շարժումներուն) — այս բոլորը կը կապուին, ըստ իրեն, անդրկովկասեան հայ քանուոր դասակարգի մը երեւումին։

Վերջապէս, տեղեկագիրը կը շեշտէ երկու ամենավտանգաւոր հանգամանքները հայ յեղափոխական շարժումին՝ զինեալացումը եւ ահաբեկչութիւնը, — անկարգութեան ստեղծիչ՝ թէ՛ կայսրութենէն ներս եւ թէ անկէ դուրս։

Տեղեկագրին եզրակացութիւնները. անփոփոխելի, «վերջնական» դրոյթները յարաբերական դիւանագիտութեան 80ական թուականներէ ի վեր. — Հայ յեղափոխական շարժումը անջատական շարժում է. դաւադիր այս շարժումը կը վայելէ հայութեան բոլոր դասակարգերուն համակրանքը. իր քարտերը կը դասաւորուին հայկական դպրոցներուն(33) մէջ, քաղաքներուն եւ եկեղեցին կը քաջալերեն շարժումը՝ նիւթապէս։

---

(30) Թիֆլիսի Արեւելեան Բիւրոն։ Տե՛ս տեղի վար, տեղեկագրի ծոր, թիւ 30։

(31) Այս տեսակէտը պաշտպանուած է Կ. Մամիկոնեանի կողմէ «Հայ սոցիալ-դեմոկրատների մտքերը, 1902-1903», Երեւան, 1969, էջ 11։

(32) Ն. Տեօյէր, «Մասլեն», Փարիզ, 1953, էջ 65։

(33) Հայ դպրոցները փակուեցան 1885ին եւ 1897ին։

digitised by A.R.A.R.@

Այս եզրակացութիւնները կը թելադրեն որոշումը, որ Կոլկասի կառավարիչ Կալիցին իշխանը (փոխարքայ՝ 1897էն 1904, նշանաւոր հայատեաց եւ յեղափոխական) վերջապէս պիտի խլէ նախարար Պլեհէն — գրաւումը («ռուսիֆիկանացումը»՝ պաշտօնական բառով) հայ եկեղեցիի կալուածներուն ու գանձին(34), Յունիս 1903ին։ Փոխանակ անդամալուծելու յեղափոխական շարժումը, ան կը շղթայադերծէ կովկասահայութեան մօտ ազգային բուռն հակազդեցութիւն մը եւ ահաբեկչական անախորժութեանց ալիք մը, քոլոր հայ կուսակցութիւնները մղելով, 1905ին, դէպի անդրկովկասեան յեղափոխութեան ուղին։ Հետաքրքրական է նշել, որ 1903էն 1906 հայութեան Անդրկովկասի մէջ մղած պայքարները են, որ պիտի օժտեն Հ. Յ. Դաշնակցութիւնը, հայութեան այս հատուածին մէջ, ամուր խարիսխով մը եւ գայն վերջնականօրէն մղեն դէպի ընկերվարութիւն(35)։

⁂

Անդրկովկասի, Օսմանեան կայսրութեան եւ Պարսկաստանի բաղդատական ուսումնասիրութիւն մը ի վիճակի պիտի ըլլար բացատրելու, երբեւան հանելով հայութեան տեղն ու ընկերա-տնտեսական դերը այս երկիրներուն մէջ, թէ ինչո՛ւ ան է առաջին շարժողը՝ Արեւելքի մէջ ծաւալող յեղափոխութիւններու շարքին։

ԺԹ. դարու վերջաւորութեան, հայերը կը կազմեն (ըստ առաւելագոյն գնահատումներու) 4 միլիոնոց(36) ազգ մը՝ երեք կայսրութիւններու (օսմանեան, ռուսական եւ պարսկական) եւ համաշխարհային Սփիւռքի մը վրայ տարածուած։ Ըստ առհասարակ ընդունուած վարկածի մը, այս թիւին 2/3ը կ'ապրի Օսմանեան կայսրութեան(37) մէջ։ Միակ ճշգրիտ թիւը՝ ունինք Անդրկովկասի հայ բնակչութեան մասին. — 1.240,000 անձ՝ 1897 թուականին(38)։

---

(34) Հայ Եկեղեցիին վերադարձուեցաւ 1905ի Օգոստոսին։

(35) 1905ի Մայիսին, Հ. Յ. Դ. խորհուրդը, գումարուած՝ Ժընեւ, կը խմբագրէ «Նախագիծ Կովկասեան գործունէութեան» փաստաթուղթը, հրատարակուած Ժընեւ, 1906ին։ Դաշնակցութիւնը կը հաստատէ դասակարգային պայքարի ծաւալումը, կը յայտարարէ ինքզինքի յառաջապահը զրկեալներուն եւ կը ստանձնէ կազմակերպումն ու դաստիարակումը բանուորութեան՝ ընկերվարական ոգիով (էջ 12)։ Կը յայտարարէ, թէ կ'անցնի, Անդրկովկասի եւ Իրանստանի մէջ, ցարականութեան դէմ յեղափոխական պայքարի. կը շեշտէ անհրաժեշտութիւնը՝ իր ուժերը միացնելու յեղափոխական այլ կուսակցութիւններու ուժերուն, եւ կ'առաջադրէ ֆեդերատիվ գործունէութեան յայտագիր մը (Անդրկովկասեան հանրապետութիւն...) եւ տնտեսական ծրագիր մը (հողի համայնացում...)։ 1907ին, Դաշնակցութիւնը արդէն զանգուածային-ժողովրդական կուսակցութիւն է Անդրկովկասի մէջ։ «Մէջ-ազգային Ընկերվար Բիւրոյին ներկայացուած հայ ընկերվարական եւ յեղափոխական կուսակցութեան՝ Դաշնակցութեան տեղեկագիրը» (Շրջաբերգարտ, 1907) կը յայտարարէ, որ կոմիտէներու եւ ամէն դասու խմբաւորումներու մէջ կազմակերպուած շարժիչներու ընդհանուր թիւն է շուրջ 165.000 (էջ 23)։ Այս թիւը հաւանաբար վեր է իրականութենէն. բայց ճիշդ է, որ կուսակցութիւնը, այդ թուականին, կը հաշուէ 21 Կեդրոնական Կոմիտէութիւն (Արեւմտահայաստան, Կովկաս, Պարսկաստան, Պալքաներ, Ամերիկա...)։

(36) Տե՛ս Ա. Գէյլէրեան (անդ. էջ XIX-XXIII), որ յատկօրէն կը ցերկայացնէ հայկական պատմաբանական-աշխարհագրական աղբիւրներու ուսումնասիրութիւնը։

(37) Տե՛ս Հնչակեան ծրագիր, «Հնչակ», Հոկտեմբեր-Նոյեմբեր, 1888։

(38) 1897ի մարդահամար, ճշգրտած Կ. Պարսամեանի կողմէ։ «Հայ ժողովուրդի պատմութիւն», Երեւան 1967, III, էջ 272։

digitised by A.R.A.R.@

Երբէ կրօնքն(39) ու լեզուն(40) մինչեւ այդ թուականը հանդիսացած են այս ցանուցրիւ ազգի անդամներուն միջեւ օրգանական կապ մը, պէտք է նշել նաեւ, թէ որոշ ընկերային կառոյց մըն ալ յատուկ է անոնց. — աղնըւական դասի(41) շղթայութիւնը, գիւղացիական(42) տարածուն հնթախաւ մը, եւ միջին դաս(43) մը՝ աւելի բազմաթիւ եւ աւելի կազմակերպ, քան արեւելեան ուրիշ ընկերութիւններու մէջ։

Գիւղացիութիւնը, առհասարակ, կը մնայ խարխուած հողային այն տարածքին վրայ, որ, անորոշ եղրով մը, պատմական Հայաստան կը կոչուի. ան լայնօրէն կը յորդի նաեւ դուրս այդ սահմաններէն, եռանկիւնի մը մէջ, որ կը տարածուի Արեւելեան Անատոլուի, Սոլահանի եւ Երեւանի նահանգին միջեւ, կազմելով աւելի կամ նուազ խիտ խճանկար մը՝ ընդմէջ մեծ մասամբ մահմեդական ու յաճախ թշնամաբար տրամադրուած ազգաբնակչութիւններու — քիւրտ, թուրք, լազ, չերքէզ, վրացի, պարսիկ, արաբ, ասորի, եւայլն։

«Միջին դաս» եղրը կ'ընդգրկէ շատ այլազան ընկերային տարրեր։ Գիւղական կարեւոր արհեստաւորութիւն մը կը շարունակէ, Հայաստանի գիւղերուն ու գիւղաքաղաքներուն մէջ, արհեստային շատ հին աւանդութիւններ։ «Արհեստը, «Ոսկի ատաբանդան» կոչուած, յաճախ շատ խեղճ եկամուտներ միայն կ'ապահովէ։ Երբեմն, սակայն, անիկա կ'ապահովէ մեծ հարստութիւններ, երբ, Էրզրումի կամ Վանի մէջ, օրինակ, կը գուղորդուի իրեն կարաւանային «մեծ» առուտուրը։

Հայկական բարձր քաղաքակրթութիւն մը կազմուած էր զարերէ ի վեր, Հայաստանէն դուրս, ցամաքային եւ ծովային առուտուրի գլխաւոր քառուղիներուն վրայ՝ Տրապիզոն, Կ. Պոլիս, Իզմիր, Սալոնիկ, Աղեքսանդրիա, աւելի ուշ արտադրելու համար իտալական նաւահանգիստները, Մարսէյլ, Անվերս, Ամսթերտամ, Ռոթերտամ, Լոնտոն եւ Մանչեսթըր։ Վաճառական, գոհարագործ, սեղանաւոր, դրամատէր՝ կը կազմեն Պոլսոյ մէջ «դրամի ազնուականութիւն» մը, որ տեղ կը գրաւէ նոյնիսկ պետական հիմնարկութիւններուն մէջ։ Սակայն, Պոլսոյ եւ շրջակայքի գաղութին 400·000 հայերուն(44) մեծ մասը կը բաղկանայ մանր քաղքենի կամ արհեստաւոր

---

(39) Հայութեան գախչախիչ մեծամասնութիւնը կը պատկանի լուսաւորչական (ինքնավար) եկեղեցիին, որուն մայր կեդրոնը կը գտնուի Էջմիածին, Երեւանի մօտ։

(40) Իրականութեան մէջ, մինչեւ ԺԹ. դարու կէսը գոյութիւն ունի դասական գրաբար լեզու՝ գրաբարը, եւ քանի մը տասնեակ խօսակցական զանազան բարբառներ։ ԺԹ. դարու մշակութային վերածնունդը յատկանշող երեւոյթներէն մէկն ալ՝ գրաբարի ստանդարտական լեզուն է, եւ գրականացումը երկու բարբառներու՝ արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի։

(41) Բացի Զէյթունցի (Կիլիկիա) եւ Զաթարաղի (Անդրկովկաս) լեռնային գրչանոցներէն, հայկական աւատապետական դասակարգը անհետացած է ԺԱ. եւ ԺԴ. դարերուն միջեւ։ ԺԹ. դարու առաջին երրորդէն սկսեալ, ասուտական կայսրութեան մէջ եւ այլ ազնուականութիւն մը ստեղծուած է՝ պետութեան պաշտօն — բայց անհնարին թիւ Արեւելայեցոց։

(42) Ազգաբնակչութեան 80ին 90%ը։ Միջազգային ընկերվար թերբոյին ուղղուած վերոյիշեալ փաստաթուղթին մէջ (էջ 2), Դաշնակցականները կը խօսին 2 միլիոն գիւղացիութեան մասին, 1907ին՝ միայն Արեւմտահայաստանի համար։

(43) Ընկերային այս խումբին թիւը ճշդել աւելի եւս դժուար է, թացի ռուսական կայսրութենէն, ուր վաճառականներու զանազան դասերու ամուսնացանկեր կան, Անդրկովկասեան գլխաւոր քաղաքներուն համար։ Բոլոր դէպքերը (պատմագէտ, օտար ճանապարհորդ...) համաձայն են գո'նէ ընդգծելու՝ եռութիւնը եւ յաջաբերական կարեւորութիւնը այս խումբին։

(44) Ա. Գէյլէրեան, ամդ., էջ XIX։

digitised by A.R.A.R.@

խաւերէ, ինչպէս նաեւ ընչազուրկ «համալշներու ամբոխ մը, որ տնտեսական տագնապը(45) *ասանելակ հաշարներով դուրս նետած է Հայկական բարձրաւանդակէն։*

Ռուս կայսրութեան մէջ, ԺԹ. դարու երկրորդ կէսին ճարտարարուեստական-առեւտրական հայ արդի քաղաքենութիւն մը կը կազմուի՝ Թիֆլիս, Բաքու, Գաթում, Ատրախան, Ռոստով, Օտեսա, Նիժնի-Նովկորոտ, Մոսկուա, Փեթերբուրգ։

Հոս եւս, Արեւելեան Հայաստանի գաւառական շրջանը, գուրկ դրամագլուխէ, ձեռնարկութիւններէ եւ հոգէ՝ պիտի պարպուի իր ամէնէն նախաձեռնող կամ ամենաթշուառ զաւակներէն. արտաքսեալ, որ պիտի կազմէ, անդրկովկասեան ռուս, վրացի, Թուրք եւ պարսիկ բանուորներէ բաղկացած միջավայրի մը մէջ, առաջին անգամ բլլալով՝ հայ բանուոր դասակարգ(46) *մը։*

Աշխարհագրական այս հատումը ժողովրդական եւ ղեկավար խաւերու միջեւ՝ կու գայ բարդուիլ քաղաքական սահմանումներուն պարտադրած բաժա-

---

(45) ԺԹ. դարու սկիզբէն, պատերազմները, արտաքին պարտութիւնները եւ ներքին ապատամբութիւնները, երբոպական պետութիւններու ճնշումը, — այս բոլորը Օսմանեան կառավարութեան կը պարտադրեն արդիականացման քաղաքականութիւն մը։ Մահմուտ Բ. (1808-39) կը բանայ *Թանզիմաթի* շրջանը, որ կը ստեղծէ կեդրոնացեալ դիւանակալութիւն մը եւ հարկային նոր համակարգ մը՝ մնայուն բանակի մը եւ արդիական նաւատորմիղի մը կազմութեան համար։ Այս ուղիներով կը ճնշեն մա՛ճաւանդ հրիստոնեայ *ռայաներու*։ Արեւելեան *վիլայէթներուն* մէջ, ուր հայ գիւղացիութիւնը կը կազմէ բնակչութեան բացարձակ կամ յարաբերական մեծամասնութիւնը, բնահարկերու (կամ — նոր երեւոյթ — դրամական հարկերու...) անհրաժեշտ այլազանութեան կ'աւելցնայ հարկահաւաքման հարստահարիչ այն ձեւը, որ կը կայանայ շրջանի մը հարկը կապալով յանձնելու՝ քաղաքներու, գրեթէ յաճախ ալ հայ կ'ըլլան։ Թրքական վարչամեքենայի մը մուծումը այս շրջաններուն, փոխանակ կառնուելու հաւասական կեանքը, կը բերէ կամայական բռնութիւն եւ կաշառակերութեան սովորութիւններ։ Հակայ խռովութիւններ (զանազան տարբերու ծերին տակ) պետական շտեմարանները հացահատիկի պահեստներէն՝ կը ստեղծեն «արուեստական» ասիր։ Տեղական պարտադիրներու տակ ճնշուած, հայ գիւղացին հալամ մեծ հողատիրոջ կամ իր ազգակից՝ հայ վաշխառուին կը հատուցանէ՝ իր պատառ մը հողով։ Վերջապէս, դէպի Հիւսիս յառաջխաղացը հիւրս վաչկատուն ցեղախումբերու (տե՛ս ստորակագրի նոր 20) կ'աւելցնէ տնտեսական ճգնաժամին՝ կեանքի անապահովութիւնը, սեռային ճախճիրները, կիներու եւ երեխաներու առեւանգումները, որոնք կը խախտեն, զանոնք անհետացնելու ատենան, հիմերը հայ գեղջուկ ճահապետական ընտանիքին։ *Թաչաներ*ուն զէնք կրելը արգիլող օրէնքներ փաստացի անհաւասարութեան կու տան իրաւական հիմ եւ կամայականութիւնը կը հասցնեն մինչեւ դատարան։

Վերջապէս Փոքր Ասիոյ գիւղամաղաքներուն եւ քաղաքներուն մէջ, թալանի «ընտանեաց» մը (նուազ ծանր, քան գիւղերուն մէջ) յարիւին վրայ կ'աւելնայ, ԺԹ. դարու երկրորդ կէսէն սկսեալ, երբոպական (մա՛ճաւանդ անգլիական) ճարտարարուեստական արտադրութիւններու մրցակցութիւնը, որ մահացու հարուած կը հասցնէ հայ արհեստաւորութեան։ Այս երեւոյթէն տուժող խաւն է, որմէ ծնունդ կ'առնէ (աւելի՝ քան որոշ գաւառներու իսկապէս սորկացած գիւղացիութենէն) դէպի Կ. Պոլիս, դէպի Անդրկովկաս եւ նոյնիսկ դէպի Միացեալ Նահանգներ (1880ական թուականներուն) պանդխտութեան շարժումը։

(46) Հայ բանուոր դասակարգը կազմաւորուեր է դանդաղօրէն եւ յապաղումով։ Մինչեւ 20րդ դարու սկիզբը, հայ մամուլին ու կուսակցական այլ հրատարակութիւններուն համար, հայ բանուորը ժամանակաւոր արտագաղթող մըն է, որ երկրի մէջ կը պահէ իր պատուան մը հոգը, կամ, աւելի յաճախ, արհեստաւոր մը, որուն կապերը հայրենի գաւառին հետ՝ դեռ չեն խզուած։ Հայ ազգայ-դեմոկրատներն են, որ անոր մէջ տեսած են պրոլետար մը, առաջին անգամ։ Անդրկովկասեան ճարտարարուեստական կեդրոնները կը խուժեն ո՛չ միայն Երեւանի, Դաւրաթաղի, Ախալքալաքի եւ այլ ճանանցներու հայեր, այլեւ՝ Գարսկոստանի եւ Թուրքիոյ հայ գիւղերէն (մա՛ճաւանդ Մուշ, Պիթլիս, Վան) պանդուխտներ։

digitised by A.R.A.R.@

նումին վրայ եւ կը գոյացնէ որոշ մասնայատկութիւններ հայ յեղափոխական շարժման մէջ. — կովկասահայ յեղափոխականներու ժողովրդապաշտ խաչակրութիւնը՝ զէպի Թուրքիոյ հայկական գաւառները, հայ յեղափոխական շարժման ուրոյն կոչումը՝ հայութեան կազմակերպումը, եւ վերահաստատումը՝ պատմութեան կողմէ խզուած կապերու։

Անվիճելի է, որ Եւրոպայէն է (Ռուսաստան, Գերմանիա, Ֆրանսա, Իտալիա), որ, առեւտրական ուղիներու եւ համալսարաններու միջոցով, հայերը ընդունած են իրենց քաղաքական կազմակերպութիւններուն գաղափարաբանութիւնները եւ բնորոշները (մոտէլ)։

Սփիւռքի մը առկայութիւնը, գաղտնի պայքարի պահանջները, մամուլի օրգաններու եւ, յաճախ, կուսակցական զնկավարութիւններու(47) անհրաժեշտ աեղադրումը Եւրոպայի մէջ — այս բոլորը շարունակած եւ մնայուն դարձուցած են փոխառութիւնները։ Բայց հայ յեղափոխական շարժումը պէտք է քննել Միջին Արեւելքի պատմական զարգացումին ընդմէջէն։ Երեք յատկանիշներ աչքի կը զարնեն այս շարժման մէջ — անոր կանխահաստութիւնը, զինեալանացումը եւ անոր անխզելի կապը՝ ընկերվարութեան հետ։

---

(47) Հնչակեան կեդրոնը կը գտնուէր Լոնտոն, Դաշնակցութեան Արեւմտեան Բիւրոն՝ Ժընեւ։

ԱՆԱՀԻՏ ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ

(Շար. 1)

digitised by A.R.A.R.@

Ն. ԴԻՄԱՔՍԵԱՆ

ԱԾԽԱՏԱՆՔ ԵՒ ՀԱՃՈՅՔ

Մ. Թրոթքրի համաձայն՝ մարդու գլխաւոր բնազդները հետեւեալներն են՝ «Գոյութեան բնազդ, անունի բնազդ, սեռային բնազդ եւ հոտային բնազդ»։

Աշխատանքը, որ կը տարուի այս բնազդներուն գոհացում տալու գծով, ո՛չ միայն կենսական է մարդու ապրելուն եւ յարատեւելուն համար, այլեւ գոհացումի ստացման հետ նոյնանալով՝ կը դառնայ հաճոյք։

Հոգեբիցաբանական արտաձգութիւնները, զորս մարդ կը կատարէ, խորքին մէջ կը ներկայանան իբրեւ նուիրականացումի արտայայտութիւնը այս բնազդներու օրինականացման եւ ներայնացման։ Արդարեւ, այն հոգեբանական խաղը, զոր մարդ կ'ընէ արտաձգումներով եւ այդ արտաձգումներուն հետ նոյնանալով, իր մէջ կը պարունակէ այն բոլոր միւս խաղերը, զորս մարդ կը խաղար անպատմելիօրէն երկար ժամանակներէ ի վեր։

Այս մթնոլորտին մէջ կատարուած բոլոր աշխատանքները, իրենց պատճառած անմիջական հաճոյքին ընդմէջէն, եթէ մէկ կողմէ զուրը կը բանային պատճառական մտածողութեան առջեւ, միւս կողմէ սակայն կը ստանային գերադոյն դաղափարի մը, իդէալի մը, նուիրականացած սրբութեան մը ծառայելու յատկանիշները։

Արդարեւ, նախնական ընկերութեանց մօտ, ներկայի առումով գործ գոյութիւն չունէր։ Նախնական որսորդը կամ ձկնորսը այնքան մը կ'աշխատէր, որքան բանաստեղծ մը կամ մտածող մը կ'աշխատի այսօր, այնքան որ իտէալականութեամբ թաթաւուն էր գործի ապարդիւնը։ Այնտեղ, ուր մարդու ամբողջականութիւնը (մարմին, հոգի եւ միտք համադրութիւնը) գործի լծուած է, կատարուածը գործ չէ, այլ՝ իսկական մէկ աշխատանք, որ համազօր է հաճոյքի։

Գործը կը սկսի աշխատանքի բաժանումով, դերերու ցրումով եւ մասնագիտացմամբ։

Այս հիման վրայ, գլխաւոր երկու երեւոյթ կարելի է զանազանել աշխարհի արեւմտեան պատմութեան մէջ — բանակը եւ եկեղեցին։ Մասնագիտացման առաջին երկու ձեւերն էին ասոնք։ Քրիստոնէութեան մուտքով, երբ բաժանումը կը կատարուէր մարմինի եւ հոգիի միջեւ, երկրային թագաւորութեան գոյութեան պահպանումին մասնագիտացումը կը կատարուէր բանակի եւ երկնային թագաւորութեան նուիրուելու մասնագիտացումը կը կատարուէր եկեղեցիին եւ անոր ընդմէջէն եկող իշխանութեան կողմէ։

Մինչ այդ գոյութիւն ունեցող բաժանումներն ու դասակարգումները տուեալ հաւաքականութեան աւելի պատուական բնոյթ կը կրէին, քան դերերու ցրումի։ Բարձր դասակարգը կը խորհրդանշէր աւելի կատարելութեան ձգտում (թէկուզ եւ ուժով հասած ըլլար այդ հանդրուանին) եւ աստիճանական գարգացումով կատարելութեան ձգտումի նուազում կ'արձանագրէր աւելի ցած դասակարգերու մօտ։ Զորս բնազդները, սակայն, երկու պարագաներուն ալ կը գոհացուէին։ Հասարակ ժողովուրդը դիցարանութեան վերաբաց իտէալականութեան կը շաղախէր նաեւ ազնուականի կերպարը եւ անսակարկ նուիրումով ու հաւատարմութեամբ կը ծառայէր անոր, ոչ իբրեւ գործ, այլ՝ իբրեւ նուիրում։

Այս պատճառով ալ դասակարգային բանավէճեր գոյութիւն չունէին։ Արդարեւ, աստուածային նախախնամութեան կամ կանխատեսութեան ձեւով կը ներ-

digitised by A.R.A.R.@

կայանաբ ա՛յն՝ որ ազնուականը ազնըւական էր եւ ստրուկը՝ ստրուկ։ Ճակատագրապաշտ այս մերձեցումին մէջ պէտք է փնտռել այն իմաստութիւնը, որով մարդ կը դիտակցէր իր վերապրացութեան չափանիշին եւ կը կանգնէր իր կարողականութեանց սահմանին վրայ։ Ճիշդ է, որ հոմէական բանակը իր կարգ մը ակնառու զօրավարները ստացած է ժողովրդային եւ ստրուկ խաւերէն, բայց այս երեւոյթը բացառութիւն ըլլալով հանդերձ, չի հակասեր այն ոգեւորութեան, որով վերապրացութեան չափանիշն է ազնըւականը ազնուական եւ ստրուկը ըստրուկ դարձնողը։

Զարմանալի չէ, ուրեմն, որ առաջին դերիներու ապստամբութիւնը կազմակերպուած ըլլայ Սպարտակոսի կողմէ, քրիստոնէութեան մուտքէն անմիջապէս եւաք։ Քրիստոնէութեան բանաձեւումները, մինչեւ օրս, սիրոյ դաւանանքին ներքեւ կը պահեն մարդերու միջեւ հաւասարութիւն ստեղծելու հանգանակը։

Բայց հաւասարութիւն մը, որ ամբոխի մոլուցքէն ծնունդ կ'առնէ։ Անիկա խէալական հաւասարութիւնը չէ, ուր ամբողջը հաւասարապէս կը ձգտի կատարելագոյն ամբողջին, այլ, ընդհակառակն, կը կոտորակէ, կը բաժնէ, կը ցրուէ մարդկային կարողականութիւնները, եւ մարմինը կը դարձնէ առանց հոգիի, իսկ հոգին՝ առանց մարմինի, եւ այս երկուքէն կը վերցնէ միտքը եւ զայն կը փոխարինէ հաւատքով։ Եւ կարեւորագոյնը՝ կեանքի եւ գոյութեան կենսական բնազդները կը չէզոքացնէ։

Նիցշէ, իր «Հակաքրիստոսը» գործին մէջ՝ կ'ըսէ.

«Ապակռնած կը կոչեմ ամէն անառուն, ամէն արարած, ամէն անհատ, որ իր բնազդները կը կորսնցնէ, որ կ'ընտրէ, կը նախընտրէ ա՛յն՝ որ իրեն կը վընասէ»։

Այլ տեղ մը՝

«Քրիստոնէութիւնը կողմնորոշում կատարած է դէպի ամէն ինչ, որ ցած, գէշ եւ դպկասաւոր է։ Անիկա հակադարձ շարժում մը ստեղծած է զօրաւոր կեանքի եւ գոյութեան բնազդին դէմ»։

Այս ուղղութեամբ եթէ ընթանանք՝ մէկ կողմէ կրնանք ամբաստանուիլ իբրեւ հակաքրիստոնեայ, իսկ միւս կողմէ՝ իբրեւ հնամենի, ազնուական կարգերը ոգեկոչող եւ անոնց կողմնակից անձ։ Եթէ առաջինը ճիշդ է, երկրորդը միայն ոխալ կրնայ ըլլալ։ Ազնուական կարգերը կրնան անհետիլ, բայց իւրաքանչիւր անձ իր հոգիին մէջ պէտք է կարենալ ապրեցնել վերապրացումի եւ ամբողջականութեան ձգտելու իզձը եւ նոյնանալ անոր։

Եւ յետոյ, մեր նպատակը՝ այս օրինակները մէջտեղ նետելու տեսակէտէն, կը կայանայ անոր մէջ, որ նմանութիւն մը կայ անպայման Սպարտակոսի դերիներու ապստամբութեան եւ քրիստոնէորդ դարը կանխող խուժանային տրամադրութեանց մէջ։ Եթէ առաջինը կը մեկնէր քրիստոնէութեան քարոզած սկզբունքներէն եւ տակաւին պատմական փորձառութեան ակնոցով չէր դիտած անոր հետեւանքները, երկրորդը՝ քսան դար շարունակ ապրած էր երկփեղկումի, ներքին երկպառակութեան եւ բնազդային իզձերը յետ մղելու դիրքին մէջ։ Եթէ առաջինի պարագային սկզբունքները տակաւին ներկայացած չէին, երկրորդի պարագային՝ ներայնացումը կատարուած էր այնպիսի ուժգնութեամբ, որ վերստին ամբողջական դառնալու իր ճիգին մէջ, չէր կրնար, Նիցշէի բառերով, քրիստոնէութենէ վերցուած ապականած, ցած, գէշ եւ պակասաւոր նկարագրային գիծերը չցուցաբերել։

Փաստը ա՛յն է, որ նոյնինքն քրիստոնեայ եկեղեցին երբ խորաններէ երկնային թագաւորութիւն կը քարոզէր, միաժամանակ անիկա երկրի վրայ կը հիմնէր թագաւորութիւն մը, որ հաստատուած էր կայքի, չէնքի, իսկ հետագային՝ աւատապետական դրոյթի վրայ։ Եղան շրջաններ, երբ եկեղեցին իր ենթակայութեան տակ առաւ ամբողջ երկիրներ։ Անգլիոյ պատմութիւնը հարուստ է նմանօրինակ պարագաներով։

Ճիշդ այս երկուութիւնը, սակայն, դրսեւորուեցաւ միջնադարեան երկու մը-

digitised by A.R.A.R.@

տածողութեանց ընդմէջէն։ Ս. Օգոստինոս հետեւեցաւ Պղատոնի օրինակին եւ Ս. Թոմաս Ակինացին հետեւեցաւ Արիստոտելի օրինակին։ Բայց երկուքին ալ մտածողութեանց մէջ կը տիրապետէր քրիստոնէութեան լոյն չունչը եւ եթէ Ս. Օգոստինոս իր «խոստովանութիւնք»ուն մէջ պղատոնական հարցումներ կ'ուղղէր Աստուծոյ, հարցէ դուրս էր, որ ան կարենար կորանցնել Աստուծոյ հանդէպ իր հաւատքը։ Ինչ որ ասիք տուաւ Պղատոնի մտքին եւ Արիստոտելի յառաջ մղած նիւթապաշտական մեկնաբանութիւնները դարձուց օրինական պատկանելիութիւնը նոյնինքն եկեղեցիին կառավարչական եւ անտեսական, ինչպէս նաեւ՝ քարոզչական գործունէութեանց գիտակցումն։

Այս ամէնուն մասին կը խօսինք, որովհետեւ եկեղեցիին դերը մեծ եղաւ ո՛չ միայն մինչեւ քսաներորդ դար հասնող մարդու պատմութեան եւ մարդու կազմութեան մէջ, այլեւ ուշադիր ակնարկէ չի վրիպիր ա՛յն՝ որ առանց քրիստոնէութեան նախատուեալներուն, ո՛չ միայն քսաներորդ դարու ամբոխը գոյութիւն պիտի չունենար, այլեւ՝ իբրեւ յեղափոխութիւն յաջողելէ եռք, իբրեւ գրոյթ հաստատուելու մէջ համայնավարութիւնը դժուարութիւններու պիտի հանդիպէր, եթէ քրիստոնէութեան «քարբարոսները դիմագրաւելու» (նիցչէ) գիտական մերժեցման եղանակները օգտագործած չըլլային։

Ինչո՞ւ այս ամէնը, ոակայն։

•

Մեր տրամադրութեան տակ ներկայիս ունինք երկու կոտորակումի երեւոյթ։ Նիւթապաշտականը՝ ի դէմ իդեալականին, եւ մասնատումը՝ ի դէմ ամբողջին։

Իտալական վերածնունդէն եռք սկըսած պատմութեան թաւալքը ընթացքը ո՛չ միայն աւելի կոտորակում ստեղծեց ճարտարարուեստի և գին երկրագործութեան տարած յաղթանակին շնորհիւ, այլեւ աւելի եւս հեռացուց ճարդկութիւնը արմատականէն։ Իմաստասէրներու ընդմէջէն փոխանցուող գաղափարները խոր ազդեցութիւնը կը կրէին քըրիստոնէութեան՝ սկսելով Տէքարթէն եւ Փասքալէն։ Միակ իմաստասէրը, որ կրցաւ իսկապէս խորանալ հարցերուն մէջ, եղաւ Սպինոզան, որուն որոշ հեռաւորութենէ հետեւեցաւ նաեւ Հեկել։ Եւ եթէ Սպինոզայի գաղափարները, արդէն իսկ նպատակասլաց եւ պատճառականութեան հիման վրայ ընթացող քաղաքակրթութեան մը մէջ տեղ չունէին, ապա Հեկել կ'արժանանար սխալ ըմբռնելու եւ մեկնաբանուելու ճակատագրին։ Այս երկուքէն դուրս բոլոր մտածողութիւնները եղան քրիստոնէութեամբ թաթաւուն։ Նոյնիսկ Մարքս եւ Ֆրէյտ պիտի չկարենային երբեւիցէ յառաջ մղել իրենց գաղափարները, եթէ չորդեգրէին բողոքականութեան գործնապաշտութիւնը եւ կաթողիկէ քրիստոնէութեան դիւանակալական, ինչպէս նաեւ՝ գաղափարատրանական սկզբունքները։

Այս ձեւով ստացած կ'ըլլանք բազմաթիւ խնդիրներ, որոնք երկու անյայտ ունին եւ անյայտներէն մէկը միայն կարելի է լուծել ներկայ պայմաններուն տակ։

Այդ խնդիրներէն մէկն ալ գործի եւ հոգեյքի միջեւ ստեղծուած պատուարն է։

•

Գոց գրոյթի կարօտը (nostalgie), երեւի մինչ ալ պիտի արտայայտուի, հակառակ տիրող ապականութեան եւ մասնակիացումին։ Անարդարութենէն սկսեալ մինչեւ մեր օրերը հասնող պատմութիւնը գոց գրոյթներու պատմութիւն է։ Կը սկսի բացուելու առաջադրանքով եւ հուսկ ապա՝ գրոյթ դառնալուն հետ կը գոցուի։ Եւ եթէ գրոյթը մարդէն սկսաւ իրրեւ Անդրոկին, ապա այս պահուն դարձեալ ունինք գրոյթ մը, որ իր ճիշդ կէտով դարձեալ գոց գրոյթի մը վերածուած է։ Օրինակներ՝ արեւմտեան քրիստոնէական եկեղեցի, Ֆրանսական Յեղափոխութիւն, Ամերիկեան Յեղափո-

digitised by A.R.A.R.@

խութիւն եւ երբեք չգործադրուած սահմանադրութիւն, բոցոքական եկեղեցի, ֆորհրդային Միութիւն։ Եսի մարդ։

Լը Գոն կ'ըսէ. «Պատմութեան մէջ երբեմ չեմ հանդիպիր յեղափոխութեան մը, որ արտադրած չըլլայ արդիւնքներ, որոնք բացարձակ կերպով անոր հեղինակներուն հետապնդած նպատակին հակառակը եղած չըլլան»։

Դարձեալ՝ «Յեղափոխութիւններ, որոնք կը սկսին, աւելի յառաջ արդիւնքն են հաւատալիքներու, որոնք վերջացած են»։

Դարձեալ եւ այս անգամ մշակութային դէմքի վրայ՝ «Օրէնքները հաստատուն հիմերու վրայ կը դնեն սովորոյթները, բայց հազուադէպօրէն միայն կերպնան ստեղծել զանոնք»։

Դարձեալ եւ այս անգամ անհատական դէմքի վրայ՝ «Մարդ իր խելացութեամբ չ'առաջնորդուիր, այլ՝ իր նկարագրով»։

Այս ամէնէն ետք փորձենք Եսի մարդու նկարագիրը գտնել այն պատկերին մէջ, զոր արհեստագիտական յառաջդիմութիւնը պիտի ստեղծէ անոր համար։

Այսինքն՝ Եսի մարդը, մասնագիտացումի, մանհատի, անհատապաշտութեան, զոց դրոյթի եւ չատ մը այլ նկարագրային թէ հոգեբանական տուեալներու արդիւնք է, եւ կ'աշխատի առանց իր ամբողջութիւնը գետեղելով իր գործին մէջ, այլ՝ իրմէ մաս մը կը տանի գործատեղի, մաս մը կը գետեղէ իր տան մէջ, մաս մը՝ խաղի մէջ, մաս մը՝ չափուած-ձեւուած հանոյքի մէջ, մաս մը՝ ուղղալուաց քարոզչութեան մէջ։

Ի՞նչ պիտի պատահի այս մարդուն, երբ աշխատանքի հարկադրանքին տակ պիտի չգտնուի այլեւս իրրեւ մէկը, որ կ'օգտուի արհեստագիտական յառաջդիմութեան պարգեւած բարիքներէն։

Պիտի ունենայ ահագին ժամանակ զբաղելու համար, ինչո՞վ։ Հանոյք պիտի տանայ ի՞նչ բանէ։ Ֆիզիքապէս պիտի չյոգնի։ Ինչպէ՞ս պիտի վատնէ իր ուժականութիւնը։

Իր կեանքէն ներս գոյութիւն ունեցող այս փոփոխութիւններուն իրրեւ արդիւնք՝ թերեւս գոյութիւն ունենայ նաեւ նկարագրային փոփոխութիւն մը։ Ի՞նչ ուղղութեամբ։ Դէպի մարդ մեքենա՞յ։ Ի՞նչն է, որ մարդը կը դարձնէ մարդ։ Ի՞նչ ձեւով ան պիտի դառնայ ամբողջական եւ առողջ բնազդներով օժտուած ա՛յն մարդը, որուն մասին կը խօսի Նիցշէ։

Եւ հաւաքականութիւն մը, որ կազմրւած է այս տեսակ մարդոցմով, ի՞նչ հաւանականութիւն ունի իրրեւ մարդկային հաւաքականութիւն ապրելու։ Ի՞նչ է դիտական եւ արհեստագիտական յառաջդիմութեան վերջ բանին մարդկութեան համար, որոշ հաւաքականութեան մը համար։ Ի՞նչ արժէք՝ թէ անտեսական ներդրումները ի՞նչ ձեւով կը կատարուին, երբ տուեալ երկրի մը քաղաքացին, քաղաքացիական զգացումներէ ո՛չ միայն ամբողջութեամբ զուրկ է, այլեւ իր կեանքը, ապրիլը անգամ արուեստական եւ բեռ կը թուի անոր աչքին։

Արհեստագիտական յառաջդիմութիւնը արագացուցած է կեանքի թափը եւ այդ թափը մինչ այդ իրարմէ անտեսանելի կերպով հեռու մնացած հակադրութիւնները ի մի բերած է թէ՛ հաւաքականօրէն, թէ՛ անհատականօրէն։ Ինչպէս գոյները երբ արագ պտոյտ կատարեն՝ կը դառնան մէկ գոյն, նոյն երեւոյթը կը կրկնուի հակադրութեանց պարագային։ Հարց է, թէ այս պատկերը կը պատշաճի՞ մարդկային իրականութեան։ Դէպքերու արագ թաւալումը եւ մարդու մտքի դերարթնութիւնը պիտի ստեղծե՞ն մինչեւ հիմա գոյութիւն ունեցող հակադրութեանց համադրումը։ Իսկապէս հակադրութիւններ կա՞ն, կայի՞ն։

Պիտի փորձենք այս ամէնուն պատասխանել առանձինն։

Ն. ԴԻՄԱՔՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ն. ՉԱՐԽՈՒՏԵԱՆ

ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ ԵՒ ԴԻՄԱԳԻԾԸ

Քննադատելը մարդուս կարեւորագոյն յատկութիւններէն մէկն է։ Քննադատելը խծբծել չէ, այլ մասնանշել գործի մը յատկութիւնները եւ թերութիւնները՝ բոլորին կողմէ ընդունուած օրէնքներէ մեկնելով, եւ դարձին այդ առաւելութիւնները հրամցնել իբր օրինակ ժամանակակից եւ գալիք սերունդներուն։

Եթէ մէկդի դնենք այն բոլոր գործերը, որոնց չարժառիթը եղած է նախանձը եւ կողմնակալութիւնը, այսինքն՝ խծբծանքը, որ ի զօրու էր Հոմերոսի օրերէն մինչեւ ժԹ. դար, կրնանք ըսել, որ քննադատութիւնը՝ լուրջ եւ անկողմնակալ քննադատութիւնը ձեւ առաւ ժԹ. դարուն եւ դարձաւ գրական սեռերէն մէկը։

Որպէսզի սահմանենք արդի քննադատութիւնը, պէտք է նախ գիտնանք, թէ ի՞նչ է աւանդական քննադատութիւնը։

Աւանդական քննադատութիւնը գործ մը վերլուծելու, անոր բաղադրիչ տարրերը մասնահատելու եւ անոր արժէքին համեմատ վճիռ մը արձակելու արուեստն է։

Քննադատը կը նկարագրէ իր ուսումնասիրած գործին նիւթը եւ ձեւը, կը մասնանշէ անոր հեռաւոր ու մօտիկ ազբիւրները, ընդհանուր գաղափարը, յատակագիծը, մասերուն առընչութիւնը, լեզուին եւ ոճին յատկութիւնները։

Քննադատը կ՚ուզէ մասնանշել նաեւ գործին եւ հեղինակին յարաբերութիւնները գանազան տուեալներու հետ, որ կրնան ազդած ըլլալ ստեղծագործութեան վրայ։ Այդ տուեալները կը կազմեն հեղինակին ցեղը եւ մշակոյթը, միջավայրը եւ ժամանակաշրջանը։

1. Ցեղը եւ մշակոյթը։— Որոնք արդիւնքն են հեղինակի ցեղային պատկանելութեան եւ ազգային ու մշակութային ժառանգութեան։

2. Միջավայրը։— Հեղինակի ապրած երկրին կլիման, աշխարհագրական վիճակը՝ լեռ, դաշտ կամ ծով։ Նաեւ այդ միջավայրին մարդկային կողմերը, բարքերը, սովորութիւնները, հաւատալիքները։

3. Ժամանակը։— Այն պահը, երբ գործը ձեւ կ՚առնէ ու կը յղացուի։

Այս տեսութեան գլխաւոր պաշտպանն էր Հիփոլիթ Թէն։ Սակայն անոր հակառակորդները զայն կը մեղադրեն այն տիրութեամբ, որ այս բոլորին մէջ մոռցած է ամէնէն կարեւորը՝ հեղինակին անհատականութիւնը։

Այս շրջագիծին մէջ, սակայն, կը տիրէ ըմբռնումի ճոխ այլազանութիւն։ Իւրաքանչիւր քննադատ ունի մօտեցումի իր ուրոյն եղանակը։

digitised by A.R.A.R.@

Այս տեսակէտէն կարելի է դասակարգել պատմական քննադատութիւնը, կենսագրականը, վարդապետականը, յարաբերականը, դիտականն ու տպաւորապաշտը։

Իսկ ժամանակակից քննադատութեան մէջ կը հաշուուին մարքսիստ քննադատութիւնը, հոգեվերլուծականը, գոյութենապաշտը, ձեւապաշտը, կառուցապաշտը, եւայլն, որոնցմէ զուրս կը մնայ, այսպէս կոչուած՝ նոր քննադատութիւնը։

Հոս տեղին է յիշել քանի մը մեծ քննադատներու անունները՝ Սենթ-Պէով, Հիփոլիթ Թէն, Ժիւլ Լոմեթր, Էմիլ Ֆագէ, Կիւսթաւ Լանսոն, Թիպոտէ, եւայլն։

Մեր նախորդ էջերուն մէջ արդէն խօսեցանք աւանդական քննադատութեան մօտեցման եղանակին մասին, որուն դէմ կը ծառանայ նոր քննադատութիւնը։

Այդ ծառացումը այնքան ալ նոր չէ։ Աւանդական քննադատութեան դէմ նետ արձակած ու սուր ճօճած են կարգ մը գրողներ, որոնք այսօր դասական կը նկատուին, ինչպէս Անտրէ Ժիտ եւ Փօլ Վալերի, որոնք կը նկատուին նոր քննադատութեան նախակարապետներ։

Անոնց գլխաւոր թիրախը Հիփոլիթ Թէնն էր, որ հեղինակի մը հանճարը կը նկատէր արդիւնքը ցեղին, միջավայրին եւ ժամանակին, առանց նկատի առնելու անոր անհատականութիւնը, ստեղծագործելու ուժը։ Մինչդեռ, կը գրէ Անտրէ Ժիտ. «Ձիշդ է, որ հանճարեղ գրագէտին եւ իր ժամանակին միջեւ գոյութիւն ունի հանգիստութիւն մը։ Սակայն հանճարեղ գրագէտը կը գանգատուի իր ժամանակակիցներու թագմութենէն, եւ հանճարդ գործը կը գերազանցէ իր ժամանակը տեսի՛ բացայայտ կերպով։ Եւ ինքնադատը պէտք է գրաղի այն գործերով, որոնք կը գերազանցեն իրենց ժամանակը եւ միջավայրը»։

Ժիտ եւ Վալերի հակառակ են յանձնառու քննադատութեան, որ գործին մէջ կը փնտռէ այնպիսի պայմաններ, որոնք օտար են այդ գործին։ «Արուեստագէտը, — կը գրէ Ժիտ, — պէտք է կանոնաւորէ իր գործը եւ ոչ թէ զինք շրջապատող աշխարհը»։ Եւ կ'աւելցնէ. «Մառը կը դատուի իր տրուած պտուղէն»։ Իսկ Փօլ Վալերի կ'արժադանդէ գրիչէ նոյն գաղափարով. «Մառի մը պտուղներուն համը կախում ունի ոչ թէ զինք շրջապատող բնութեան տեսակէն, այլ՝ ենթահողին անտեսանելի հաստութենէն»։

Գրական գործը պէտք է ներկայանայ իբրեւ մասնայատուկ աշխարհ մը, տարբեր՝ ուրիշ որեւէ աշխարհէ, իր պարունակածով եւ իր ժիստածով։ Բայց այդ աշխարհը ունի արարող մը, որ հեղինակն է։ Եւ արարողը չի կրնար բացակայ ըլլալ իր գործէն։

Գօտէի «Զարի ծաղիկներ»ը հառորին յառաջաբանին մէջ, Ժիտ կը գրէ. «Բայց ո՞ւր գտնել, եթէ ոչ բանաստեղծի հոգիին մէջ, այս այնքան հարազատ մեղեդիին բացատրութիւնը»։

Արդի քննադատութիւնը յեղաշրջելով այդ հարցումին տարբերը, պիտի ըսէր. «Բայց ո՞ւր գտնել բանաստեղծի հոգին, եթէ ոչ այդ հարազատ մեղեդիի մէջ»։

Ուրեմն, քննադատութեան առջեւ կը բացուին երկու ճամբաներ, երկու մեթոտներ։ Առաջին ճամբան աւանդական մեթոտն է։ Քննադատը գործը կը բացատրէ մեկնելով հեղինակին կեանքէն, խառնուածքէն եւ, ինչու չէ, շրջապատէն, օրուան մտաւորական մթնոլորտէն։

digitised by A.R.A.R.@

Երկրորդ ճամբան, որ արդիական մեթոտն է, կը փորձէ գործէն մեկնելով բացատրել հեղինակը։

Աւանդական քննադատութեան համար հեղինակը մարդ մըն է, որ ինքզինք կը պատմէ, իր ներաշխարհը կու տայ։ Հարկաւ այդ մարդը կըրնայ կեղծել, ծպտուիլ, ստել, ինքզինք ներկայացնել իրականութենէն տարբեր կամ կրնայ սխալիլ։ Այն ատեն քննադատը դործի կ'անցնի, կը քննէ անոր ժամանակակից արխիւները, կը դիմէ հաւատի աղբիւրներուն եւ վերտահելի վկաներու եւ կը ներկայացնէ հեղինակին իսկական դիմադիծը։

Փոլ Վալերի հակառակ է այս գործելակերպին.

«Ի՞նչ կարեւորութիւն ունի հեղինակի մը կենսագրութիւնը։ Ի՞նչ կարեւորութիւն ունի հում նիւթը, որ թոյլտու տարողութեան մէջ է։ Զիս խանդավառողը տաղանդն է, այլափոխելու կարողութիւնը։ Աշխարհի մեծագոյն կիրքը, կեանքի մը ամենէն յուզիչ միջադէպերը չեն կրնար ստեղծել գեղեցիկ ոտանաւոր մը»։

Փոլ Վալերի կը շարունակէ.

«Մեծ նշանակութիւն չունի ըսել, թէ այսինչ պոեմը եւ այսինչ հռմանուազը գործն է Վիրգիլիոսի կամ Մոցարթի, որովհետեւ ստեղծագործող ուժը անուն չունի։ Հեղինակներուն մարդկային հանգամանքը չէ, որ անոնց կ'ապացոյէ արժէք եւ տեւողութիւն, այլ՝ մարդէ մը ունեցի ըլլալու իրենց հանգամանքը»։

Եթէ ուզենք քննադատութեան այդ երկու ճամբաները, այդ երկու տեսութիւնները բնորոշել քանի մը բառով, կրնանք ըսել հետեւեալը.

Առաջին տեսութիւնը *կը պնդէ, որ գործը ստեղծագործութիւնն է հեղինակին, ուստի՝ գործը բացատրելու համար պէտք է ճանչնալ հեղինակը իր բոլոր մանրամասնութիւններով։*

Երկրորդ տեսութիւնը *կը պնդէ, որ գործը անկախ էութիւն մըն է եւ զայն բացատրելու համար անհրաժեշտ չէ ճանչնալ անոր հեղինակը, այսինքն՝ մարդը։ Որովհետեւ, գրողը կը գտնուի հեղինակէն, մարդէն տարբեր մակարդակի մը վրայ եւ գործը ուսումնասիրելով կարելի է հասկնալ ո՛չ թէ հեղինակին ինքնութիւնը եւ կեանքը, այլ՝ իր կայութիւնը, ստեղծագործած պահուն։*

Հարկաւ լաւագոյնը պիտի ըլլար միջին ճամբայ մը, որովհետեւ ստեղծագործողը պարզ ծառ մը չէ, որուն յատկանիշներէն կարելի ըլլայ հանուցնել արտադրելիք պտուղը. անոր ներաշխարհը յարափոփոխ է, եւ հոգեվիճակը՝ այլազան։

Միջին ճամբան պիտի ըլլար ընդունիլ, որ եթէ գործը ստեղծագործութիւնն է հեղինակին, միեւնոյն ատեն հեղինակը ստեղծագործութիւնն է իր գործին։ Այսինքն՝ գործ մը չկամ՝ հեղինակը արդէն իր մտքին մէջ երեւակայած է անոր մանրամասնութիւնները, ընթացքը, ըսելիքը, բայց գրելու պարագային ան կը բախի լեզուին, որ չի կրնար հարատեւորէն պատկերացնել իր միտքը, ուստի՝ կը ստիպուի իր միտքը փոխել, յարմարելու համար լեզուին։

Այս իրողութիւնը չէր վրիպած Անտրէ Ժիտի եւ Փոլ Վալերիի նկատողութենէն, որոնք գրելու արուեստը կը բանաձեւեն գրեթէ նոյն բառերով. «Կեղծիքը արուեստի պայմաններէն մէկն է», կ'ըսէ Ժիտ։ Իսկ Վալերի կ'արձագանգէ. «Գրականութեան մէջ ճշմարիտը անկարելի բան մըն է»։ «Որովհետեւ գրականութիւնը մարդու մը ստեղծագործութիւնը չէ, այլ՝

digitised by A.R.A.R.@

հեղինակի մը եւ լեզուին գործակցութեան արդիւնքը», կամ, *ինչպէս կը բացատրէ Անորէ Ժիտ.* «Արուեստի գործ մը միշտ ալ յուզումի մը արտայայտութեան արդիւնքը չէ: Արուեստի գործին հաւանի նիւթը,— գոյները, հնչականութիւնը, բառերը, կշռոյթները, քարը, կաւը — կրնայ արուեստագէտին փոխանցել ստեղծագործելու ներշնչումը»:

Ամէն չրջան ունի իր նոր քննադատները, որոնք, ժխնելով նոր տըւեալներէն՝ կը ժխտեն իրենց նախորդներուն եւ ժամանակակիցներուն տեսութիւնները:

Իսկ մեր օրերու նոր քննադատութիւնը իր տոքերը ամուր դրած է երկու տուեալներու վրայ, որոնք կը կոչուին հոգեվերլուծում եւ լանկած:

Հոգեվերլուծումը գրական կամ արուեստի գործը կը բացատրէ *իբր ձգտումին բեմադրութիւնը: Ֆրէօյտ այս եզրերը կը բացատրէ հետեւեալ ձեւով.*

«Սկզբունքով արուեստագէտը մարդ մըն է, որ կռնակ կը դարձնէ իրականութեանէն եւ իր էռոթիք իղձերն ու ձգտումները կը փոխադրէ անընդհատ աշխարհի մը մէջ: Բայց ան կը գտնէ անընդհատ աշխարհէն իրականութեան վերադառնալու ճամբան եւ շնորհիւ իր ունեցած ձիրքերուն, կը յաջողի այդ երազներուն տալ իրականութեան մը նոր տեսակի ձեւ մը, որ մարդոց աչքին կը հանդիսանայ իրականութեան թանկագին պատկերները: Եւ ձեւով մը արուեստագէտը իսկապէս կը դառնայ հերոսը, թագաւորը, ստեղծագործը, այսինքն՝ ա՛յն մարդը, որ կ'ուզէր ըլլալ...»:

Սակայն պէտք է նկատի ունենալ, որ հոգեվերլուծումը, գործին ընդմէջէն, կը կեդրոնանայ արուեստագէտին վրայ: Գործը չէ ուսումնասիրուած իբր գրական անգատանին մաս կազմող տարր մը, այլ՝ իբր ենթաշխարհին արտայայտութիւնը, ուրկէ անոր տարբերութիւնը կրաւ քննադատութենէն, որ կը զրաղի գրելու գործողութեամբ:

Սակայն փորձեր կատարուեցան հոգեվերլուծումը կիրարկելու գործերու քննադատութեան մէջ եւ այս գործողութեան տրուեցաւ հոգեբնադատութիւն անունը: Այս ճիւղը զարգացնող գլխաւոր մտաւորականները կը կոչուին Շարլ Մուրոն, Վեզէր եւ, մ'նուանդ՝ Լաքան:

Առաջին երկուքին դրոյթները կը մնան հոգեվերլուծումի սահմանէն ներս, երրորդը միայն՝ Լաքան, յաջողած է գտնել հոգեվերլուծումը եւ գրականութիւնը քննադատելու հասարակ յայտարարը, տիեզերական բանալին, այսինքն՝ լեզուն, լանկաժը:

«Ֆրէօյտը կարդալով կ'իմանանք, որ անոր ենթաշխարհը ոչոնացած չէ նախնականին, սկզբնականին, անցեալին: Ֆրէօյտ մարդ մըն է, որ անդադար կը պայքարի լեզուաբանական տուեալի իւրաքանչիւր մասին վրայ եւ կ'ուզէ շարժման մէջ դնել մասերը: Ահա ա՛յս է Ֆրէօյտ՝ լեզուաբան մը»:

Եւ այս հաստատումը փաստելու համար, Լաքան իբր՝ օրինակ կու տայ այն մեթոտը, որով Ֆրէօյտ կը վերլուծէ երազները, անոնց մէջէն դանդանելով առընչական կապերը, եւ ֆառուդային բառերը, որոնք կը բանան նոր համբաներ: Լաքան կը ժխտէ այդ ընդունուած իրողութիւնը, թէ ենթաշխարհը պատկերներու, խորհրդանշաններու եւ նախատիպարներու խառնիխուռն շաղմարան մըն է. բան իրեն՝ անիկա կառուցային իրականութիւն մըն է, ինչպէս շաբաթիւութիւնը: Այս տեսութիւնը կը բաժնէ նաեւ հռչակաւոր ցեղաբան Լեվի-Սթրոս, որ միթոսները կը վերլուծէ եւ ցեղերու կազմութիւնը կը բացատրէ կառուցապաշտական մեթոտներով: «Ենթաշ-

digitised by A.R.A.R.@

խարիբ, — կը գրէ հոչակաւոր ցեղաբանը, — միշտ պարտպ է, կամ աւելի ճիշդը՝ բոլորովին անտարբեր է պատկերներուն, ինչպէս սատամոբսը իր մէջէն անցնող կերակուրներուն: Ենթաշխարհը մասնայատուկ գործողութեան մը օրգանն է, որ կը բաւականանայ կառուցային օրէնքներ պարտադրել այլ տեղերէ եկող տարրերուն»։

Հոգեվերլուծական քննադատութեան սահմանները որոշած է ինք, Ֆրէօյտ, իր տարբերաւոր աշակերտուհիներէն Մարի Պոնափարթի մէկ գործին համար գրած յառաջաբանին մէջ. «Հոգեվերլուծական ուսումնասիրութիւնները նպատակ չունին բացատրելու ստեղծագործներուն հանճարը, այլ մատնանշել ա՛յն ազդակները, որոնք գրաւած են իր ուշադրութիւնը, եւ ինչ տեսակ նիւթ իրեն պարտադրուած է ճակատագրին կողմէ»։

ՄԱՐԳՍԻՍՏ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ

Անկա՛ն ընկերաբանական քննադատութեան մէկ ձեւն է, ա՛յն իմաստով, որ կ'աշխատի բացատրել գործի մը ստեղծագործութեան եղանակը՝ զայն շրջապատող ընկերային իրականութեամբ: Պէտք չէ կարծել, որ մարքսիստ քննադատութիւնը ի յառաջագունէ կաղապարուած է, ընդհանրապէս, անոր մօտեցման ճամբաները բազմաթիւ են: Այսպէս, Լիւսիէն Կոլդման, որ կը պատկանի ժորժ Լուքաչի աւանդութեան, կը մերժէ ուղղակի կապ մը տեսնել գործին պարունակութեան եւ ընկերային հաստատութիւններու շահերուն միջեւ: Ան կը փնտռէ գործին ստեղծած երեւակայական աշխարհին կառոյցները, դանոնք բաղդատելու համար ընկերային կառոյցներուն հետ, եւ այսպէսով սահմանել այդ կառոյցներուն բնութիւնը եւ պաշտօնը։

ԹԵՄԱՅԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ

Թեմայական քննադատութիւնը որոշ առընչութիւն մը ունի հոգեվերլուծական քննադատութեան հետ, թէեւ անոր գործունէութեան վայրը չի սահմանափակուիր ներաշխարհին մէջ. Թեմայական քննադատութիւնը կ'աշխատի երեւան հանել յանախանքներու ցանց մը, գործին մէջ մատնանշելով ա՛յն նիւթերն ու մտահոգութիւնները, որոնք կը կրկնուին հեղինակի գրիչին տակ։ Այդ կրկնութիւնները, ըստ ոմանց, կ'ըլլան գիտակցաբար, իսկ ուրիշներուն համար՝ անգիտակցաբար: Այս մեթոտին գլխաւոր ներկայացուցիչները կը կոչուին ժորժ Փուլէ, Ժ. Սթարոպինսկի, Դասթոն Պաշլար, Ժ. Փ. Ռիչար, Ժ. Փ. Վեպէր։

Ըստ Սթարոպինսկիի՝ «գործը նայուածք մըն է, զոր հեղինակը կը նետէ իմքիր վրայ, աշխարհին վրայ եւ մեզ կ'առաջնորդէ իր գաղտնի աշխարհէն ներս, թեմաներու միջոցով»։

Ժ. Փ. Վեպէր հաշուեցուցակը կ'ընէ գործին մէջ կրկնուող պատկերներուն եւ անոնք կ'ենթակայնէ թեմա մը, զոր կը նկատէ խորհրդաւոր դղեակին միակ բանալին։

«Հեղինակին ամբողջ գործը խորհրդանիշերու բազմութեան մէջէն կ'արտայայտէ յանախանք մը կամ միակ թեմա մը, որ կ'արմատանայ հեղինակի մանկութեան ընդհանրապէս մոռցուած մէկ դէպքին մէջ»։

digitised by A.R.A.R.@

Վեպէրի տուած բազմաթիւ օրինակներուն մէջէն ընտրենք երկու հատ։ Ալֆրէտ տը Վինիի պարագային՝ տիրապետող թեման ժամացոյցն է, իսկ Փօլ Վալերիի պարագային՝ խեղդուելն է ա՛յն ջուրերուն մէջ, ուր կը լողան կարապներ։

Արդի քննադատութիւնը ունի նաեւ մօտեցումի զանազան տեսութիւններ, ինչպէս ձեւապաշտութիւնն ու կառուցապաշտութիւնը, որոնց մասին կ'արժէ քանի մը խօսք ըսել, անցնելէ առաջ արդի գրականութեան եւ արդի քննադատութեան գլխաւոր նիւթին, որ կը կոչուի լեզու (լանկաժ)։

ՁԵՒԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Ձեւապաշտական շարժումը ծնունդ առաւ Ռուսիոյ մէջ եւ գործեց 1915էն մինչեւ 1930։ Այս որակումը, որ եղծական բնոյթ ունի, ստեղծուեցաւ այդ դպրոցին հակառակորդներուն կողմէ։

Ձեւապաշտութիւնը քննադատական շարժում մըն է, որ առընչութիւն ունէր գեղարուեստական յառաջապահ իրագործումներուն հետ։

Ձեւապաշտներու քննադատական մօտեցումը որոշ նշանակութիւն մը ունի նոր քննադատութեան հետ, ա՛յն իմաստով, որ անիկա կ'ուզէր դրական գործը վերլուծել իբր անջատ իրականութիւն մը, որ ունի իր սեփական կառոյցները եւ անկախ է հոգեբանական, կենսագրական, ընկերաբանական կամ արտաքին ուրիշ տուեալներէ։ Անիկա կը մերժէր ներշնչումի դերակայութիւնը եւ չեչտը կը դնէր ստեղծագործելու արարքին թեքնիքին վրայ։ Այս ուղղութեամբ իր խօսքը ունի նաեւ Փօլ Վալերի, որ իր «Թէլ զէլ 11» գործին մէջ կը գրէ. «Ամէնէն անճշգրիտ սրբագրութեան պարագային ներշնչման ակզբունքը կ'ոչնչանայ»։

Ռուս ձեւապաշտական դպրոցէն ծնունդ առաւ լեզուաբանական այդ հռչակաւոր խմբակը, որ հիմը դրաւ կառուցական լեզուաբանութեան։

Ռուս ձեւապաշտներու դպրոցը բուռն յարձակումներու թիրախ հանդիսացաւ, ինչպէս կը վկայէ քանաստեղծ Ֆիրսանովի միջամտութիւնը խորհրդային գրողներու 1934ի համագումարին։ «Կարելի չէ ձեռք տալ ձեւական հարցերուն, փոխաբերութիւններուն, յանգին կամ մակդիրին՝ առանց թիրախը դառնալու լրագրողներու արագ հակադարձութեան. «Ձերբակալեցէ՛ք ձեւապաշտները»։

Մէկ խօսքով՝ ձեւապաշտութիւնը հերետիկոսութիւն մը կը նկատուէր «գիտական իրապաշտութեան» կողմնակիցներուն, այսինքն՝ խորհրդային վարչամեքենային կողմէ, այնպէս որ՝ 1930ին արդէն այդ շարժումը գրեթէ դադրած էր գոյութիւն ունենալէ։

ԿԱՌՈՒՑԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ

Կառուցապաշտութիւնը դրական քննադատութեան շարժում մը չէ միայն, այլ՝ վերլուծման եւ մեկնաբանութեան ձեւ մը, որ կը գործածուի գիտութեան, փիլիսոփայութեան, պատմութեան եւ ընկերաբանութեան մէջ։

Գրական քննադատութեան պարագային կրնանք անդրադառնալ ըսել, որ կառուցապաշտութիւնը ձեւապաշտութեան զաւակն է։ Անոր դազափարը կը

digitised by A.R.A.R.@

գանուի առաջ ձեւապաշտ գպրոցի տեսաբաններէն Թրուպեցկոյի «Գիրականութեան տեսութիւն» գրքին մէջ, որ Փարիզի մէջ լոյս տեսաւ 1966ին։ Հարցազրոյցի մը ընթացքին, Թրուպեցկո կ'ըսէր. «Ի՞նչ է իմաստը։ Իմ կարծիքով իմաստը այդ մասնայատուկ հատմն է, երբ կը ճաշակենք տարրերու բաղդատութիւն մը, որոնցմէ ոչ մէկը, առանձին-առանձին առած՝ այդպիսի հատ մը պիտի չտար»։

Այս բացատրութեան կը ձայնակցի Ճեվան Թոտորով, երբ կը խօսի նոր քննադատութեան մասին. «Մեզի գրական գործը կը նկատենք կառոյց մը, որ կրնայ մեկնաբանուիլ բազմաթիւ ձեւերով։ Այդ մեկնաբանութիւնը կախում ունի բնադատի անհատականութենէն, ժամանակէն եւ վայրէն, գիտեցկակագիտական ժամանակակից սահմանումներէն, եւայլն։ Սակայն մեր գործն է նկարագրութիւնը այդ ներքին կառոյցի կազմալարին, զոր կ'ուզեն լեցնել բնադատներու եւ ընթերցողներու մեկնաբանութիւնները»։

Կառուցապաշտ յեղաշրջումը կ'ուզէ դահրեկէց ընել արտադրող եւ ստեղծագործ մարդուն գերակայութիւնը, ընդդնելով, որ էակները կը գրաւեն տեղեր ու կը կատարեն պաշտօններ, որոնք սահմանուած են կառուցականօրէն։

Նոր քննադատութեան մեծերէն Ռոլան Պարթ կը բացատրէ. «Տոքթորեւսկիի մը, Սատի մը, Հիւգոյի մը գրութիւնը, բառերու շարքի մը երեւոյթին տակ կը գտնէ ուրիշ գրութիւններու արձագանգներ, նմանութիւններ...»։ Եւ տեսութենէն անցնելով գործնականին, Պարթ կու տայ կառուցապաշտական վերլուծումի օրինակ մը, Պալզաքի «Սառազին» պատմուածքը։

Գրութիւնը, — *կ'ըսէ Պարթ*, — իր զանգուածով կը նմանի ցած եւ խորունկ երկինքի մը, ոգորկ եւ անորոշ իր եզերքներուն վրայ։ Մեկնաբանը այս զանգուածէն կ'անջատէ ընթերցանութեան շերտեր, որոնցմէ ամբողջութիւն մը կը կազմեն եւ իմաստ ունին»։

Բայց ինչպէ՞ս կատարել այդ բաժանումը, ինչպէ՞ս զանազանել այդ շերտերը, որոնք ամբողջութիւններ կը կազմեն եւ իմաստ մը ունին։ Հոս մեծ կարեւորութիւն ունի վերլուծողին փորձառութիւնը։ Կրնայ պատահիլ, որ բաժանումը ճշգրիտ չըլլայ, սակայն վերլուծումէն ետք կարելի է վերատեսութեան ենթարկել ամբողջ մեկնաբանութիւնը եւ կատարել պէտք եղած ճշգումները ու սրբագրութիւնները։

Պալզաքի «Սառազին» պատմուածքին նիւթը հետեւեալն է.

Երիտասարդ եւ տաղանդաւոր քանդակագործ Սառազին, ձանձրացած Փարիզի մթնոլորտէն՝ կը մեկնի Հռոմ եւ հոն երեկոյթի մը ընթացքին օփերայի բեմին վրայ կը նշմարէ անզուգական ձայնով եւ գեղեցկութեամբ Փրիմա Տոնոն, որ կը կոչուի Զամպինելլա։ Քանդակագործը երիտասարդը կը հմայուի Զամպինելլայի մարմնին համաչափութեամբ եւ կը քանդակէ անոր արձանը։ Սակայն հակառակ իր սիրոյն, Զամպինելլա կը մերժէ իրեն յանձնուիլ։ Երգչուհիին պաշտպանները կը հալածեն ու մահացուօրէն կը վիրաւորեն զինք։

Մեռնելէ առաջ, Սառազին կ'իմանայ, որ Զամպինելլա կին չէ, այլ՝ կաստրատ երգիչ մը։

Այս պատմուածքին մէջ Ռոլան Պարթ կը նկատէ հինգ տեսակ ծածկագիրի բանալի, այսինքն՝ իմաստի հինգ խաւեր, որոնք կը հնազանդին զաղանի օրէնքի մը, զոր մեկնաբանը կ'աշխատի քողազերծել։

digitised by A.R.A.R.@

1· Դեպքերը պատմելու ծածկագիրը·— *Որուն շնորհիւ գրութիւնը կը կարդանք իբր պատմութիւն մը, դէպքերու յաջորդականութիւն մը։*

2· Նշանաբանութեան ծածկագիրը·— *Բառերը կը մեկնեցուին իրենց իմաստին համաձայն, մա՛նաւանդ անոնք, որ մթնոլորտ, հոգեբանութիւն եւ խառնուածք կը նշանակեն։*

3· Մշակութային ծածկագիրը·— *Այսինքն՝ ժամանակաշրջանի բժշկական, գիտական, հոգեբանական եւ ընկերաբանական անդրադարձումները։*

4· Մեկնաբանական ծածկագիրը·— *Այս պաքգայրն առեղծուածի մը բանաձեւումը եւ այդ առեղծուածին պարունակած ճշմարտութեան յայտնաբերումը։ Այս գործելակերպին կը հետեւի ընդհանրապէս ռատիկանական վէպը։*

5· Խորհրդանշական պարունակութիւնը·— *Հոս տրամաբանութիւնը կը նմանի երազներու տրամաբանութեան, որուն յատկանիշներն են անժամանակութիւնը, փոխանակութիւնը, փոխանցելիութիւնը։*

Այս մեկնաբանութեան մէջ, Գարթ կը ծանրանայ խորհրդանշական պարունակութեան վրայ, ինչ որ լաքանեան դպրոցին մեթոտն է։ Ան կ'աշխատի մեկնաբանել S եւ Z գիրերուն պարունակած հոգեբանական եւ խորհրդանշական իմաստը, առաջինը ըլլալով Սառաղին անուան առաջին գիրը, իսկ երկրորդը՝ Զամպինելլայի անուան առաջին գիրը։

Ուրիշ քննադատներ վիճակագրութիւնը կ'ընեն գործի մը մէջ յաճախակիօրէն կրկնուած գոյականներուն, ածականներուն, մակբայներուն, գարձուածքներուն, նմանութիւններուն ու պատկերներուն եւ կ'ուզեն բնորոշել հոն սիրող հոգեբանութիւնը, հեղինակի ներաշխարհին յաճախանքները, ձգտումները, եւայլն։

Գաղաքական եւ գեղարուեստական տեսարանները, ինչպէս նաեւ այն գիտնականները, որոնք կը հետապնդեն յանդուգն գաղափար մը, երբ հոսունները երթան, ընդհանրապէս կը կորուին իրականութենէն եւ կը հասնին մինչեւ անհեթեթութիւն։

Այսպէս, հեղինակին գոյութիւնը ո՛չ միայն կը նսեմանայ, այլեւ կը դառապարտուի չգոյութեան։ Բոլան Գարթի հետեւեալ նախադասութիւնը մեկնաբանութեան չի կարօտիր. «Ներ սրբուի գրողին ստորագրութիւնը, այն ատեն մահը կը հաստատէ գործին ճշմարտութիւնը, որ առեղծուած մըն է»։ Այսինքն՝ երբ գործ մը կը հրատարակուի, անոր հեղինակը պէտք է մեռած նկատել։

Բուն յարաբերութիւնը կը հաստատուի ո՛չ թէ հեղինակին եւ ընթերցողին միջեւ, այլ՝ գործին եւ ընթերցողին միջեւ։ Ու անցնելով թեմայական քննադատութենէն անդին, նորագոյն քննադատութիւնը գործը կը նկատէ ամբողջութիւն մը լեզուաբանական եւ նշանաբանական կառոյցներու, որոնք յատուկ չեն առեալ գործին համար, այլ հատարակաց են բոլոր գործերուն։

Ուրիշ՝ Փօլ տը Մանի այն հաստատումը, թէ՝ «Բոլոր գիրքերը խորհին մէջ նոյն բանը կ'ըսեն, բայց տարբեր ձեւով»։ Եւ Բոլան Գարթ կը հրաչակէր. «Գրականութիւնը բառերու հսկայ կրկնութիւն մըն է»։ Մինչ ժեբրաթ ժընէթ կը հաստատէր. «Բոլոր հեղինակները մէկ հեղինակ են, որովհետեւ բոլոր գիրքերը մէկ գիրք է»։

Մէկ խօսքով՝ նորագոյն քննադատութիւնը նոր դրականութիւնը վերածելով իրենց իմաստին անկախ բառերու կառոյցի մը, մէկ անգամէն կը ջնջէ հեղինակին, ընթերցողին եւ գործին գոյութեան իրաւունքը։

digitised by A.R.A.R.@

Եւ սակայն նոր քննադատներու մեծ մասը կը մերժէ այս եզրակացութիւնը, զոր համաձայր կը նկատէ նոր քննադատութեան, նոր եւ հին գրականութեան անձնասպանութեան։

Նորագոյն քննադատութիւնը հարցադրողներէն մէկը Գորկիս ալ Շլէգելն է, վիճաբանական առուլիսի մը ընթացքին, կը դարգացնէ գործին, հեղինակին եւ մարդուն թեման։ Անոր առաջին հարցումը հետեւեալն է.

«Ո՞վ է գրական եւ գեղարուեստական գործի մը մէջ արտայայտուողը»։

Ասոր ամէնէն տրամաբանական պատասխանը պիտի ըլլար.

«Ա՛ն որ ստեղծած է այդ գործը»։

Որովհետեւ, գործէն առաջ կայ անոր հեղինակը, առանց որուն այդ գործը գոյութիւն պիտի չունենար։ Ուրեմն հեղինակը գործին հայրն է, բայց նոյն ատեն ան այդ գործին զաւակն է։

Երբ Մոնթէյն կ'ըսէ, որ «Փորձերը զիս կազմած են այնքան, որքան ես կազմած եմ Փորձերը»՝ ասիկա կը նշանակէ, որ «Փորձերը» գրելու միջոցին, ան խորացած է իր եսին մէջ եւ երեւան հանած է այդ եսին երեւոյթները, որոնք թաղուած պիտի մնային, եթէ ինք որոշած չըլլար գրիչը առնել։ Մոնթէյն «Փորձերը» գրելու միջոցին արդեօք գտա՞ծ է իր եսը, թէ արտայայտուելով է, որ գոյութիւն տուած է այդ եսին։ Այնպէս որ՝ եթէ արուեստագէտը կը դանէ ա՛յն մարդը, որուն վրայ պատռտած է՝ զայն վերացնելու ու տարբեր մակարդակի վրայ փոխադրելու համար, ասիկա կը նշանակէ, որ արուեստագէտը կապ մըն է մարդուն եւ գործին միջեւ։ Եթէ առնենք Գօտէի օրինակը, կրնանք ըսել, որ բանաստեղծն է, որ կը լուսաւորէ, հասկնալի կը դարձնէ մարդ-Գօտէին։ Այսպէս, մշակոյթի մարդն է, որ մեզի կը յայտնէ բնական մարդը, որովհետեւ առաջինն է, որ կը խօսի երկրորդի մասին եւ այդ երկրորդը գոյութիւն ունի այնպէս՝ ինչպէս կ'արտայայտուի առաջինին կողմէ։

Ուրեմն, գրական գործ մը, բառերու շարահիւսութիւն մը չէ միայն, անիկա արտադրութիւն մըն է, ծառ մըն է, որ ունի իր արմատը, որ հեղինակն է, իսկ հեղինակը այդ ծառին ծնունդ տալու միջոցին կ'այլափոխուի, կը ծաւալի, ինչպէս նախնական արմատը կ'աճի, կը ճիւղաւորուին ծառին ճաճումով եւ ծաղկումով։

ՆՈՒՊԱՐ ՉԱՐԽՈՒՏԵԱՆ

(Շար. 2)

digitised by A.R.A.R.@

Մ. Ս. ՀԵՐԿԵԼԵԱՆ

ԳԷՂԱՆԿԱՐԻՉ «ՄԱՐԳԱՐԷՆ»



Խ. Ժ. Ժպրան.— Ինքնանկար

Ամէն ինչ, որ մենք կը տեսնենք՝ կը ներկայացնէ չտեսնուած կեանքը. աքուեստի ճպատակը այդ խորհրդանշանը վերարտադրել չէ, այլ զայն բացատրել աւելի հասկնալի խորհրդանշաններով։

ԺԳՐԱՆ ԽԱԼԻԼ ԺԳՐԱՆ

Ժպրան Խալիլ Ժպրանի մասին խօսելու ժամանակ կարելի չէ չյիշել Ռոսէթը եւ Ուիլիըմ Գլէյքը, ինչպէս որ Ռոսէթի եւ Ուիլիըմ Գլէյքի մասին խօսելու առեն չենք կրնար չյիշել Միքել Անճելոն («Աեղ դատաստան») եւ Տանթէն («Աստուածային կատակերգութիւն»)։

Ռոսէթի միջոցով Ժպրան կ'իմանայ անգլիացի բանաստեղծ եւ նկարիչ Գլէյքի մասին եւ զայն ուսումնասիրելէ ետք կը յայտարարէ.

«Գլէյքի իր ջահով ճամբան կը լուսաւորէ»։

Ան թէեւ գլէյքեան ջահով լուսաւորուեցաւ, սակայն հակառակ Ռոսէթի հանրայայտ պնդումին, թէ՝ «Ժպրան Խալիլ Ժպրան 20դդ դարու Ուիլիըմ Գլէյքն է», Ժպրան չչեղեցաւ իր ինքնուրոյն ճանապարհէն։ Ընդունինք, որ երկուքն ալ գրիչ ասպանդի նոյն ուժականութեամբ թէ՛ բանաստեղծ եւ թէ նկարիչ են, սակայն մ'նաւանդ նկարչութեան պարագային (թէ՛ ոճով եւ թէ բովանդակութեամբ) Ժպրան կը տարբերի Գլէյքէն, որուն հերոսները ոչ-երկրային, առասպելական, դիցաբանական, կրօնական, երեւակայական էակներ են, ինչպէս յոյց կու տան իր «Ուրախ օր», «Աբէլի մարմինը գտնուած Աղամի եւ Եւայի կողմէ», «Աղամ եւ Եւան կը փնտռեն» անուն պատկերները եւ, յա՛տկապէս՝ Տանթէի «Աստուածային կատակերգութիւն» գործին նկարազարդումները։

Ժպրան կը նկարէր իրական մարդը, սակայն պարզուած ճիւթեն, իբրեւ մարդու էութեան վերացարկուած գեղեցկութիւն։ Հակառակ անոր, որ Գլէյք անիրական ու անշօշափելի կերպարներ կը նկարէր, սակայն անոր նկարներուն մէջ առկայ են առօրեայ, հողեղէն մարդու

digitised by A.R.A.R.@

յատուկ ապրումներ, իսկ Ժպրանի կերպարները, ընդհակառակն, մարդկային իրական մարմնի վերացած ներկայութիւնն են, հեղինակին ապրած անդենական կեանքին մէջ։

Ժպրան կ'ըսէ, թէ «Մարդկութիւնը լոյսէ գետ մըն է, որ կը վազէ նախաանդենականէն դէպի անդենական»։ Մարդուն վիճակուած ակնթարթային այս կեանքը նախաանդենական ճառագայթում մըն է՝ անդենական երջանկութեան ձգտող։ Իրեն համար անդենական կեանքը անիրականն ու երեւակայականը չէ, այլ կայ եւ գոյութիւն ունի որոշ ոլորտի մը մէջ։ Ըստ իրեն, մարդու կեանքը հոգեւոր կեանքի նախապատրաստութիւնն է՝ իբրեւ կատարեալ գոյ, բնականէն վեր, բնականէն տարբեր, բայց անոր մաս կազմող։

Եթէ նկատի առնենք Ժպրանի «Մարգարէն» գործին հեղինակային նկարագրումները, պիտի տեսնենք, որ անոնք ձերբազատուած առօրեայ բոլոր տաղտուկներէն եւ հաճոյքներէն, նո՛յնիսկ ամենամարդկային կիրքէն եւ սեռէն, բայց ոչ՝ սէրէն, կը հանդիսանան մաքուր, փիլիսոփայական դրսեւորումները Ժպրանի ըմբռնած մարդ էակին։ Ան կ'ըսէ, թէ՝ «Երբ մարդ չկարենայ գտնել երգիչ մը՝ իր սիրտը երգելու, կ'արտայայտէ փիլիսոփայ մը՝ իր միտքը արտայայտելու»։

Եթէ Ժպրան առաւելաբար փիլիսոփայ մըն է իր դրականութեամբ, ապա, իրրեւ նկարիչ՝ առաւելաբար սիրտը երգող բանաստեղծ մըն է։

«Մարգարէն»ի մէջ Ժպրան կը ձգտի մարդը դարձնել ջինջ, դերմարդկային, իրրեւ ոգեղէն իրականութիւն մը, որուն օրինակները կու տայ իր նկարագրած մերկութիւններով։

Վերադառնալով Ռոտէնին, Միքէլ Անճէլոյէն եւոյ, միջադիպային կեանքի վրայ իբրեւ քանդակագործ առաջին երեւոյթը կը համարուի։ Առանց վարանելու, Ռոտէնի մեծութիւնը կրնանք չափել Միքէլ Անճէլոյի չափանիշով, որովհետեւ Միքէլ Անճէլոն, Ռաֆայէլի եւ Լեոնարտո տա Վինչիի կողքին՝ ամբողջ սերունդներ ճգմեց իր «հրէշային հանճարով», բայց Ռոտէն յաջողեցաւ դուրս գալ Անճէլոյի շուքէն եւ իր ուժականութեամբ եւ թարմութեամբ յայտնութիւն մը դարձաւ, նախորդ բոլոր տաղանդները իր գլանին տակ առած այդ «հրէշային հանճարէն» մօտաւորապէս չորս հարիւր տարի ետք։

Որքան ալ Ռոտէն կենսախայտ ու ցանկայարոյց քանդակներ ստեղծած ըլլայ՝ ան ներկայացուցիչն է աստուածային ներքին կեանքի, որովհետեւ մարդուն գոյութիւնը, մարդկային կեանքի դոյատեւումն ու կենսունակութիւնը ան կը վերագրէ Աստուծոյ հրաշքներուն։

Այս ճշդումը կատարեցինք անոր համար, որ Ժպրանի անհատականութիւնը, հանճարը բիւրեղացած է յաղեցած է միստիսիզմով, որ անմիջականօրէն կ'առընչուի Ռոտէնի արուեստին, անոր ներքին աշխարհին։ Ժպրանի հետ յատկապէս պէտք է յիշել Ռոտէնի «Ժոնխմի դուռը» անուն բարձրաքանդակը, որ, իր հերթին, կը յիշեցնէ Միքէլ Անճէլոյի «Աեղ դատաստանը»։ Ռոտէնի ժամանակակիցն ու բարեկամը ըլլալով ու իրմէ, ինչպէս նաեւ Ռիլքէոմ Գլէյքէն սնած ըլլալով հանդերձ, Ժպրան նոր էջ մը կը բանայ միջազգային արուեստի անդաստանին մէջ եւ ինք, իր հերթին, հակառակ փոքր ժողովուրդի մը զաւակը ըլլալուն, կը հանդիսանայ 20րդ դարու մեծ արուեստագէտներէն մէկը, որ յաջողեցաւ թափանցել աստուածային խորհուրդներուն եւ հաղորդեց տիեզերական անմահութեան ճաշակը։

Ռոտէնի խորհրդապաշտ ոգեղէնականութիւնը հրաշքի համազօր երեւոյթ է արուեստի պատմութեան մէջ, գոնէ Մասայոյէն եւ Ֆրա-Անճէլիքոյէն ետք։ Ան իր միտքերը, փիլիսոփայական ըմբռնումներն ու յոյզերը արտայայտած է զանազան խորհրդանշաններով եւ երեւոյթներով, ինչպէս օրինակ, շարքը «Համբոյրներ»ուն, այսինքն՝ պատկերացումները անդունդներու վրայ բռնուած զոյգերու, որոնք կ'ուզեն իրարու միանալ, բայց կարծես ձգողական հակադիր ուժ մը կը բաժնէ զիրենք իրարմէ։ Այդ

digitised by A.R.A.R.@

քանդակներուն մէջ կ'երեւի անկարելիին եւ անհասանելիին զաղափարը։ Ըստ քանդակագործին, մարդը այն մեղաւորն է, որ դատապարտուած է յաւիտենական տառապանքի։

Ռոդէնի օրինակով, Ժպրան եւս նըման երեւոյթներ եւ միջոցներ պատկերած է։ Օրինակ, իր «Մարգարէն» գործին նկարագրդումները եւ կամ շարքը ձեռքերու, որոնք ներկայացուած են իբրեւ աստուածային մեծութեան հոմանիշ, ինչպէս Ռոդէնի ձեռքերը՝ «Աստուծոյ ձեռքը» եւ «Մայր ստեղծը» քանդակներուն մէջ։

Ժպրան մարդկային ձեռքը ներկայացուցած է իբրեւ ամենակարող, մարդը անասունէն զանազանող, մարդկայնացնող գործօն։ Ան ձեռքին մէջ կը տեսնէր բանականութեան թելադրականութիւնն ու իրագործումը։ Ի զուր չէ, որ հին ժամանակներուն մարդիկ կը կարծէին, թէ մարդը ձեռքերով կը մտածէ եւ ոչ թէ ուղեղով։ Այս հասկացողութեամբ է հաւանաբար, որ Ժպրան մարդկային աչքը, աշխարհաճանաչողութեան գլխաւոր ըզգայարանը կը զետեղէ ափին կեդրոնը, որուն շուրջ կը դառնան հոգեւոր կեանքը խորհրդանշող թուչունի թեւերը, իսկ անոնց շուրջ կը թաւալին այս անգամ մարդկային կեանքը խորհրդանշող մերկ մարմիններ։ Ժպրանի նկարած ձեռքերը եթէ աշխատաւոր ձեռքեր չեն, անպայման կը խորհրդանշեն բարին, լոյսը, արդարը։ Հոկայ ձեռքերու մէջ յաճախ կը հանդիպինք մարդկային մանր էակներու։ Ձենք զարմանար, որովհետեւ Ժըպրանի համար մարդ արարածը փոքր է իր մեղքերով, մանրախնդրութեամբ եւ նիւթապաշտութեամբ։ Կարծես թէ այդ ձեռքը միշտ դուրգուրանքով ու կարեկցութեամբ կը փրկէ ու կը հեռացնէ մարդը աշխարհիկ յոռի երեւոյթներէն։

Ժպրանի կեանքը, նկարչական աշխարհը բարդ է, բազմազան եւ, միաժամանակ՝ հակասական։ Ան կ'ըսէ, թէ՝ «Բոլոր արարածներուն մէջ միայն ստեղծողներն ու արուեստագէտները գերզգայուն են սեռայնօրէն։ ... Գալով ինծի, ես չեմ գիտեր, թէ տիեզերքի մէջ ինչ բան սեռ չէ՝ բացի գետակին խիներէն ու ծովափի աւազներէն»։

Իր այս խոստովանութիւնը եւ բաղում սիրահարներու գոյութիւնը կը վերկայեն այն մասին, թէ Ժպրան կնոջ խգականութիւնը եւ մայրանալու հրաշքը գնահատող արուեստագէտ մըն էր։ Բայց որովհետեւ անոր ըմբռնած գեղեցկութիւնը «պէտք մը չէ, այլ՝ վերացում մը հրաշալի», իտէալական գեղեցկութիւնը կը դառնայ՝

«Բոցավառ սիրտ եւ վերացած հոգի։

«Անիկա պատկերը չէ, զոր պիտի ուզէիք տեսնել, ոչ ալ երգը, զոր պիտի ուզէինք լսել,

«Այլ պատկեր մը, զոր կը տեսնէք, եթէ նոյնիսկ գոցէք ձեր աչքերը, եւ երգ մը, զոր կը լսէք, եթէ փակէք ձեր ականջները»։

Կարծես թէ Ժպրանի նկարած կիները իգականութենէ դրեթէ պարպուած մերկութիւններ են։ Մերկ գեղեցկութիւնը հաստատող անոր բնորոշումին մասին իրբեւ լաւագոյն օրինակ կրնանք յիշել «Մարգարէն»ի նկարազարդումներէն Միայնակ ազջիկը, որ Տանթէի եւ Գը-

digitised by A.R.A.R.@

լէյքի երեւակայական անդրաշխարհը եւ անոր բնակիչներուն շարժումները յիշեցնող ընթացքի մը մէջ է։ Ան աղջկական վերացարկուած գեղեցկութիւն մը ունի, ծիսական, բովանդակալից ու համեստ դեղեցկութիւն մը, որ թէեւ կիրք չի յարուցաներ տգամարդուն մէջ, բայց անպայման կը յուզէ ու համակրանքի զգացումով մը կը պարուրէ դիտողը։ Ան ունի հրեշտակային դէմք մը եւ կուրծքը ցանկալարոյց չէ, այլ թրթռուն ու շրջնաղ շինանք մը ունի եւ որեւէ հպում կարծես պիտի շքացնէ անոր խորախորհուրդ գեղեցկութիւնը։ Որովհետեւ ժպրան չէր կրնար բացարձակ էակ-գեղեցկութիւնը դնել չոր եւ շար իրականութեան մէջ, իր բացառիկ երեւակայութեան միջոցով պիտի խորատուզուէր հոգեկան յատակները, եւ կամ՝ վերանար դէպի տիեզերական ատուածութիւն։ Ան ընդհանրապէս իր նկարները չէր խորագրեր, որովհետեւ անոնցմով բացատրուող միճակ մը կամ փիլիսոփայական մեկնութիւն մը չէր ուզեր տալ, այլ կը նրկարէր զանոնք երաժշտական կշռոյթով մը։ Այդ պատճառով իր խորհրդապաշտ նկարները թէեւ կը փիլիսոփայեն, բայց զգացական միզամածային պետնի վրայ, եւ որոնք խօսուն են, երգ են, ոգի են...

Միայնակ ապիկը կարծես խաւարած անջրպետին մէջ դրուած լոյսի աղջիկ մըն է, որուն «աչքը լոյսի խօսք մրն է՝ լոյսի ձեւքով գրուած», խաւարած հոլի մը վրայ։

Ժպրանի նկարներուն զգացական փիլիսոփայութիւնը հասկնալու համար պէտք չունինք տրամաբանական ապացոյցներու։ Դիտողը անոնց մէջ պէտք է փնտռէ այն խորհուրդ խորինը, որ թաքնուած է մարդու հոգեկան, անդհանական աշխարհին մէջ։ Այդ խորհուրդը յայտնաբերելու համար մարդ պէտք է ինքզինք ճանչնայ՝ իր առօրեայէն վեր մակարդակի մը վրայ։ Անոր նկարները ներշնչում են՝ միտք ըլլալէ առաջ, եւ որովհետեւ «ներշնչումը միշտ կ'երդէ, ներշնչումը երբեք չի բացատրեր», Ժպրանի նկարները կը դիտուին «այնպէս՝

ինչպէս պիտի ունկնդրէինք ծիսական աղօթք մը, հեթանոսական երգ մը եւ կամ շարականի հունչ մը։

Անոր նկարները թէեւ որոշ բովանդակութիւն մը կ'արտայայտեն, երբեմն քանի մը կերպարներու ընդմէջէն, սակայն անոնց հետ հազորդակցութեան մէջ մտնելու միջոցը կը մնայ վերերորդ գաղարանքը։ Որովհետեւ նկարներու մէջ գոյութիւն ունեցող մերկ մարմիններու յարաբերութիւններն ու շարժումները, մարդուն մաղնիսական դաշտը, այսինքն՝ էապէս ատտպային մարմինը յիշեցնող խառնուածքներ են, որոնք իրենց մարմնական անօթը ձգած երկրի վրայ, ու իրրեւ իմաստաւորուած տեսլականը անոնց, կը թափառին անմահութեան ոլորտներուն մէջ։ Անեղու այս անընդունակ մարմինները կայուն չեն ո՛չ իրենց կեցուածքով եւ ոչ ալ շարժումներով, այլ կը ծիսան անորոշ տարածութեան եւ յաւիտենական տեւողութեան մէջ, միայն զերդզայուն հոգիներու ծանօթ անտեսանելի ու խորհրդաւոր փսփսուքներով առլցուն վայրերու մէջ։

Ժպրան տգամարդու մարմինները եւս կը նկարէ կնոջական (բայց ոչ՝ իգական) հմայքով, որոնք նոյնպէս ունին գեղեցկութիւն մը, բարոյական բոլոր առնաբ-

digitised by A.R.A.R.@

ներով յագեցած։ Ան մարդ էակը, այլ թէ կին, մերկ կը նկարէր, որովհետեւ, ըստ իրեն՝ «կեանքը մերկ է», ինչպէս էր պարադան Միքել Անճէլոյի համար։ Ինք կ'ըսէ. «Մերկ մարմին մը ցշմարտագոյն ու վեհագոյն խորհրդանշանն է կեանքին. եթէ լեռ մը կը գծեմ մարդկային մարմիններու ներկայութեամբ եւ ջրվէժ մը կը նկարեմ գահավիժող մարդկային մարմիններով, պարզապէս անոր համար է, որ լեռան մէջ կը տեսնեմ հայր մը ապրող բաներու եւ ջրվէժին մէջ կեանքի գահավիժ հոսանք մը»։

Ժպրանի համար բնութիւնը եւ, յա՛տկապէս՝ բնութեան շարժումները իմաստաւորեալ կեանքի մը գերմարդկային բանականութեան դրսեւորումն է, անհատ ու անսկիզբին կողմէ։ Անոր գործերը, ուժեղ անհատականութեամբ դրոշմուած՝ մարգարէական յայտնութիւններ են, ուր կայ երազը, երազին իրականը, եւ անոր տեսականը։ Հոգիներ կը ճախրեն այդ գործերուն մէջ, հոգիներ կը տատապին, որոնք ունին արուեստագէտին ներքին կեանքի առհաւատեան ժառանգութիւնը։

❖

Ժպրան Խալիլ Ժպրանի կենսագիրները կը վկայեն, որ ան դեռ մանուկ կը սկսի պատին ու հողին վրայ նկարել, մինչեւ որ օր մը հայրը նոյնիսկ կ'ապտակէ զինք, պատը ածուխով «աղտոտած» ըլլալուն համար։ Այս անզուսպ մանուկը թուղթին հետ կը ծանօթանայ, որպէսզի այս անգամ թուղթին վրայ գծէ։ Յետոյ կը պատռէր գծածները, որովհետեւ չէր հաւնիր զանոնք, անոնք չէին համապատասխաներ իր մտատրպարներուն։ Անկախ անկէ, թէ իր գծածները ինչ մակարդակ ունէին, կրնանք ըսել, որ անոր վերաբերումը իր նկարներուն հանդէպ, ինքնին արուեստագէտի խառնուածք մը կը մատնէ արդէն։ Ժպրան երբեք չդաւաճանեց իր բնոյթին խառնուածքին եւ, մա՛նաւանդ՝ չկեղծեց իր կեանքին մէջ, նոյնիսկ շեղումի պարագային։

Մօրը իրեն տուած ալպոմին միջոցով՝ ան վեց տարեկանին կը ծանօթանայ Լիոնարդո տա Վինչիի արուեստին, որուն հմայքէն տարուած՝ ինքզինք իտալացի կը յայտարարէ։ Այս բոլորը կը թելադրեն, չեշտելու համար Ժպրանի բնածին տաղանդը։ Կը մնար, որ առիթ ստեղծուէր իրեն, ինքզինք դրսեւորելու համար։

Գեղանկարչութեան զուգահեռ՝ Ժպրան Խալիլ Ժպրան գրող-բանաստեղծ էր նաեւ, եւ որովհետեւ «քաւերը, կաղապարներու պէս, շատ նեղ են՝ պարունակելու համար մարդկային սիրտն ու միտքը», ան կը նկարէր յա՛տկապէս նկարագրելով իր դիրքերը, իր ըսելիքը ամբողջացնելու համար։

Բուսականին տարտկալի, դաժան ու դժբախտ մանկութենէ մը ետք, Ժպրան մեծ դժուարութիւններով կը յաջողի ներկայացնել իր նկարները Պոսթընի մէկ փոքր ցուցասրահին մէջ, ուր հետեւեալ բացատրութիւնը կու տայ իր ապագայ հովանաւորին, օրիորդ Մարի Հասքէլլին.

«Ոչ մէկ նկար աւարտած է, նոյնիսկ հեղինակին զայն աւարտած յայտարարելէ ետքն իսկ։ Կատարեալ ու վերջնական նկարը սոսկ Աստուած կրնայ նկարել»։

Ակամայ կը յիշենք նաեւ Արշիլ Գորքի Ատոյեանի նոյնանման յայտարարութիւնը, թէ՝ իր նկարներուն ոչ մէկը աւարտած է, իսկ եթէ նկար մը աւարտած ըլլայ՝ արդէն կը պարզուի իր իմաստէն։

Աչխարհի մէջ ոչինչ աւարտած համարելու, կատարեալը միայն աստուածայինին մէջ տեսնելու եւ անոր՝ կատարեալին ձգտելու տենչը ունեցած են շատ մը իրաւ մեծութիւններ, ինչպէս մա՛նաւանդ հանճարեղ Նարեկացին՝ իր «Մատեան ողբերգութեան» հատորով։

Ժպրանի արուեստը հոգեկան անաղարտութեան հասնելու անխարխափ երթի մը մէջ է։ Ան բազմիցս արտայայտուած է մարդկային քաղաքակրթութեան, մա՛նաւանդ նիւթապաշտութեան դէմ։ Օրինակ, կ'ատէր օգտնուը, զայն համարելով դիտութեան չարիքներէն մէկը։ Կ'ուզէր մարդը ձերբազատել մեքենայա-

digitised by A.R.A.R.@

ցած տափակ կեանքէն եւ վերադարձնել զայն իր նախնական անեղծ վիճակին, փիլիսոփայական այս մեկնակէտով ալ կը նկարէր քաղաքակրթութեան աղուեցութիւններէն հեռու ապրած մարդը, մերկ բնութեան մը մէջ։ Ժպրան իր նկարներուն մէջ մարդը ձերբազատեց հագուստներէն, հագուստի կեղծիքէն, որպէսզի հակազդէ տիրող հոգեկան քայքայումին։

⁂

1860ական թուականներէն սկսեալ, Եւրոպայի մեծ ուսաններուն՝ Փարիզի, Հռոմի եւ Լոնտոնի մէջ ուսանած լիբանանցի հոյլ մը արուեստագէտներ Լիբանանի արդի «Ակադեմիք» նկարչութեան հիմը դրին եւ ստեղծեցին տաղանդաւոր նկարիչներու սերունդ մը, որոնց լաւագոյնները կը համարուին Ֆորմը, Սրուր եղբայրները, Սալիպան, Տուէյհին։ Ասոնց շարքը կ'երկարի մինչեւ Մուստաֆա Ֆարրուխ եւ Օմար Ռնսի։ Այս արուեստագէտներուն մէջ Ժպրան Խալիլ Ժպրան ԷՔէ ոչ իր կատարելութեամբ, այլ իր բազմակողմանիութեամբ, գաղափարներուն նորութեամբ եւ ոգեղինացումով (միստիսիզմ) կը մնայ լուսաբ-

ձակ մը լիբանանցի գալիք բոլոր սերունդներուն համար։ Անոր մէջ կը գտնենք ա՛յ միայն միջազգային տարողութիւն ունեցող արուեստագէտ մը, այլեւ՝ ղուտ լիբանանցին, աղատասէր, աշխատասէր գիւղացին, ժայռերէն ծառ բուսցնող մարդուն ոգին յայտնակերպող տաղանդ մը։

ՄՈՎՍԷՍ Ս. ՀԵՐԿԵԼԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Նշմարներ ԲԱՑԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ...

Այս տարի, Մայիսի առաջին շաբթուն, կայացաւ Հայաստանի գրողներու 8րդ համագումարը, որուն ամբողջական պատկերը դեռ կը պակսի մեզի։ Մամուլին մէջ տեսանք Արմենիրէսի հաղորդումներէն մէկ քանին, Գրողներու Միութեան առաջին քարտուղար Վարդգէս Պետրոսեանի հաշուետու զեկուցումէն կարգ մը հատուածներ, Սփիւռքի գրականութեան մասին Էդուարդ Ջրբաշեանի տեսութեան ամփոփումը եւ ուրիշ լուրեր։

Սփիւռքի գրականութեան մասին խօսած առեն, Էդուարդ Ջրբաշեան ակնարկութեան մը շնորհը ըրած է նաեւ «Բագին»ին, հետեւեալ պարբերութեան մէջ.

«Սփիւռքահայ գրողների ճնշող մեծամասնութեան ստեղծագործութիւնը տոգորուած է Սովետական Հայաստանի նկատմամբ սիրոյ, կարօտի եւ նուիրուածութեան զգացումով, այն գիտակցութեամբ, որ Մայր հայրենիքը տարագիր հայութեան իրական եւ հոգեբանական միակ խարիսխն է, առանց որի տնենար է Սփիւռքի բուն գոյութիւնն ու յարատեւումը։ Բացառութիւն են կազմում դաշնակցական «Հայրենիք», «Բագին» եւ մի քանի այլ պարբերականների էջերում հանդէս եկող որոշ հեղինակներ»։

«Բացառութիւններուն մասին խօսելէ առաջ, թերեւս անհրաժեշտ է արագ ակնարկով մը յիշեցնել, որ «Սփիւռքահայ գրողների ճնշող մեծամասնութեան գրականութիւնը» բնա՛ւ կապ չունի Ջրբաշեանի «տոգորուած»ին ու տոգորածներուն հետ։

«Սովետական Հայաստանի նկատմամբ սիրոյ, կարօտի եւ նուիրուածութեան զգացումով» տոգորուած գրողներ գտնուին թերեւս, կա՛ն անպայման, բայց այդ զգացումներով տոգորուած գրականութիւն դժուար է գտնել ուեւէ մէկուն մօտ։

Աւելի առաջ երթալով ըսենք, որ Հայաստանի «սովետական» երեսիներամաղրութիւններով տոգորուած գրականութիւն մը չկայ, չկրցան ստեղծել ա՛նգամ սովետականով դիշեր ու զօր երդում ըրած կատաղի սովետականները՝ Նայիրի Զարեան, Հրաչեայ Քոչար եւ այլք, ո՛ւր մնաց Սփիւռքի գրողները, որոնց հայրենասիրութիւնը յաւիտենական հայրենիքին զգացողութենէն կը բխի եւ ոչ թէ մասնակիէն ու մասնակիէն պարագայական հրապոյրներէն։

Տարբեր չէ եղած նաեւ մեր ու մեր աշխատակիցներուն սիրոյ աղբիւրը, եւ այդ կապակցութեամբ հարկ չկայ առանձին փաստեր յիշելու։ Մեր գրականութիւնն ու մամուլը կը յորդին այսօրուան մեր գոյութեան խարիսխ եւ ազգային երդներուն կենդանութիւն հաղորդող հայրենական օրակներով. այնուամենայնիւ, պաշտօնական բեմերէ կը յայտարարուի, որ դաշնակցական կարգ մը թերթերու եւ անոնց շարքին «Բագին»ի էջերուն հանդէս եկող որոշ հեղինակներ միւսներուն պէս չեն, զուրկ են հայրենիքին անփոխարինելիութիւնը դաւանող կեցուածքներէ, «բացառութիւն են կազմում»։

Ի՞նչ պատահած է արդեօք, որ «Բագին» եւ իր որոշ աշխատակիցները «բացառութիւն են կազմում» եւ ի՞նչ կը պահանջուի, որպէսզի դուրս գանք ըստ երեւոյթին ոչ բաղձալի այդ «բացառութիւն»ներուն շարքէն։

Ո՛չ Մայր հայրենիքին հայհոյած ենք անուշտ, ոչ ալ մեր աչքերը

digitised by A.R.A.R.@

գոցած ներկայ Հայաստանի մշակութային ու քաղաքակրթական նուաճումներուն դիմաց։ Ձենք թերացած նաեւ մեր համարումները արձանագրելու պարտականութեան մէջ։ Ընդհանրապէս, բացառիկներով ներկայացուցած ենք ընթերցողին ամէնէն հանգամանաւոր դէմքերը, Եղիշէ Զարենց, Ակսել Բակունց, Պարոյր Սեւակ, Մուշեղ Գալշոյեան, իսկ մեր ուժերուն, ժամանակին ու ծաւալին ներած չափերով ծանօթացուցած ենք ասանկ մը ուրիշ արժանաւորներ, Վիդէն Խէչումեան, Վախտանգ Անանեան, Համօ Սահեան, Սերօ Խանզադեան, Թազմիկ Դաւոյեան, Հրանտ Մաթեւոսեան, Թաֆայէլ Արամեան, Հենրիկ Էդոյեան ու հոյլը բանաստեղծ էդոյեանի սերունդին, նաեւ արձակագիր առողջ ծիլեր, եւայլն, եւայլն։

Շատ դիւրին էր մեզի չարունակել այս գիծը, բացառաբար ցորենով ոգեւորուիլ ու անտեսել յարդին բաժինը, վարուիլ ամէնուն պէս՝ «Բանգի դա ե՛ւ հեշտ է, ե՛ւ պարզ, ե՛ւ ռնվնաս, ե՛ւ շահաւէտ», բայց դիւրինը ձգած՝ մեզքը առնենք մեր վիզին նաե՛ւ դառնութիւն պատճառող երեւոյթները մատնանշելու եւ... հետեւանքը արձանագրուած է էդուարդ Ջրբաշեանի պարբերութեան մէջ։

«Բագին»ի մէջ մատնանշուած թերութիւնները երեւակայութեան հեռուանք չեն, արձանագրուած են եւ, դժբախտաբա՛ր, թիւով քիչ չեն։ Վերյիշենք անոնցմէ քանի մը հատը, որպէսզի աւելի պարզ ըլլայ «ճնշող մեծամասնութեան» եւ մեր միջեւ դրած Ջրբաշեանի տարբերութեան աղբիւրները։

Գատահեցաւ այնպէս, որ հայրենական հրատարակչատուներուն մէջ սեռափոխութեան ենթարկուած Կ. Զարեանի «Նաւը լիրան վրայ» վէպին դիմաց «ճնշող մեծամասնութիւնը» նախամեծար համարէ լռութիւնը, մինչ մենք չկրցանք զսպել մեր դառնութիւնը։

Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վէպը «ներքին սպառման ապրանքի» վերածելու ժպրհութիւնը գործուեցաւ Հայաստանի մէջ եւ «ճնշող մեծամասնութիւնը» դարձեալ լուռ մնաց, մենք՝ ոչ։

Վահան Թէքէեանի գործերուն հայրենական հրատարակութեան համար «ճնշող մեծամասնութեան» բոլոր բջիջները ծափ զարկին, ու «Բագին»ին մնաց դարձեալ մեծ բանաստեղծը սրբապիղծ անուշադրութեամբ մը ընթերցողին ներկայացնելու ողբերգութիւնը պարզելու դառն պարտականութիւնը։

Զարդէլ Եսայեանի «Նամակներ» գիտական հրատարակութեամբ լոյս ընծայած ըլլալու յոխորտ յայտարարութեամբ բաւարարուեցաւ «ճնշող մեծամասնութիւնը», մենք սակայն ստիպուեցանք մատնանշել անոր անգիտակցութիւնը։

«Ճնշող մեծամասնութիւնը» Օշականը հրատարակելու նախօրեակին գրուած յօդուածներուն անկիւնադարձ համարեց, խմբագրուած անճշդութիւնները ուշադրութեան յանձնելու դառն բաժակը մեզի մնաց նորէն։

Ըստ երեւոյթին, էդուարդ Ջրբաշեան շատ գոհ է «ճնշող մեծամասնութենէն», որ աչք կը գոցէ թոյլ տրուած նման կամայականութեանց ու անբարեխիղճ վերաբերումներուն դիմաց, ու շատ դժգոհ մեզմէ, որ բարձրաձայն դառնութեամբ կը խօսինք անոնց մասին։ Ոչինչ։ Մեղսակից լռութիւններու գնով մեծարուած «ճնշող մեծամասնութեան» նախանձոտ չկայ։ Հայրենի գրական արտայայտութիւնները անխառն ու ձեռնարկները անթերի տեսնելու ոգի մըն է, որ կը զեկավարէ «Բագին»ն ու, ըսենք Ջրբաշեանի բառերով՝ իր «էջերում հանդէս եկող որոշ հեղինակները», եւ այս նախանձախնդրութիւնը մեզի համար աւելի՛ կ՚արժէ, քան ժրիորէն չոայլուած քարի վարուց բոլոր վկայականները ի միասին։

digitised by A.R.A.R.@

Երկուսիկս տասնամեակի ընթացքում ես (Զոշչենկոն) ո՛չ միայն ոչինչ չի սովորել եւ ո՛չ միայն ամենեւին չի փոխուել, այլ, ընդհակառակը, ցինիկ բացայայտութեամբ շարունակում է մնալ գաղափարազրկութեան եւ գռեհկութեան քարոզիչ, ոսոիզբուռժոյին եւ անամօթ զրական խուլիգան:

ԱՆՏՐԷ ԺԴԱՆՈՎ

Երգիծական արուեստի իր բազմազան միջոցներով ես (Զոշչենկոն) կռուում էր յանուն մեծ մարդասիրութեան, յանուն հոգու ազնուութեան, յանուն մարդային արժանապատուութեան՝ երբ ստանձնում ամենափոքր իսկ արտայայտութիւնների դէպքում:

ՕԼԳԱ ՍԱՆԱՀԵԱՆ

ԶՈՇՉԵՆԿՈՅԻ ՊԱՐԱԳԱՆ...

Համաշխարհային Երկրորդ պատերազմի ընթացքին որոշ նկատումներով մեղմացում արձանագրած ստալինականութիւնը, պատերազմի վաղորդայնին կրկին թափ առաւ ու տարածեց իր չարաչուք ուրուականը Խորհրդային Միութեան ողջ տարածքին ու բոլոր քնապատառներուն վրայ: Բրտութեան ծանրոյժը, սակայն, կրեց դարձեալ գրականութիւնը: Առաջին հերթին, Ստալինի կուսակցութեան կեդրոնական կոմիտէն մահացու մեղադրանքներու տակ առաւ «Զվեզդա» եւ «Լենինգրադ» ամսագիրները եւ անոնց աշխատակիցները եւ անոնց դէմ առաւ ծանր որոշումներ, որոնց հիմամբ ժդանով կազմեց իր սահմռկեցուցիչ զեկուցումը, որ սովետ գրողներուն համար դարձաւ գրական պարտադիր հանդանակ եւ ժդանովի անունով կոչուեցաւ ժդանովականութիւն:

Ժդանով, անշուշտ, կը ներկայացնէր Ստալինի մտածումներն ու մտայնութիւնը, հետեւաբար անքննելի օրէնքի մը ուժը ստացաւ ստատերով ու ծառայութեան կոչերով յագեցած իր ելոյթը եւ ողջունուեցաւ Խորհրդային բոլոր հանրապետութիւններուն մէջ, ընդ որս եւ մեր Հայրենիքի գրողներուն կողմէ: 1946ին հրապարակուած ժդանովի զեկոյցը «պատշաճ» արձագանգ գտաւ նաեւ Հայաստանի գրողներու երկրորդ համագումարին մէջ: Օրուան Նախագահը, Աւետիք Իսահակեան, իր բացման խօսքին մէջ յայտարարեց.

«Մեր բոլշեւիկեան պարտիայի կենտրոնական կոմիտէի որոշումները «Զվեզդա» եւ «Լենինգրադ» ժուռնալների մասին պիտի ղեկավարող ուժեր հանդիսանան սովետական ընդհանուր գրականութեան վերաբերմամբ»:

Ուրիշ յայտնի զէմք մը, Հրաչեայ Քոչար, արդէն իսկ կու տար թարմացման աւետիս մը.

«Կենտկոմի որոշումները եւ ընկեր ժդանովի զեկուցումը թարմացրին մեր գրական կեանքը, մեր միտքը»:

Հիմա ամէն ոք դիտէ, թէ ինչ ողբերգական հետեւանքներ ունեցաւ իր-

digitised by A.R.A.R.@

բեւ «զեկավար ուժ» եւ իբրեւ «գրական կեանք ու միտք» թարմացնող տեսութիւն դաւանուած ժդանովականութիւնը, որ ամբողջ տասնամեակ մը, 1946էն մինչեւ Ստալինի պատկաղերծումը, իր ահաբեկիչ տիրապետութեան տակ պահեց ստեղծագործ բոլոր ուժերը:

Բայց ատիկա մանրամասն քննութեան ենթք չէ հոս: Այսքանը յիշատակեցինք, աւելի պարզ ընծայելու համար ա՛յն ճշմարտութիւնը, որ գրականութեան ու գրագէտին վրայ գործադրուած բոլոր բռնութիւններուն պէս սնանկ գուրս եկաւ նաեւ ժդանովականութիւնը, աւելի երկար չեղաւ իր կեանքը, քան իր շնչահեղձ ըրած դէմքերուն կեանքը, ինչպէս ցոյց կու տայ քիչ անդին տրուած Զոշչենկոյի օրինակը:

Ժդանովի զեկուցումը կը սկսի «Զվեզդա» ամսագիրը ամբաստանելով այն մեղքին համար, որ տեղ տուած է երկիծարան Զոշչենկոյին եւ հիմնականին մէջ թիրախ ունի այս ոուս գրագէտը, որուն ստեղը երկար ատեն չքաշաւ նոյն այդ զեկուցումին դիզած ամպերուն տակն: Այն օրերուն տարբեր ալ չէր կրնար ըլլալ գրագէտի մը բախտը, երբ ստալինականութեան աւագ թարգմանին կողմէ խարանուած էր ան մարդկային բոլոր արատներով եւ է՛ր՝

«Ռազմենի, գոեհկարար, բարոյական ու քաղաքական անկման ամենացածր մակարդակի վրայ ապրող մարդ», «գրականութեան տականք», «նոզկալի բարոյասոս», «ստոր ու նոզկալի հոգի», «զզվելի գրականութեան եւ գոեհկութեան քարոզիչ», «անսկզբունքային եւ անամօթ գրական խուլիգան», եւայլն, եւայլն:

Մեղքերուն թուումով հարցը չէր վերջանար հարկաւ, կար եւ անոնց հետեւողութիւնը.

«Մենք չէ, որ պէտք է մեր կենցաղը եւ մեր հասարակակարգը վերակառուցենք ըստ Զոշչենկոյի: Թող նա՛ վերակառուցուի, իսկ եթէ չի ուզում վերակառուցուել — թող կորչի սովետական գրականութիւնից: Սովետական գրականութեան մէջ չի կարող տեղ լինել փտած, դատարկ, գաղափարազուրկ եւ գոեհիկ երկերին (բուռն ծափահարութիւններ):

Ստալինի օրոք նման ամբաստանութիւններով խարանեալ մարդը, բնական է, պիտի կորչէր, ու Զոշչենկոն չենք գիտեր ո՛ր անկիւնը եւ ինչ պայմաններու մէջ կորչած մնաց երկար ու երկար տարիներ:

Գրականութեան մէջ նոր չէ սակայն այս փորձառութիւնը: Բոլոր բռնակալութիւնները «կորչի» պոռացած են պարտադիր չափերէն դուրս եկած դէմքերուն ու քիչ չէ թիւը ֆիզիքապէս լուծարքի ենթարկուած տաղանդներուն: Բայց բռնակալութեանց ճանչցած կեանքը եւ գրական կեանքը տարբեր բաներ են: Առաջինին մէջ կարելի է անհետ չքացնել ուեւ անձ, երկրորդին մէջ սակայն որեւէ զօրութիւն դեռ չէ կրցած յաւիտենական կորուստի մատնել իր տաղանդով փայլատակած ուեւ դէմք: Ստեղծագործ մարդուն ժառանգութիւնը, պիտի ըսէինք՝ անմահութի՛ւնը, յայտ եւ անյայտ գերեզմաններէն կը յառնէ նորէն ու կը ճառագայթէ կրկին:

Այդպէս եղաւ նաեւ Զոշչենկոյի պարագային: Ռուսական ժամուրը սկսաւ վերստին դրուատել ժդանովի զոհը, ու ռուսական ժամուրի օրինակով՝ Հայաստանի մեր թերթերը, ինչպէս ցոյց կու տայ քիչ անդին «Գարուն» հանդէսէն արտագրուած յօդուածը:

Թարմացնելու համար յիշողութիւնները եւ նոր ընթերցողներուն քիչ ծանօթ ժդանովականութեան մասին չօշափելի գաղափար մը տալու համար, ուստեւ կը ներկայացնենք Ստալինի գրական խօսնակին տիրահոչակ անուութեան ա՛յն մասը, որ առաւելաբար կը վերաբերի Զոշչենկոյին:

digitised by A.R.A.R.@

ԺԴԱՆՈՎԻ ՋԵԿՈՅՑԸ

Ընկերնե՛ր, կենսակոմի որոշումից պարզ է, որ «Զվեզդա» ամսագրի ամենակոպիտ սխալը իր էջերը Զոշչենկոյի եւ Ախմատովայի գրական «ստեղծագործութեանը» տրամադրելն է: Կարծում եմ հարկ չկայ, որ ես այստեղ քաղուածքներ բերեմ Զոշչենկոյի «Կապկի արկածները» «երկից»: Ըստ երեւոյթին, դուք բոլորդ այդ կարդացել էք եւ աւելի լաւ գիտէք, քան ես: Զոշչենկոյի այդ «երկի» իմաստն այն է, որ նա սովետական մարդկանց պատկերում է որպէս անբան եւ այլանդակ մարդիկ, յիմար եւ պրիմիտիւ մարդիկ: Զոշչենկոյին ամենեւին չի հետաքրքրում սովետական մարդկանց աշխատանքը, նրանց ջանքերն ու հերոսութիւնը, նրանց հասարակական ու բարոյական բարձր յատկութիւնները: Այդ թեման նրա մօտ միշտ բացակայում է: Զոշչենկոն, որպէս քաղաքների եւ գեղհկարար, իրեն համար միշտակաս թեմա է ընտրել կենցաղի ամենաստոր եւ մանր կողմերի փորփրումը: Կենցաղի մանրուքների այդ փորփրումը պատահական չէ: Դա իւրայատուկ է բոլոր գեղհիկ քաղքենիական գրողներին, որոնց շարքին պատկանում է նաեւ Զոշչենկոն: Այդ մասին իր ժամանակին շատ է խօսել Գորկին: Դուք յիշում էք, թէ ինչպէս Գորկին սովետական գրողների համագումարում, 1934 թուին, խարանում էր, թող ներուի ասել այնպիսի «գրականագէտներին», որոնք խոհանոցի եւ քաղնիքի մրուրից այն կողմ ոչինչ չեն տեսնում:

«Կապկի արկածները» Զոշչենկոյի համար նրա սովորական գրոտեսքների շրջանակից դուրս եկող ինչ-որ մի բան չէ: Այդ «երկը» քննադատութեան տեսադաշտի մէջ ընկաւ միայն որպէս առաւել ցայտուն արտայայտութիւնը այն ամէն բացասականի, որ կայ Զոշչենկոյի գրական «ստեղծագործութեան» մէջ: Ցայտնի է, որ էւակուացիայից Լենինգրադ վերադառնալու ժամանակուանից ի վեր Զոշչենկոն գրել է մի շարք բաներ, որոնք բնորոշ են նրանով, որ նա ընդունակ չէ սովետական մարդկանց կեանքի մէջ դանելու ոչ մի դրական երեւոյթ, ոչ մի դրական տիպ: Ինչպէս որ «Կապկի արկածներ»ում, Զոշչենկոն վարժուել է ծաղր ու ծանակի ենթարկել սովետական կենցաղը, սովետական կարգերը, սովետական մարդկանց, այդ ծաղր ու ծանակը քողարկելով դասարկ զուարճախօսութեան եւ անպէտք հումորիստիկայի քողով:

Եթէ դուք աւելի ուշադիր կարդաք եւ խորամուխ լինէք «Կապկի արկածներ» պատմուածքի մէջ, ապա դուք կը տեսնէք, որ Զոշչենկոն կապիկին օժտում է մեր հասարակական կարգերի բարձրագոյն դատաւորի դերով եւ հարկադրում է ինչ-որ բարոյախօսութեան նման բան կարդալ սովետական մարդկանց: Կապիկը ներկայացուած է իբրեւ ինչ-որ բանական սկիզբ, որն օժտուած է մարդկանց վարքագծի գնահատումներ սահմանելու: Սովետական մարդկանց կեանքը դիտումնաւորութեամբ այլանդակ, կաբիկատուրային եւ գռեհիկ ձեւով պատկերելը Զոշչենկոյին անհրաժեշտ էր կապկի շուրթերին նողկալի, թունաւորուած հակասովետական խրատական դնելու համար այն բանի մասին, թէ կենդանաբանական այդում ապրելն աւելի լաւ է, քան ա-

digitised by A.R.A.R.@

գաղութեան մէջ եւ որ վանդակում աւելի հեշտ է շունչ քաշել, քան սովետական մարդկանց մէջ։

Կարելի՞ է արդեօք հասնել բարոյական եւ քաղաքական անկման աւելի ցածր աստիճանի, եւ ինչպէ՞ս լենինգրադցիները կարող էին իրենց ամսագրերի էջերում հանդուրժել նման ագռեղութիւն ու անպէտքութիւն։

Եթէ «Զվեզդա» ամսագիրն այդ տեսակ «երկեր» է հրամցնում սովետական ընթերցողներին, ապա որքան թոյլ պէտք է լինէր «Զվեզդա» ամսագիրը ղեկավարող լենինգրադցիների դպաստութիւնը, որ կարելի լինէր նրա մէջ գտեղել սովետական հասարակակարգի նկատմամբ անասնական թշնամութեան թոյնով թունաւորուած երկեր։ Միայն դրականութեան ասպանները կարող են առեղծել նման «երկեր» եւ միայն կոյր ու ապոլիտիկ մարդիկ կարող են ընթացք տալ դրանց։

Ասում են, թէ Զոշչենկոյի պատմուածքը կարդացուել է Լենինգրադի էստրադաներում։ Որքա՞ն պէտք է Լենինգրադում թուլացած լինէր իդեոլոգիական աշխատանքի ղեկավարութիւնը, որպէսզի նման փոսեր կարողանային տեղի ունենալ։

Զոշչենկոյին, իր նողկալի բարոյախօսութեամբ, յաջողուել է ներթափանցել լենինգրադեան մեծ ամսագրի էջերը եւ այնտեղ տեղաւորուել ամենայն յարմարութեամբ։ Իսկ չէ՞ որ «Զվեզդա» ամսագիրը մի օրգան է, որը պէտք է գաստիարակի մեր երիտասարդութեանը։ Բայց կարո՞ղ է արդեօք այդ խնդիրը կատարել այնպիսի մի ամսագիր, որը իր մօտ ապաստան է տալիս այդպիսի դեռեկարտերի եւ ոչ-սովետական դրոդի, ինչպիսին Զոշչենկոն է։ Մի՞թէ «Զվեզդա»յի խմբագրութեանը ծանօթ չէ Զոշչենկոյի ֆիլիոնամիան։

Չէ՞ որ դեռ բոլորովին վերջերս, 1944 թուի սկզբին, «Բոլշեւիկ» ամսագրում խիստ քննադատութեան ենթարկուեց Զոշչենկոյի «Արեւի ծագումից առաջ» գայրացուցիչ վիպակը, որը գրուած էր գերմանական գաւթիչների դէմ սովետական ժողովրդի ազատագրական պատերազմի թէժ պահին։ Այդ վիպակում Զոշչենկոն ամբողջութեամբ դրսեւորում է իր ստոր ու զզուելի հոգին՝ այդ բանը անելով բաւականութեամբ, բիրանը չփչփացնելով, ցանկութիւն ունենալով ցոյց տալ բոլորին, թէ, տեսէք, ինչպիսի՛ խելօք եմ ես։

Դժուար է մեր գրականութեան մէջ գտնել որեւէ աւելի զզուելի բան, քան այն «բարոյախօսութիւնը», որ Զոշչենկոն քարոզում է «Արեւի ծագումից առաջ» վիպակում, մարդկանց եւ հենց իրեն պատկերելով որպէս նողկալի, կեղտոտ դազաններ, որոնք չունեն ո՛չ ամօթ եւ ոչ խիղճ։ Եւ այդ բարոյախօսութիւնը նա սովետական ընթերցողներին հրամցնում էր այն ժամանակ, երբ մեր ժողովուրդը արիւն էր թափում անասելի ծանր պատերազմում, երբ սովետական պետութեան կեանքը մագից էր կախուած, երբ սովետական ժողովուրդը անթիւ-անհամար զոհեր էր տալիս յանուն յաղթանակի ընդդէմ գերմանացիների։ Իսկ Զոշչենկոն խրամատաւորուելով Ալմա-Աթայում, խոր թիկունքում, այն ժամանակ սովետական ժողովրդին ոչնչով չօգնեց գերմանական գաւթիչների դէմ նրա պայքարում։ «Բոլշեւիկ»ում Զոշչենկոն միանգամայն իրաւացի կերպով հրապարակայնօրէն դատակոծուեց, որպէս սովետական դրականութեանը խորթ ծանակագրող եւ գռեհկաբար։ Նա այն ժամանակ թքեց հասարակական կարծիքի վրայ։ Եւ ահա դեռ երկու տարի չանցած, դեռ չչորացած այն թանաքը, որով գրուած էր «Բոլշեւիկ»ի դատաստանը, միեւնոյն Զոշչենկոն յաղթականօրէն մուտք է գործում Լե-

digitised by A.R.A.R.@

Ինքդրաղ եւ սկսում է ազատ զբօսնել լենինգրադեան ամառգրերի էջերում։ Նրան սիրով ապագրում է ո՛չ միայն «Զվեզդայն», այլեւ «Լենինգրադ» ամառգիրը։ Նրան սիրով եւ պատրաստակամութեամբ որամագրում են թատերական լաբառները։ Աւելի՛ն. նրան հնարաւորութիւն են տալիս ղեկավարելու Գրողների միութեան Լենինգրադի բաժանմունքում եւ ակտիւ դեր խաղալու Լենինգրադի գրական գործերում։ Ի՞նչ հիման վրայ գուք Զոշչենկոյին թոյլ էք տալիս զբօսնելու լենինգրադեան գրականութեան աթոռներում ու պարտէզներում։ Ինչո՞ւ Լենինգրադի պարտիական ակտիւը, նրա գրողների կազմակերպութիւնը թոյլ են տուել այդ խայտառակ փաստերը։

Զոշչենկոյի ամբողջովին փտած եւ ապականուած հասարակական-քաղաքական ու գրական ֆիզիոնոմիան ձեւաւորուել է ոչ ամենավերջին ժամանակներս։ Նրա ժամանակակից «երկերը» ամենաբին էլ պատահականութիւն չեն։ Դրանք միայն շարունակութիւնն են Զոշչենկոյի այն ամբողջ գրական «ժառանգութեան», որն սկիզբ է առնում 20ական թուականներից։

Ո՞վ է եղել Զոշչենկոն անցեալում։ Նա եղել է այսպէս կոչուած «Սերապիոնեան եղբայրներ» գրական խմբի կազմակերպիչներից մէկը։ Ինչպի՞սն է եղել Զոշչենկոյի հասարակական-քաղաքական ֆիզիոնոմիան «Սերապիոնեան եղբայրների» կազմակերպման շրջանում։ Թոյլ տուէք դիմելու «Վիտերատուրնիյէ զապիսկի» ամսագրի 1922 թուի 3րդ համարին, որտեղ այդ խմբի հիմնադիրները շարադրում էին իրենց հաւատամքը։ Այլ յայտնութիւնների թւում այնտեղ զետեղուած է Զոշչենկոյի «հաւատի խորհրդանիշը» մի ճշմիմ յօդուածում, որը կոչւում է «Իմ մասին եւ դէսից-դէնից»։ Զոշչենկոն ոչ ոքից ու ոչ մի բանից չի քաշւում, հրապարակայնօրէն մերկանում է եւ մկանգամայն բացայայտ կերպով արտայայտում իր քաղաքական, դրական «հայեացքները»։ Լսեցէք, թէ ինչ էր նա ասում այնտեղ.

«— Ընդհանրապէս գրող լինելը շատ դժուար բան է։ Ասենք, ճոյն այդ իդեոլոգիան... Այժմ գրողից պահանջւում է իդեոլոգիա... Ինձ համար, յիրաւի, այնպէս անդուրեկան բան»...

«Իմ մօտ, ասացէք, ի՞նչ «ճշգրիտ իդեոլոգիա» կարող է լինել, եթէ ոչ մի պարտիա՝ ամբողջովին վերցրած՝ ինձ չի գրաւում»։

«Պարտիական մարդկանց տեսակէտից ես անսկզբունք մարդ եմ։ Թող այդպէս լինի։ Իսկ ես ինքս իմ մասին կ'ասեմ. ես կոմունիստ չեմ, էսեր չեմ, միապետական չեմ, այլ պարզապէս ռուս եմ եւ ընդ որում քաղաքականապէս անբարոյական»...

«Ազնիւ խօսք եմ տալիս, — որ մինչեւ այժմ չգիտեմ, ասենք թէկուզ Գուշկովը... Ո՞ր պարտիայի մէջ է Գուշկովը։ Սատանան գիտէ՞, թէ որ պարտիայի մէջ է... Գիտեմ, որ բոլշեւիկ չէ, բայց թէ էսեր է նա, թէ կադետ, — չգիտեմ եւ չեմ ուզում իմանալ»,

Եւայլն, եւայլն։

Ի՞նչ կ'ասէք, ընկերնե՛ր, այսպէսի «իդեոլոգիայի» մասին։ Անցել է 25 տարի այն ժամանակուանից, երբ Զոշչենկոն ապագրել էր իր այդ «խոստովանանքը»։ Փոխուե՞լ է արդեօք նա այդ ժամանակուանից ի վեր։ Չի՛ բեւում։ Երկուսուկէս տասնամեակի ընթացքում նա ո՛չ միայն ոչինչ չի սովորել եւ ո՛չ միայն ամենաբին չի փոխուել, այլ ընդհակառակը, ցինիկ բացայայտութեամբ շարունակում է մնալ դաղափարազրկութեան եւ զուտհիւթեան քարոզիչ, անսկզբունքային եւ անամօթ գրական խուլիգան։ Այդ նշանակում է, որ Զոշչենկոյին ինչպէս այն ժամանակ, այնպէս էլ այժմ, դուր

digitised by A.R.A.R.@

չեն դալիս սովետական կարդերը։ Ինչպէս այն ժամանակ, այնպէս էլ այժմ, նա խորթ ու թշնամի է սովետական գրականութեանը։ Եթէ այդ բոլորով հանդերձ Զոշչենկոն Լենինգրադում համարեա՝ թէ դարձել էր գրականութեան կորիֆէյ, ապա նրան միայն բարձրացնում լենինգրադեան Պուռնատում, ապա մնում է միայն զարմանալ, թէ անհիշողութեան, անպահանջկոտութեան, անխատապահանջութեան, անտարբերութեան ինչ աստիճանի կարող էին հասնել Զոշչենկոյին ճանապարհ հարթող եւ նրան ներքողներով փառաբանող մարդիկ։

Թոյլ տուէք եւս մէկ նմոյշ բերել այսպէս կոչուած «Սերապիոնեան եղբայրների Ֆիզիոնոմիայի մասին։ Այդ նոյն «Վիտերատուրնիյէ գազետի»ի 1922 թուի երրորդ համարում մի ուրիշ սերապիոնական՝ Լեւ Լունցը նոյնպէս փորձում է գաղափարական հիմնաւորում տալ այն վնասակար եւ սովետական գրականութեանը խորթ ուղղութեանը, որ ներկայացնում էր «Սերապիոնեան եղբայրներ» խումբը։ Լունցը գրում է.

«Մենք հաւաքուել ենք ռեւոլուցիոն օրերին, բազմաթիւ հուժիու լարման օրերին։ «Ով մեզ հետ չէ, նա մեր դէմ է», — ասում էին մեզ աջից ու ձախից, — իսկ ո՞ւմ հետ էք դուք, Սերապիոնեան եղբայրներ, կոմունիստների՞ հետ, թէ՞ կոմունիստների դէմ, ռեւոլուցիայի՞ հետ, թէ՞ ռեւոլուցիայի դէմ»։

«Ոչ մի հետ ենք մե՞նք, Սերապիոնեան եղբայրնե՞ր։ Մենք Սերապիոն ճգնաւորի հետ ենք»...

«Հասարակայնութիւնը շատ երկար ժամանակ ու տանջալից կերպով է ուղղութիւն տուել ռուսական գրականութեանը... Մենք չենք ուզում ուտիլիտարիզմ։ Մենք գրում ենք ոչ պրոպագանդայի համար։ Արուեստը ռեալ է, ինչպէս ինքը կեանքը եւ, կեանքի նման, նա անկախատակ է ու անիմաստ, գոյութիւն ունի, որովհետեւ չի կարող գոյութիւն չունենալ»։

Այս է այն դերը, որ «Սերապիոնեան եղբայրները» յատկացնում են արուեստին, իւրով նրանից զազափարականութիւնը, հասարակական նշանակութիւնը, հռչակելով արուեստի գաղափարազրկութիւն, արուեստ՝ յանուն արուեստի, արուեստ՝ առանց նպատակի ու առանց իմաստի։ Հենց դա էլ փտած ապոլիտիզմի, քաղքենիութեան եւ դեհկութեան քարոզ է։

Ի՞նչ հետեւութիւն է բխում սրանից։ Եթէ Զոշչենկոյին դուր չեն գալիս սովետական կարդերը, ի՞նչ էք հրամայում, յարմարուե՞լ Զոշչենկոյին։ Մենք չէ, որ պէտք է յարմարուենք ճաշակներին։ Մենք չէ, որ պէտք է մեր կենցաղը եւ մեր հասարակակարգը վերակառուցենք ըստ Զոշչենկոյի։ Թող նա՝ վերակառուցուի, իսկ եթէ չի ուզում վերակառուցուել — թող կորչի սովետական գրականութիւնից։ Սովետական գրականութեան մէջ չի կարող տեղ լինել փտած, դատարկ, դազափարազուրկ եւ դեհկիկ երկերին (բուռն ծափահարութիւններ)։

Ահա թէ ինչից է ելել Կենակմը, որոշում ընդունելով «Զվեզդա» եւ «Լենինգրադ» ամսագրերի մասին։

ԱՆՏՐԷ ԺԴԱՆՈՎ

digitised by A.R.A.R.@

ԶՈՇՉԵՆԿՈՆ՝ ՄԱՐՏՆՉՈՂ ՈՒ ՔՆԱՐԱԿԱՆ

Ռուս սովետական գրականության նշանաւոր դէմքերից է տաղանդաւոր հումորիստ-երգիծաբան Միխայիլ Զոշչենկոն: Նա բարդ եւ բազմակողմանի գրող է, պատմուածքների, փեյլիետոնների, ինքնակենսագրական վիպակների, պիեսների հեղինակ: Սակայն նրա տարերքը կարճ, երգիծական պատմուածքն է:

Ծնուել է Պետրոգրադում, 1895 թուականին, նկարչի ընտանիքում: Ճամբորդելու սէրը եւ բուռն հետաքրքրությունը հանդէպ կեանքը այնքան մեծ էին, որ նա կիսատ թողնելով իրաւաբանական կրթությունը, թողնելով ծնողներին եւ հայրենի քաղաքը, գրպանում չունենալով դրամ իսկ, տասնութ տարին հազիւ բոլորած մեկնում է Կովկաս, ուր երկաթգծում ընդունւում է աշխատանքի — գնացքների հսկիչ:

Այստեղից սկսւում են նրա կեանքի «համալսարանները»:

Իր կենսագրության մէջ Զոշչենկոն նշում է, որ ունեցել է տաս-տասներկու մասնագիտություն: Զինուոր՝ կամաւոր մտել է կարմիր բանակ, մարտընչել Հոկտեմբերեան յեղափոխության եւ քաղաքացիական կռիւների ռազմանակատներում ընդդէմ այն դասակարգի, «որին ինքը լաւ գիտէր»: Նստել է փոստի եւ հեռագրատան պետ: Սահմանապահ: Համեստլոգ, ապա զինուորական դատարանի քարտուղար: Քրէական քննիչ: Աւազակ միլիցիոներ: Հաւաքածուության եւ ճազարաբուծության սովխոզում՝ հրահանգիչ: Սովորել երկու արհեստ՝ հիւսնությունն եւ կօշկակարությունն: Գրող:

«Սակայն այս վերջին մասնագիտությունը, պարզուեց, որ շատ աւելի դժուար էր այն բոլոր մասնագիտություններից, որ ունեցել էի ես», — խոստովանում է հեղինակը:

Հենց կօշկակարական արհեստանոցում էլ նրան նկատում է ժամանակի «Ֆէյ» երգիծական հանդէսի խմբագիր Շերուեը: Նա իր կօշիկները բերել էր վերանորոգելու եւ հետաքրքրությամբ զրուցում էր ջահել վարպետի հետ, զարմանալով, թէ որքան լայն գիտելիքներ ունէր նա:

Երկրորդ անգամ արհեստանոց գալով, Շերուեը իր կօշիկները նորոգման է տալիս մի այլ վարպետի, իսկ Զոշչենկոյին յորդորում է գրել:

Տարիներ յետոյ մուտք գործելով գրականության մէջ «Նազար Իլյիչ պարոն Սինեբրիւխովի պատմուածքները» վերտառությամբ պատմուածաշարով, արժանանում է ընթերցողների եւ գրողների մեծ ուշադրությանը: Նրա մտերիմ ընկերը եւ բարեկամ Կոնստանտին Չուկովսկին Զոշչենկոյին նուիրուած իր էսսէում գրում է. «Մի գեղեցիկ օր, ինչպէս հեքիաթում, նա արթնացաւ որպէս հանրաճանաչ գրող»:

Ո՞րն է Զոշչենկոյի ստեղծագործության էությունը.

Իջնելով գրականության ասպարէզ 1920ական թուականների սկզբին, երբ մեր երկրում սոցիալիստական կեցության հիմքերն էին դրւում, երբ մարդկանց կեանքում տեղի էին ունենում վերափոխումներ՝ կենցաղի, հոգեբանության, համազգումների մէջ, երբ դաստիարակւում էր նոր անհատականությունն, Զոշչենկոն, որ ինքն էլ գալիս էր հնից, ոչ միայն հաւատաց նորին, այլեւ իր սերնդակից գրողների հետ դարձաւ նոր գրականության առաջամարտիկը: Երգիծական արուեստի իր բազմազան միջոցներով նա կրում էր յանուն մեծ մարդասիրության, յանուն հոգու ազնուության, յա-

digitised by A.R.A.R.@

նում մարդկային արժանապատվության՝ նրա ոտնահարման ամենափոքր իսկ արտայայտությունների դեմքում: Նա կռվում էր մանավանդ քաղաքացիության դեմ: Նրա ոչ-հերոսները անձնական բարոյության հետամուտներ էին՝ երբեմն սենտիմենտալ, երբեմն զոհեկիկ, միամիտ կամ խորամանկ, բայց մշտապես ընչաքաղց ու ճարպիկ, որոնք ուզում էին ապրել այլոց ստեղծած բարիքների հաշվին: Նա կործանիչ հեգնանքի է ենթարկում նաև քիրոկրատական կամայականությունը, պաշտոն ստացած որոշ տիպի մարդկանց իշխանության ուժի սնապարծ չարաշահումը, խորհրդային օրէնքները թարս ու շիտակ հասկացած կամ դրանք իրենց օգտին խեղաթիւրող անձանց:

Այդ տեսակետից բնորոշ է օրինակ «Վեստիֆիզիսուզի արգելակիչը» պատմուածքի Վալոդկա Բոկովը: Այդ պորտաբոյծը, մի փոքր կռնծած, գբնացքի մէջ, ուղեւորների մօտ սկսում է պարծենալ, թէ ինչ ուզի, կ'անի, եթէ ուզի, հիմի ձեռքը կը գցի արգելակիչին եւ արընթաց գնացքը կանգ կ'առնի: Կ'անի, այո՛, եւ ոչ օք չի կարող իր մազին անգամ դիպչել, նոյնիսկ ժողովրդական դատարանը, քանի որ, ասում է նա. «Իմ առցիալական ծագումը խիստ հարազատ է. պապս եղել է նախրչի, մէրս էլ հասարակից հասարակ մի կինարմատ»:

Պարծենում է այդպէս եւ ի կատար ածում իր խելագար բարքաքանքը: Հեղինակը ենթատեքստը թողնում է ընթերցողին. Վալոդկա Բոկովները այդպէս են, նրանցից հեռու չէ եւ գնացք խորտակելը: Ճանաչենք նրանց:

Զոշչենկոն իր պատմուածքի նիւթը վերցնում է բուն կեանքից. մի փոքր փաստ, նրա 2-3 էջանոց պատմուածքում ստանում է մեծ ուժ եւ հասարակական անդրադարձում, բովանդակությունը դրուած նիշդ գտնուած միակ ձեւի մէջ, որն անջատել ձեւից, անհնար է: Դա նշանակում է, որ Զոշչենկոն երգիծական կարճ պատմուածքի մեծ վարպետ է: Նա մեծ մասամբ գլուխ է պատումի ձեւով, այսինքն՝ իրադարձությունը տրուում է հերոսների ընկալումով, հեղինակը բնաւ չի միջամտում, հնարաւորություն տալով, որ նրանք պատմեն, բացայայտեն իրենց, մենախօսեն, փիլիսոփայեն: Այդ տեսակետից քննադատները նրան համեմատել են Վլադիմիր Դալի, Ալեքսանդր Լեսկովի հետ:

Զոշչենկոյի տաղանդի իւրայատկությունը նրա լեզուի քնարականությունն է նաեւ, որով մի առանձին հմայք են ստանում նրա շատ ու շատ ստեղծագործությունները:

Բիրտ, տգէտ ուժի հանդէպ դրական հերոսների յուսահատական պահին ի յայտ է գալիս հեղինակի քնարական պաթոսը՝ լաւատեսության հետ գիրկընդխառն: Կարծէք քամու շնչի տակ լուում է զանգուածալիկների մեղմ շրշիւն, այնքան նուրբ, բայց եւ այնքան ուժեղ, գեղեցկի, իսկականի ինքնահաստատմամբ հզօր՝ առ ի չիք դարձնելով մարդկային չարությունը: Ամպի ետեւից ծագում է թաքնուած արեգակը: Բարու յաղթանակ: Չարը թոյլ է, որովհետեւ յաղթանակը մարդասիրությանն է:

Զոշչենկոն իր երգիծանքի արուեստով շատ բան է մերժել, բայց եւ շատ բան էլ պաշտպանել ու հաստատել՝ իր անսահման սիրով հանդէպ մարդը, իր անսահման հաւատով՝ հանդէպ նրա լաւագոյն ապագան:

Այդպէս էլ ապրեց մինչեւ իր կեանքի վերջը՝ 1958 թուականը՝ ռուս գրականության մէջ ունենալով իր հաստատուն տեղը եւ ճանաչում՝ համաշխարհային առումով:

ՕԼԳԱ ՍԱՆԱՀԵՆԱՆ

(«Գարուն», 1980, թիւ 12)

digitised by A.R.A.R.@

ԲԱՐԵՒ, ԱՅՆՏԵՂ

ՈՒԻԼԵԼՄ ՍԱՐՈՅԵԱՆ (1908–1981)

Այս ամսոյն 18ին, հեռագիրները գուժեցին հռչակաւոր գրագէտ Ուիլիըմ Սարոյեանի մահը, որ պատահեցաւ իր ծննդավայր քաղաքին մէջ, Ֆրէզնօ։ Ստորեւ հայցուած «Թայմ» լրաթերթի գրութիւնը գրուած է այդ առիթով։ «Բացինոյի հեռագայ թիւերուն մէջ պիտի տանք նաեւ մեր արժանապատիւներեն ոմանի գրիչ մը ուրիշ արժանագնիներ եւ մեծ գրագէտներ աւուրներուն ընթերց պատմուածք մը։

●

Կը պատմուի, որ երբ հրատարակիչ Պէննէթ Սերֆ 1934ին հիւրընկալ կը գտնուէր Սան Ֆրանսիսքոյի «Փալատ» պանդոկը, իրեն կը յայտնեն, թէ՝ «Երիտասարդ մը, որ թիֆզիմբ աշխարհի ամենամեծ հեղինակը կը նկատէ, գաւիթին մէջ իրեն կը սպասէ»։ Սերֆ անվարան կ'ըսէ. «Ընկէր պարոն Սարոյեանին, որ անմիջապէս վեր գայ»։

Թատերագիր Ուիլիըմ Սարոյեան անսահմանորէն ինքնավստահ նոյն մարդն էր մահէն զեռ քանի մը օր առաջ, որ պատահեցաւ քաղաքէն հեռաւանքով, Ֆրէզնոյի մէջ, Գալիֆորնիա։ «Ամէն մարդ պիտի մեռնի, — բաւ ան, — սակայն ես միշտ հաւատացած էի, որ բացառութիւն մը պիտի ըլլայ իմ պարագայիս»։

Իրը հնաբարբարական պարապոյ մը էր։

Սարոյեան ծնած էր Ֆրէզնօ ու զուարճ էր հայ գաղթականներու, որոնք դարասկիզբին խոյս տրուած էին Թրքական ջարդերէն։ Ան հանչցած էր հեռացումի կսկիծը եւ Գալիֆորնիայ մէջ կղզիացած ազգակից Հայաստաններու աղքատութիւնը։ — Հորը մահէն ետք, առաջին տարիները անցուցած էր ուրանոցի մը մէջ, մինչ մայրը ասիպուած էր լրիւ ժամանակով աշխատելու։ Վէպի վերածուած իր «Մարդկային կատակերգութիւն» սենարիոյի երիտասարդ տղուն պէս, որ ուրախ լուրեր կը տիրէր, Սարոյեան հեռագիրներ բաժնելով սկսաւ իր աշխատանքային կեանքը։ Երբ 1934ին «Ցանգուցն Ներիտասարդը գոյզ մարգարդին վրայ» անուն պատմուածքը արժանացաւ «Օ. Հենրի» մրցանակին, իր կեանքին ընթացքը ճշդուած էր արդէն, սկսած էր գրական ասպարէզ մը։

Տպաւորապաշտ յաջորդողը փոտարանոց «ոսկերեռայնի ճշմարտութիւնը փողոցներու եւ կառոյցներու, սին ճշմարտութիւնը իրականութեան»։ Ճաշորդաբար գրուած առաջին պատմուածքները կը ստեղծէին ներմացնող այն արամագրութիւնը, որ Ցիփրէշրնէ հաբուածուած ապրը ի՛ւրդէր լաւ։ Սակայն կծող քաժին մը ալ կար երկրային այս վիպապաշտութեան կողքին։ 1940ին, թատերավրը մերժեց Պրոտուէյի յաջողութիւններն մէկը հանդիսացած «Քեր կեանքին ժամանակը» գործին յանկացուած «Փուլիցցրը» մրցանակը, ա՛յն հիմնաւորումով, որ առեւտուրը չի կրնար դառնալ արուեստի գործ մը։ Երբեւ Հոլիվուտի բեմագիր, ան ազդկոտ վիճարանութիւններ ունեցաւ սթիւտիոներու պատասխանատուներու հետ, ստեղծելով ազդկարար ու կարծր մարդու պատկեր մը։

Իր ամուսնալուծման եւ հարստութեան շրջանին մէջ վճռական դեր ունեցան քանատացի ու խմիչքը։ 1958ին, 50 հազար տոլար պարտական ըլլալով տուրքերու դրամենակին՝ հեռացաւ Ամերիկայէն եւ բնակութիւն հաստատեց Փարիզի աշխատաւոր դասակարգի արուարձաններէն մէկուն մէջ։ Ազատական թուականներուն սխալ յուշեր գրեց, հեռուհալ խորագիրներով. «Զմեռնելով», «Մի հրաք, սակայն եթէ պիտի երթաս՝ բարու գրէ բոլորին»։

Իր վէպը՝ «Տղամ եւ ազգինկեր միասին» (1963) ամուսնութեան կու տար մութ պատկերացում մը։

Ցնապատերազմեան շրջանի քննադատները քիչ խանդավառութիւն ցուցաբերեցին իր լեզի զգացականութեան եւ թատերախաղերուն անձկալի աշխուժութեան նկատմամբ, բայց եւ այնպէս՝ իր պատմուածքներուն կարեւոր մէկ մասին սահմանութիւնն ու հմայքը պիտի յարմանեն ներշնչել երիտասարդ գրողները։ Կասկած մը, որ քննադատութենէն տեղին ի՛նքնայ։

digitised by A.R.A.R.@

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ (ԱՏՈՄ)

ՄԵՐ ՀԱԻԱՏԱՄՔԸ

• Պէյրութ, 1981, Համազգայինի Վահէ Սէրթեան տպարան, 94 էջ. գին՝ 7 լ. ոսկի, այլ երկիրներ՝ 2.5 տոլար:

■

ԳԱՐԵԳԻՆ ԽԱԺԱԿ

Ի՞ՆՉ Է ԴԱՍԱԿԱՐԳԸ

• Պէյրութ, 1981, Համազգայինի Վահէ Սէրթեան տպարան, 374 էջ, գին՝ 12 լ. ոսկի:

■

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ

ԺԻՐԱՅՐ ԱԹԹԱՐԵԱՆ

ԿԵԱՆՔԸ ԳԵՂԵՑԻԿ Է

(Պատմուածքներ)

digitised by A.R.A.R.G.

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ	50 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	27 ՏՈԼԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ	5 Լ. ՈՍԿԻ

باكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية

المدير المسؤول

السيد ارتين كارنيك قزانجيان

•

PAKINE

REVUE MENSUELLE

LITÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

•

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր

ՊՕՂՈՍ ՄԱԶՊԵԱՆ

Խմբագրութեան անդամներ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

B. P. 11-8404 - Beyrouth - LIBAN

Tel. 296898

digitised by A.R.A.R.@